

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ

ISSN 1829-0108

1 (119). 2024

ՈԱԶՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ

РАЗВИТИЕ ВОЕННОЙ НАУКИ
И ВОЕННОГО ОБРАЗОВАНИЯ

DEVELOPMENT OF MILITARY SCIENCE
AND EDUCATION



ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԸ՝ 32 ՏԱՐԵԿԱՆ



ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանը պարգևատրում է հայրենիքի անվտանգության և պաշտպանության գործում աչքի ընկած զինծառայողներին



ՀՀ Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի ելույթը Հայաստանի Հանրապետության բանակի ստեղծմանը նվիրված տոնահանդեսում

Երևան, Կ. Դեմիրճյանի անվան ՄՀՀ, 2024 թ. հունվարի 28



Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Բ Ա Ն Ա Կ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

1 (119). 2024

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Տավարաժյան Գ. Վ.
(նախագահ)
- Չիլինգարյան Գ. Ս.
(գլխավոր խմբագիր)
- Ալեքսանյան Գ. Ն.
Այվազյան Լ. Գ.
Ասատրյան Ջ. Գ.
(գլխ. խմբագրի տեղակալ)
- Մկրտչյան Վ. Ա.
- Շահնազարյան Թ. Ն.
- Շիրինյան Մ. Ա.
- Մարգարյան Ա. Գ.
- Միմոնյան Ս. Վ.
- Ստեփանյան Հ. Լ.
- Քոչարյան Տ. Տ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՈՒԶՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄ

Տ. Տ. Քոչարյան, Ռ-ազմական գիտության հաստատությունական էությունը և զարգացումները համաշխարհային փորձի տեղայնացման հնարավորություններով 9

Ա. Հ. Մելիքյան, Գ. Ս. Չիլինգարյան, Հիմնարար ու կիրառական գիտությունները և դրանց դերը պետության պաշտպանունակության ապահովման գործում. արտասահմանյան փորձը 25

Լ. Թ. Ասատրյան, Վ. Վ. Մելքոնյան, ՀՀ-ում ռազմական կրթության առանձնահատկությունները և կատարելագործման հնարավորությունները 51

Ս. Գ. Գալստյան, Գ. Ա. Ավետիսյան, Ս. Հ. Աղամյան, Լ. Ռ. Ավետիսյան, Որոշ դիտարկումներ հեռավար կրթության վերաբերյալ 63

ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մ. Մ. Մարգարյան, Մ. Գ. Մարգարյան, Քաղաքակրթական քաղաքական նախագիծը որպես ընդարձակված օրակարգով անվտանգության ապահովման հիմք 79

Վ. Շ. Գևորգյան, Ռ-ազմաքաղաքական բլոկների ձևավորման նկատմամբ մոտեցումները Եռյակ միության օրինակով 93

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ա. Վ. Վարդանյան, Բնակավայրերի կառուցվածքային առանձնահատկությունները ռազմադիմակայունության տեսանկյունից 107

ՈԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Կ. Բ. Ենկոյան, Գ. Մ. Փաշիկյան, Գ. Ռ. Վարդանյան, Ս. Պ. Քոչարյան, Լ. Ս. Գալստյան, Հ. Ա. Հակոբյան, Ս. Գ. Գալստյան, Ոչ ջերմային ինտենսիվությամբ միկրոալիքային ճառագայթման ազդեցության մի շարք առումներ ... 118

ՈԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դ. Ս. Չիլինգարյան և ուրիշներ, Համարի բառարան 128

Շապիկի առաջին էջին (ներքևից վերև, աջից ձախ)։

Հովհաննես Բաղրամյան, ԽՍՀՄ կրկնակի հերոս, ԽՍՀՄ մարշալ, Սամվել Քոչարյանց, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, գեներալ-լեյտենանտ, Հայկ Շեքերջյան, ԱՄՆ-ի բրիգադային գեներալ, Երախտիքի լեգեոնի շքանշանի ասպետ, Աբրահամ Ալիխանով, ակադեմիկոս, սոցիալիստական աշխատանքի հերոս, Արտեմ Միկոյան, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, իտ/ժ գեներալ-լեյտենանտ, Լևոն Օրբելի, ակադեմիկոս, սոցիալիստական աշխատանքի հերոս, բ/ժ գեներալ-գնդապետ։

ԳԻՏԱԽՈՐՀՐԳԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ

*Ա. Գ. Ավագյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ս. Գ. Գալստյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Վ. Ս. Կարապետյան, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ա. Ա. Հախումյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հ. Հ. Մաթևոսյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Մ. Մ. Մարգարյան, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Մ. Վ. Մարկոսյան, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ա. Հ. Մելիքյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հ. Հ. Մեսրոպյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Է. Գ. Միևասյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Վ. Գ. Մահակյան, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, Հ. Յ. Սալադյան, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռ. Ա. Սաֆրասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Վ. Վ. Մելիվանով (ՌԴ), տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Յու. Մ. Սուվարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Հ. Ս. Քոթանջյան, քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), պրոֆեսոր, ՌԴ ՌԳԱ իսկական անդամ, Տ. Տ. Քոչարյան, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

ՈԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ

*Գ. Վ. Տավարաձյան, գեներալ-մայոր (մախազահ), Տ. Տ. Քոչարյան, գնդապետ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (մախազահի տեղակալ),
Ա. Ս. Բաղդանյան, գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու,
Ա. Վ. Հայրապետյան, գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու,
Հ. Հ. Հովհաննիսյան, գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Դ. Մ. Մանասյան, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Մ. Ա. Պեյրոսյան, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Ս. Ա. Սուջյան, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, պահեստագործի գնդապետ*

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)

ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОГО
ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

№ 1 (119). 2024

Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Таварацян Г. В. (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор),
Айвазян Л. Г., *Алексян Д. Н.*, *Асатрян З. Д.* (зам. гл. редактора),
Кочарян Т. Т., *Мкртчян В. А.*, *Саргсян А. Г.*, *Симонян С. В.*,
Степанян Г. Л., *Шахназарян Т. Н.*, *Ширинян М. А.*

СОДЕРЖАНИЕ

РАЗВИТИЕ ВОЕННОЙ НАУКИ И ВОЕННОГО ОБРАЗОВАНИЯ

- Т. Т. Кочарян.* Институциональное значение и тенденции развития военной науки с возможностью локализации мирового опыта 9 (22)*
- А. О. Меликян, Д. С. Чилингарян.* Фундаментальная и прикладная науки и их роль в обеспечении обороноспособности государства: зарубежный опыт 25 (37)
- Л. Т. Асатрян, В. В. Мелконян.* Особенности военного образования и возможности совершенствования в РА 51 (61)
- С. Г. Галстян, Г. А. Аветисян, С. Г. Агамян, Л. Р. Аветисян.* Некоторые рассуждения в отношении дистанционного образования 63 (77)

ПОЛИТОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

- М. М. Маргарян, М. Г. Маргарян.* Цивилизационный политический проект как основа обеспечения безопасности с расширенной повесткой дня 79 (103)
- В. Ш. Геворгян.* Подходы к формированию военно-политических блоков на примере Тройственного союза 93 (104)

ГРАДОСТРОИТЕЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ

- А. В. Варганян.* Структурные особенности населенных пунктов с точки зрения их военностойчивости 107 (116)

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

ВОЕННАЯ МЕДИЦИНА

К. Б. Енкоян, Г. М. Пашикян, Г. Р. Варганян, С. П. Кочарян, Л. С. Галстян, А. А. Акопян, С. Г. Галстян. Некоторые аспекты влияния микроволнового излучения нетермической интенсивности 118 (125)

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

Д. С. Чилингарян и др. Словарь номера 128 (129)

На первой странице обложки (снизу вверх, справа налево):

Иван Баграмян, Дважды Герой Советского Союза, Маршал Советского Союза; *Самвел Кочарянц*, Дважды Герой Социалистического Труда, генерал-лейтенант; *Айк Шекерджян*, бригадный генерал Армии США, Кавалер ордена «Легион почета»; *Абрам Алиханов*, академик, Герой Социалистического Труда; *Артем Микоян*, Дважды Герой Социалистического Труда, генерал-лейтенант инженерно-технической службы; *Левон Орбели*, академик, Герой Социалистического Труда, генерал-полковник м/с.

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

А. Г. Авагян, доктор исторических наук, профессор;
А. А. Ахумян, член-корреспондент НАН РА, доктор физико-математических наук, профессор; *С. Г. Галстян*, доктор медицинских наук, профессор;
В. С. Карапетян, доктор психологических наук, профессор; *Г. С. Котанджян*, доктор политических наук (РФ), профессор, действительный член АВН РФ;
Т. Т. Кочарян, доктор политических наук, профессор; *М. М. Маргарян*, доктор политических наук, профессор; *М. В. Маркосян*, доктор технических наук, профессор; *Г. Г. Матевосян*, член-корреспондент НАН РА; *А. О. Меликян*, член-корреспондент НАН РА, доктор физико-математических наук, профессор;
А. О. Месропян, доктор филологических наук, профессор;
Э. Г. Минасян, доктор исторических наук, профессор; *В. Г. Саакян*, кандидат физико-математических наук; *Р. А. Сафростян*, академик НАН РА;
О. Я. Саядян, доктор географических наук, профессор;
В. В. Селиванов (РФ), доктор технических наук, профессор;
Ю. М. Суварян, академик НАН РА

ВОЕННО-НАУЧНЫЙ СОВЕТ:

Г. В. Таварацян, генерал-майор (председатель); *Т. Т. Кочарян*, полковник, доктор политических наук, профессор (заместитель председателя);
А. В. Айрапетян, полковник, кандидат военных наук; *А. С. Багганян*, полковник, кандидат военных наук; *Д. М. Манасян*, кандидат исторических наук, доцент;
Г. О. Оганесян, полковник, кандидат военных наук, доцент;
М. А. Петросян, кандидат политических наук, доцент;
С. А. Суджян, кандидат географических наук, доцент, полковник запаса

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)

DEFENSE-ACADEMIC JOURNAL,
NATIONAL DEFENSE RESEARCH UNIVERSITY,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 1 (119), 2024

Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Tavaratsyan G. V. (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief),
Aleksanyan D. N., *Asatryan Z. D.* (Deputy Editor-in-Chief), *Ayvazyan L. G.*,
Kocharyan T. T., *Mkrtchyan V. A.*, *Sargsyan A. G.*, *Shahnazaryan T. N.*,
Shirinyan M. A., *Simonyan S. V.*, *Stepanyan H. L.*

CONTENTS

DEVELOPMENT OF MILITARY SCIENCE AND EDUCATION

- T. T. Kocharyan.* The institutional value and development tendencies of the military science with the possibilities of localizing the world's experience 9 (23)*
- A. H. Melikyan, D. S. Chilingaryan.* Fundamental and applied sciences and their role in ensuring the state's defense capability: the foreign experience 25 (50)
- L. T. Asatryan, V. V. Melkonyan.* Peculiarities of military education and opportunities of its improvement in the RA 51 (62)
- S. G. Galstyan, G. A. Avetisyan, S. H. Adamyan, L. R. Avetisyan.* Some considerations regarding distance education 63 (78)

POLITICAL SCIENCE RESEARCHES

- M. M. Margaryan, M. G. Margaryan.* The civilizational political project as a foundation for ensuring security with an expanded agenda 79 (105)
- V. Sh. Gevorgyan.* Approaches to the formation of military-political blocs on the example of the Triple Alliance 93 (106)

URBAN PLANNING SECURITY

- A. V. Vardanyan.* Structural features of settlements from the point of their combat resistance 107 (117)

* Numbers in brackets mean the page of the text in English.

MILITARY MEDICINE

K. B. Yenkovyan, G. M. Pashikyan, G. R. Vardanyan, S. P. Kocharyan, L. S. Galstyan, H. A. Hakobyan, S. G. Galstyan. Some aspects of the influence of microwave radiation of non-thermal intensity 118 (126)

MILITARY TERMINOLOGY

D. S. Chilingaryan and others. Volume Dictionary 128 (130)

On the front page of the cover (from bottom to top, from right to left): *Hovhannes Baghramyán*, Twice Hero of the Soviet Union, Marshal of the USSR; *Samvel Kocharyants*, Twice Hero of Socialist Labour, Lieutenant-General; *Haig Shekerjian*, US Army Brigadier General, Recipient of Legion of Merit; *Abram Alikhanov*, Academician, Hero of Socialist Labour; *Artem Mikoyan*, Twice Hero of Socialist Labour, Lieutenant-General of Technical-Engineering Service; *Leon Orbeli*, Academician, Twice Hero of Socialist Labour, Colonel-General of Medical Service.

ACADEMIC-ADVISORY COUNCIL:

A. G. Avagyan, Doctor of History, Professor; *S. G. Galstyan*, Doctor of Medical Sciences, Professor; *A. A. Hakhumyan*, Corresponding Member, NAS, RA, Doctor of Physical and Mathematical Sciences, Professor; *V. S. Karapetyan*, Doctor of Psychology, Professor, *T. T. Kocharyan*, Doctor of Political Sciences, Professor; *H. S. Kotanjian*, Doctor of Political Sciences (RF), Professor, Full Member, Academy of Military Science, RF; *M. M. Margaryan*, Doctor of Political Sciences, Professor; *M. V. Markosyan*, Doctor of Technical Sciences, Professor; *H. H. Matevosyan*, Corresponding Member, NAS, RA; *A. H. Melikyan*, Corresponding Member, NAS, RA, Doctor of Physical and Mathematical Sciences, Professor; *H. H. Mesropyan*, Doctor of Philology, Professor, *E. G. Minasyan*, Doctor of Historical Sciences, Professor; *R. A. Safrastyan*, Full Member, NAS, RA; *V. G. Sahakyan*, PhD in Physical and Mathematical Sciences; *H. Y. Sayadyan*, Doctor of Geography, Professor; *V. V. Selivanov (RF)*, Doctor of Technical Sciences, Professor; *Yu. M. Suvaryan*, Full Member, NAS, RA

DEFENSE-ACADEMIC COUNCIL:

G. V. Tavaratsyan, MG (Chairman); *T. T. Kocharyan*, Colonel, Doctor of Political Sciences, Professor (Deputy Chairman); *A. S. Baghdanyan*, Colonel, PhD in Military Sciences; *A. V. Hayrapetyan*, Colonel, PhD in Military Sciences; *H. H. Hovhannisyán*, Colonel, PhD in Military Sciences, Associate Professor; *D. M. Manasyan*, PhD in History, Associate Professor; *M. A. Petrosyan*, PhD in Political Sciences, Associate Professor; *S. A. Sujyan*, PhD in Geography, Associate Professor, Colonel (Ret.)

ՌԱԶՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

РАЗВИТИЕ ВОЕННОЙ НАУКИ
И ВОЕННОГО ОБРАЗОВАНИЯ

DEVELOPMENT OF MILITARY SCIENCE
AND EDUCATION

ՈԱԶՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵՆԱԿԱՆ ԷՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ*

*S. S. ՔՈՉԱՐՅԱՆ, գնդապետ, քաղաքական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի՝ կրթության և գիտության գծով
տեղակալ – ԱՌՀԻ-ի պետ*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդկության պատմությունը միշտ ուղեկցվել է պատերազմներով: Հաշվարկված է, որ վերջին երեք ու կես հազարամյակում եղել է ընդամենը մոտ 300 խաղաղ տարի¹: Ուստի պատահական չէ ասված, որ «մարդկության պատմությունը պատերազմների պատմություն է»:

Պատերազմները մղվել են տարբեր պատճառներով: Նախկինում դրանք եղել են կյանքի պայքար (ուրիշի սեփականության զավթում, իր ունեցվածքի պաշտպանություն) և կրել են գերազանցապես սոցիալ-տնտեսական ու քաղաքական բնույթ: «Հարևանությամբ ապրող մարդկանց միջև խաղաղության վիճակը ամենևին էլ բնական վիճակ չէ (*status naturalis*), վերջինս, ընդհակառակը, պատերազմի վիճակն է, այսինքն՝ եթե և ոչ անդադար թշնամական գործողությունները, ապա դրանց մշտական սպառնալիքը»²: Բացի այդ, եղել են նաև կրոնադավանական ու դինաստիական պատերազմներ:

Պատերազմը համարվում է պատմական ու սոցիալ-քաղաքական երևույթ, հասարակության գործառության ու զարգացման ձև, որն ունի մի քանի ձևային կերպար (*ипостась; hypostasis*). դա և՛ զինված ընդդիմամարտություն է, և՛ հասարակության վիճակ, և՛ պետությունների ու սոցիալական ուժերի միջև ծագած վեճերի, հակասությունների հարթման եղանակ³:

Որոշ քաղաքագետների ու ռազմագետների կարծիքով՝ պատերազմն այսօր կրում է քաղաքակրթական բնույթ, երբ մի քաղաքակրթության պատկանող պետություն (պետությունների դաշնություն) ձգտում է ուժի կիրառ-



* Հոդվածն ստացվել է 26.02.2024: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 13.04.2024:

¹ Տես, օրինակ, *В. Ю. Микрюков. ... И не будет сражениям конца. «Независимое военное обозрение», 26.09.2014:*

² Տես *И. Кант. К вечному миру. Электронный ресурс, с. 7 (https://www.civisbook.ru/files/File/Kant_K_vechnomu_miru.pdf):*

³ Տես *В. А. Золотарев, О. В. Саксонов, С. А. Тюшкевич. Военная история России. М., 2001:*

մամբ ոչնչացնելու մեկ այլ քաղաքակրթություն (ի դեմս այն կրող պետությունների): Կարևոր հանգամանք կդառնա և հունքի համար մղվող պայքարը:

Ընդհանուր առմամբ առանձնացնում են պատերազմների ծագման պատճառներն ուսումնասիրող երկու գիտական դպրոցներ. մեկը՝ կենսաբանական–հոգեբանական, մյուսը՝ միջազգային հարաբերությունների⁴: Այս դպրոցների շրջանակներում մշակվել են մի շարք տեսություններ՝ համակարգային մակարդակի (*system-level theories*), սոցիետալ մակարդակի (*societal-level theories*) և անհատական մակարդակի (*individual-level theories*)⁵:

Պատերազմների պատճառների վերաբերյալ տեսությունների ու մոտեցումների այս բազմազանությունն անգամ ցայտուն կերպով արտահայտում է տվյալ պրոբլեմի և ընդհանրապես պատերազմի վերաբերյալ կարծիքների ու մեկնությունների հարցում եղած բազմաթիվ տարակարծությունների և տարրմբռնումների առկայությունը:

Որպես պատերազմների պատճառներ որոշ փորձագետներ առանձնացնում են տնտեսական պայմանները (հիմնական շարժառիթները մրցակցությունը և որոշակի տնտեսական առավելությունների ապահովումն ու պահպանումն են), պետության ղեկավարների հավակնոտ պատվամոլությունը, իրենց մեծարելու ծգտումը, ազգային ամբարտավանությունը և ազրեսիվությունը, որոնք ծագում են գլխավորապես տգետ ու կույր «հայրենասիրությունից», փիլիսոփայական ու գաղափարախոսական հակասությունները⁶:

Դրա հետ մեկտեղ ոչ մի տեսություն չի կարող իր ռազմական ներուժը հասցնել բավարար մակարդակի առանց գիտական հիմնավորումների ու տեսական մշակումների: Ցավոք, մեզանում դեռ խորհրդային շրջանից չի եղել ռազմական գիտությամբ կամ կրթությամբ զբաղվող որևէ կազմակերպություն: Եվ եթե կրթության ոլորտում այս բացը հետևողականորեն վերացվում է, ապա ռազմական գիտության ասպարեզում անելիքները դեռ շատ են:

1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Արդեն նշվեց, որ մարդն իր ծագման օրվանից վարել է տարաբնույթ ու տարընդգրկուն պատերազմներ, նախ՝ մարդկային խմբերի, ապա՝ ցեղերի, ժողովուրդների, պետությունների միջև: Փորձի կուտակմանը և զենքի զարգացմանը զուգընթաց աճել են մարտական հնարավորությունները, բարդացել մարտում կիրառվող հնարները և մարտի վարման եղանակները: Փորձն ու գիտելիքները սերնդից սերունդ փոխանցվել են, նախ՝ բառային ձևով, ապա՝ գրավոր: Դա հնարավորություն է տվել ոչ միայն արձանագրելու կի-

⁴ Տես *Jack S. Levy*. The Causes of War and Conditions of Peace. “Annual Review of Political Science”, 1998, Vol. 1 (<https://fas-polisci.rutgers.edu/levy/articles/1998-causes-of-war-&-conditions-of-peace.pdf>):

⁵ Տես նույն տեղում:

⁶ Տես *I. W. Howerth*. The Causes of War. “The Scientific Monthly”, February 1916, Vol. 2, N 2 (<https://www.jstor.org/stable/6227?seg=1>):

րառվող գաղափարները, այլև վերլուծելու և ըստ այդմ տեսականորեն զարգացնելու դրանք: Այսպիսով ձևավորվել է ռազմական գիտությունը:

Հարկ է նշել, որ սկզբնական շրջանում ռազմական գիտելիքն ստացել էր կրոնաառասպելաբանական ձև, բայց այդ ձևի և ռազմական գործի զարգացման ներքին տրամաբանության միջև հետզհետե ձևավորվել է հակասություն, որը լուծվել է զինված պայքարի ռացիոնալ ճանաչման եղանակով: Արդեն մ. թ. ա. 6–5-րդ դարերում ձեռնարկվել են պատերազմի ու ռազմական գործի տեսական իմաստավորման առաջին փորձերը⁷:

Հարկ է նշել, որ սկանավոր գորավարները՝ և՛ գործնական, և՛ տեսաբան, եղել են նաև փիլիսոփաներ կամ լայնորեն օգտագործել են փիլիսոփաների դասերը: Այսպես. Սուն Ցզիի աշխատությունն իր էությանը ոչ այնքան բուն ռազմական է, որքան ռազմափիլիսոփայական⁸: Հռչակավոր ռազմագետ գեներալ-ֆելդմարշալ Ալֆրեդ ֆոն Շլիֆենը «Ջորավարներ» աշխատության մեջ գրել է. «Մակեդոնացին եղել է Արիստոտելի աշակերտը, Կեսարը փիլիսոփա էր, Գուստավ Ադոլֆը տիրապետում էր յոթ լեզուների, Ֆրիդրիխ Մեծը գիտեր ամեն ինչ, բացի ուղղագրությունից և գերմաներենից»⁹:

Ռազմական գիտության և փիլիսոփայության առնչության մասին հայտնի ռազմագետներ Իվան Կորոբյովը և Վալերի Կիսելյովը գրում են. «Փիլիսոփայության և ռազմական արվեստի «դաշինքի» արգասաբերության մասին կարելի է դատել այն բանից, որ Ալեքսանդր Մակեդոնացու զորքի՝ պատմության մեջ անօրինակ տասնամյա արշավանքը հնարավոր դարձավ շնորհիվ այն բանի, որ զորավարի դաստիարակը Արիստոտելն էր, մի գիտնական, որն իր մեջ զուգակցում էր փիլիսոփայության, մաթեմատիկայի և աստղագիտության, երկրաբաշխության և ֆիզիկայի, ռազմական գործի և պատմության գիտելիքները: Ռուստի զարմանալի չէ, որ Ա. Մակեդոնացու զորքը պատերազմը վարում էր մանրակրկիտ կերպով՝ մշակված պլանի ու համակողմանի ապահովման հիման վրա»¹⁰:

Առանց մանրամասնորեն քննարկելու նշենք, որ հետագայում ևս ռազմական գործին նվիրված իրենց աշխատություններում փիլիսոփայական մոտեցում են ցուցաբերել Թուկիդիդեսը (մ. թ. ա. 460 – մ. թ. ա. 400), Քսենոփոնը (մ. թ. ա. 430 – մ. թ. ա. 355), Պոլիբիոսը (մ. թ. ա. 205 – մ. թ. ա. 125), որոնք, չլինելով փիլիսոփա, մեծ տեղ են հատկացրել դրան, ինչպես նաև Հուլիոս Կեսարը (մ. թ. ա. 102/100 – մ. թ. ա. 44), Գայոս Սալլուստիոս Կրիսպոսը (մ. թ. ա. 86 – մ. թ. ա. 35), Պլուտարքոսը (46–127), Արիանոսը (95–

⁷ Stu В. Ю. Балабушевич, А. И. Гурский. К вопросу о взаимодействии философского знания и военного дела. «Вестник Академии военных наук», 2008, № 2:

⁸ Stu *Մուն Ցզի*, Երկ ռազմարվեստի մասին: «Հայկական բանակ» ՌԳՀ հավելված «Աշխատանքային տետրեր», 2022, հմ. 4 (79):

⁹ Stu «Стратегия в трудах военных классиков». Под. ред. А. Свечина, т. 1. М., 1924, с. 346:

¹⁰ И. Н. Воробьев, В. А. Киселев. История и философия военной науки. «Военная мысль» («ВМ»), 2007, № 2.

180): Ռազմական արվեստի զարգացման տեսակետից առանձնակի կարևորություն ունեն Սեքստոս Հուլիոս Ֆրոնտինոսի (30–103) «Ստրատեգեմաներ», կամ «Ռազմական խորամանկություններ», Պուբլիոս Փլարիոս Վեգետիոս Ռենատոսի (4-րդ դ. վերջ–5-րդ դ. սկիզբ) «Ռազմական գործի հիմունքների համառոտ շարադրանք» աշխատությունները¹¹:

Ռազմական գործի ու փիլիսոփայության անմիջական կապը ցայտուն կերպով դրսևորվել է 18-րդ դարում՝ Լուսավորության դարաշրջանում: Այդ շրջանի ականավոր ռազմական գրողներ էին Ժան Շառլ դը Ֆոլարը (1669–1752), Ժակ Անտուան Իպոլիտ Գիբերը (1743–1790), Մորից Սաքսոնացին (1696–1750), Ֆրիդրիխ 2-րդ Մեծը (1712–1786), Հենրի Հեմպֆրի Էվանս Լլոյդը (1720–1783), Ադամ Հայնրիխ Դիտրիխ ֆոն Բյուլովը (1757–1807): Լլոյդն առաջինը պնդեց, որ ռազմական գիտությունն ունի գոյության իրավունք, սակայն դրա ուսումնասիրության առարկան սահմանափակեց պատերազմին նախապատրաստման պրոբլեմներով: Իսկ Բյուլովն առաջինը «հասկացավ քաղաքականության և ռազմավարության միջև գոյություն ունեցող սերտ հարաբերակցությունը»¹²: Սակայն լինելով «տեխնասեր»՝ նա հաջողության հասնելու գործում առաջնությունը տալիս էր հաշվարկային ցուցանիշներին, որոնք կարելի էր հաշվարկել նախքան օպերացիան սկսելը:

Այս տեսակետի դեմ ավանդաբար պայքարում էին այսպես կոչված «պատերազմի փիլիսոփաները», որոնց կարկառուն ներկայացուցիչներից էր Կառլ Ֆիլիպ Գոտլիբ ֆոն Կլաուզեֆցը (1780–1831), որն ուսումնասիրել է նաև դասական (կանտյան) փիլիսոփայությունը¹³:

Կլաուզեֆցը ժխտում էր պատերազմի օրենքները հայտնաբերելու հնարավորությունը, քանի որ պատերազմը մարդկային գործունեության ոլորտ է, և պատերազմի էությունը ճիշտ ըմբռնելու համար կարևոր է մարդկային չափումը. «վա՛յ այն տեսությանը, որը հանդիպակաց է ոգուն... Ամեն մի տեսություն դառնում է անվերջ բարդ՝ սկսած այն պահից, երբ շոշափում է բարոյական արժեքների ոլորտը: Սակայն ռազմական գործունեությունը երբեք էլ չի լինում ուղղված միայն ընդդեմ նյութի, այլև այդ նյութը ոգեղենացնող բարոյական ուժերի դեմ. դրանք միմյանցից տարանջատել անհնար է»¹⁴:

Ռազմական գիտության զարգացման գործում մեծ դեր են խաղացել նաև Անտուան Անրի Ժոմինին (1779–1869), Հելմուտ ֆոն Մոլտկե Ավագը (1800–1891), Կոլմար ֆոն դեր Գոլցը (1843–1916), Ֆերդինանդ Ֆոշը (1851–1929), Լյուդվիգ ֆոն Էյմանսբերգերը (1878–1945), Ջուլիո Դուեն (1869–1930), Միխայիլ Ֆրունզեն (1885–1925), Վլադիմիր Տրիանդաֆիլովը (1894–1931), Էրիխ ֆոն Մանշտայնը (1887–1973) և ուրիշներ: Հարկ է հիշատակել զսպման, հիբրիդային ու ցանցակենտրոն պատերազմների, առաջադրանքային կառավարման (*Auftragstaktik*, կամ *Mission Command*) և այլ տեսություններ:

¹¹ Տես նույն տեղում:

¹² Տես «Стратегия в трудах военных классиков», т. 2. М., 1926, с. 23:

¹³ Տես *Carl von Clausewitz. Vom Kriege*. Hamburg, 2019:

¹⁴ *К. Клаузевиц. О войне*. М., 2004, сс. 59–60.

2. ՈԱԶՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կան ռազմական գիտության տարբեր ընկալումներ և համապատասխան սահմանումներ: Եթե ի մի բերենք դրանք, ապա կարող ենք ներկայացնել այն երկու հիմնական մոտեցումները, որոնք համապատասխանաբար բնորոշ են ռուսական և անգլոսաքսոնական մշակույթներին:

Ըստ ռուսական մշակույթի՝ ռազմական գիտությունը «պատերազմի օրենքների ու ռազմական-ռազմավարական բնույթի, ինչպես նաև պատերազմի կանխման, ՋՈՒ-ի շինարարության ու պետության ռազմական շինարարության, պատերազմին ՋՈՒ-ի ու պետության պատրաստման, զինված պայքարի վարման եղանակների մասին գիտելիքների համակարգ է»¹⁵:

Արևմտյան մշակույթում ընդունված է համարել, որ դա ռազմական պրոցեսների, հաստատությունների և բնույթի հետազոտում է՝ զուգակցված պատերազմի վարման ուսումնասիրության, կազմակերպված ուժի տեսության և կիրառման հետ¹⁶:

Ըստ սահմանման՝ ռազմական գիտությունն ուսումնասիրում է պատերազմի օրենքները: Ռուստի հարց է ծագում. իսկ կա՞ն պատերազմի օրենք-տիվ օրենքներ, կա՞ պատերազմի վերաբերյալ ընդունելի տեսություն: Տարածված է նաև այն տեսակետը, թե զինված պայքարի նյութական և իդեալական բաղադրատարրերի միաբերումն սկզբունքորեն անհնար է, ինչը բացատրվում է հետևյալ կերպ: Ռազմական արվեստը հումանիտար գիտություն է, որի օրենքները (օրինաչափությունները) ոչ թե դինամիկական բնույթի են, այլ վիճակագրական, ավելի շատ՝ քվազիվիճակագրական: Ռուստի ռազմական գիտությանը բնորոշ են ոչ թե մաթեմատիկական ձևակերպմամբ քանակական օրենքները, այլ միտումները¹⁷: Սակայն հիշենք, որ կան վիճակագրական բնույթի բնական գիտություններ, օրինակ՝ վիճակագրական ֆիզիկան, որի օրենքները, այդուհանդերձ, դինամիկական են և ունեն մաթեմատիկական բաշխումների տեսք:

Եվ այսպես. արդի ժամանակաշրջանում ռազմական ու փիլիսոփայական գիտությունների հրատապ խնդիրներն են հետևյալ պրոբլեմները.

- պատերազմի օրենքների մշակումը և իմաստավորումը,
- տեսամեթոդաբանական հիմքերի, տեսական հիմունքների ստեղծումը,
- ռազմական և ոչ ռազմական ընդդիմամարտության էության ու բնույթի,

¹⁵ Տես «Военный энциклопедический словарь». М., 2001, с. 296, նաև՝ Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 515:

¹⁶ Տես Kelly C. Jordan. Military Science. "Encyclopedia of Military Science". Ed. by G. Kurt Piehler. SAGE Publications, 16 August 2013, Vol. 2, P. 880:

¹⁷ Տես, օրինակ, М. Ф. Ваккаус. Сущность и механизм действия законов вооруженной борьбы, количественно отражающих ее характер. «ВМ», 2008, № 3:

միջոցների ու եղանակների զարգացման միտումների և փոփոխման օրինաչափությունների հետազոտումը,

- ռազմական անվտանգության համար այլ կարևոր պրոբլեմների ուսումնասիրությունը:

Ռազմական գիտության զարգացումն առանձնակի կարևորություն ունի Հայաստանի Հանրապետության համար, քանի որ՝

– Հարավային Կովկասի տարածաշրջանը կրում է Մերձավոր Արևելքում տեղի ունեցող աշխարհաքաղաքական ու ռազմական զարգացումների ազդեցությունը, ինչն ստեղծում է նոր մարտահրավերներ,

– ՀՀ-ն ունի սուղ մարդկային, տարածքային, հումքային, ֆինանսատնտեսական ռեսուրսներ, ուստի պետք է ապավինի ոչ թե քանակին, այլ որակին, ինչը պահանջում է հիմնարար գիտական մոտեցում:

Այս, և մի շարք այլ պատճառներով մեր ռազմական դոկտրինում որպես ռազմական անվտանգության ապահովման կարևոր ուղիներից մեկը նշվում է. «միջազգային արդի ռազմական գիտության, ռազմական արվեստի, ռազմատեխնիկական առաջընթացի և գործնական փորձի ձեռքբերումների ուսումնասիրման հիման վրա անհրաժեշտ ուժերի, միջոցների, պաշարների ստեղծումը և նպատակային կիրառումը»¹⁸:

Հենց ռազմական գիտությունը պետք է ուղենշի մեր պաշտպանական-անվտանգային զարգացման ճիշտ ուղին, հնարավորություն տա լուծելու «փոքր ուժերով մեծ խնդիրներ», այսինքն՝ օպտիմալացման պրոբլեմը:

Ցավոք, այսօր մենք դեռ չունենք բավարար մակարդակի ռազմական գիտություն: Եվ ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում կազմակերպված դասընթացները հիմնականում ուղղված են այս բացը լրացնելուն. այն է՝ ռազմական գիտության զարգացման համար ռազմավարական կադրային ռեսուրսների ստեղծմանը: Իսկ դա նշանակում է, որ պետք է դաստիարակվեն գրագետ, հարուստ գիտելիքով օժտված և այն տրամաբանված ձևով կիրառելու գործում հմուտ սպաներ: Նման սպաները պետք է կարողանան ոչ միայն գերազանց կերպով կատարել ամենօրյա պարտականությունները, այլև իրենց հարուստ գիտելիքները դնեն ի նպաստ մեր պետության ռազմական անվտանգության ու կայուն զարգացման վսեմ գործի հաջողությանը:

3. ՌԱԶՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Ռազմական գիտությունը, որպես գիտակարգ ձևավորվելով 18-րդ դարում, երկար ժամանակ հանդես է եկել որպես ռազմական պրակտիկայի ընդհանրացման ու իմաստավորման վրա խարսխվող, հաճախ իրար բացառող ռազմափիլիսոփայական տեսությունների շարք: Եվ միայն 19-րդ դարի վերջին այն սկսել է ձևավորվել որպես զանազան, զուտ ռազմական տեսությունների համակարգ:

¹⁸ Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տեղեր», 2007, հմ. 4, էջ 35:

19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին ռազմական տեսության զարգացումը անմիջականորեն առնչվում էր այդ ժամանակաշրջանի արդյունաբերության, տրանսպորտի և մարդկության կենսագործունեության այլ ոլորտներում տեղի ունեցող հեղափոխական զարգացումներին: Ի հայտ էին գալիս զինված պայքարի նոր միջոցներ, որոնց առկայությունը հանգեցնում էր ռազմական գործողությունների մասշտաբների ընդլայնմանն ու բնույթի փոփոխմանը, դրանց բովանդակության բարդացմանը: Օրինակ՝ պրուսական գեներալ-ֆելդմարշալ Հելմուտ ֆոն Մոլտկեի գաղափարները հիմք դարձան համընդհանուր արագընթաց պատերազմի տեսության զարգացման համար: Ռազմական գիտության զարգացման գործում մինչև առաջին աշխարհամարտը մեծ դեր խաղաց գերմանացի գեներալ-ֆելդմարշալ Կոլմար Վիլհելմ Լեոպոլդ ֆոն դեր Գոլցը, որը «համընդհանուր պատերազմի» հեղինակներից մեկն էր: «Պատերազմի վարում. դրա հիմնական սկզբունքների և ձևերի համառոտ տեսություն» աշխատության մեջ¹⁹ նա նշում էր, որ ապագա պատերազմում կներգրավվեն զանգվածային բանակներ, կստեղծվեն տարածուն ռազմաճակատներ, անցյալի գիրկը կանցնեն մարտերի ու ճակատամարտերի միջև երկարատև դադարները:

Զգալի ներդրում ունեցավ նաև Ֆրանսիայի մարշալ Ֆերդինանդ Ֆոշը, որը 1918 թ. մարտ–նոյեմբեր ամիսներին Ֆրանսիայում դաշնակից զորքերի Գերագույն գլխավոր հրամանատարն էր: Նա իր աշխատություններում²⁰ որպես ռազմական գործողությունների հիմնական եղանակ դիտում էր հարձակումը:

Հետագայում առաջին աշխարհամարտը տվեց հարձակողական և պաշտպանողական ռազմաճակատային և բանակային օպերացիաների նախապատրաստման ու վարման, համագորային, ծովային և օդային մարտերի կազմակերպման հսկայական փորձ: Մեծ զարգացում ապրեց դիրքային պաշտպանության ճեղքման տեսությունը, թեև լիովին չէր լուծված ճեղքումը ռազմավարական և օպերատիվ մասշտաբներով զարգացնելու խնդիրը:

Առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների միջև եղած ժամանակահատվածում ստեղծվում էին միլիոնանոց բանակներ, զարգացվում էին ՁՈՒ-ի բոլոր տեսակներն ու բոլոր զորատեսակները: Այդ ժամանակ մշակվեցին «մեքենայացված (տանկային)» և «օդային» պատերազմների հայեցակարգները: Առաջինը շարադրված է Լյուդվիգ ֆոն Էյմանսբերգերի աշխատությունում, որը լույս է տեսել 1934 թ.²¹, երկրորդը՝ իտալացի գեներ-

¹⁹ *Stu Colmar Friherr von der Goltz. Kriegführung. Kurze Lehre ihrer wichtigsten Grundsätze und Formen. Berlin, 1895:*

²⁰ *Stu, օրինակ, Փ. Փոշ. О ведении войны: Маневр перед сражением. 2-е изд. М., 1936:*

²¹ *Stu Л. Эймансбергер. Танковая война. М., 1938:*

րալ Ջուլիո Դուեի «Տիրապետություն օդում: Ապագա պատերազմի հավանական ձևերը» գրքում, որը հրատարակվել է 1921 թ.²²:

Խորհրդային Միությունում ևս զարգանում էր ռազմական տեսությունը: Միխայիլ Ֆրունզեն մեծ ներդրում ունեցավ խորհրդային ռազմական դոկտրինի տեսական հիմունքների, ռազմական գիտության, ռազմավարության, մարտավարության, ՋՈՒ-ի շինարարության, զորքի ուսումնավարժեցման ընդհանուր հիմունքների մշակման գործում: *Խոր օպերացիայի տեսության* հիմնադիրներից է Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի (ԲԳԿԲ) շտաբի օպերատիվ վարչության պետ Վլադիմիր Տրիանդաֆիլովը, որն իր «Ժամանակակից բանակների օպերացիաների բնույթը» հիմնարար աշխատության մեջ պնդում է, թե ապագա պատերազմը լինելու է զանգվածային բանակների պայքար, թե ժամանակակից օպերացիան զինված պայքարի բարդ նյութատեխնիկական գործընթաց է և պահանջում է գիտատեխնիկական հաշվարկումներ: Մարտի կազմակերպման ու վարման գործում նորույթը, նրա կարծիքով, պետք է լիներ հակառակորդի ամբողջ մարտավարական խորությամբ հասցվող միաժամանակյա հարվածը, որին պետք է մասնակցեին տանկերի, գրոհային ավիացիայի, հեռահար հրետանու տարբեր խմբեր (շարակարգեր), ընդ որում, հաջողության հիմնական գրավականը պետք է լիներ դրանց սերտ համագործակցությունը²³:

Երկրորդ համաշխարհայինի տարիներին նոր խոսք ասեց նաև գեներալ-ֆելդմարշալ Էրիխ ֆոն Մանշտայնը, որը դեռ 1935 թ. առաջարկել էր ստեղծել թրթուրավոր ամրաշրջանի հիմքի վրա խարսխված և զրահով հուսալիորեն պատված ինքնագնաց հրետանային կայանքներով սպառազինված շարժունակ գրոհային հրետանու ստորաբաժանումներ:

Առանձնակի մեծ փոփոխություններ տեղի ունեցան երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Մշակվեցին զսպման (ուժային, այդ թվում՝ միջուկային, և ոչ ուժային), հիբրիդային ու ցանցակենտրոն պատերազմների և այլ տեսություններ:

4. ՈԱԶՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Որպես կայացած գիտաճյուղ ռազմական գիտությունն ունի հետազոտության պատմականորեն ձևավորված երկու օբյեկտ՝ պատերազմը և զինված ուժերը:

Հին շրջանում ռազմական գիտությունը հանդես է եկել պատերազմների, ռազմարշավների, առանձին ճակատամարտերի պատմական նկարագրությունների տեսքով: Իհարկե, այդ նկարագրություններին պետք է վերաբերվել զգալի վերապահումներով: Օրինակ՝ Պլուտարքոսը և Ապիանոսը, նկարագրելով մ. թ. ա. 69 թ. Տիգրանակերտի ճակատամարտը, հռոմեական զորքի

²² Տես *Джулио Дуэ. Господство в воздухе. М., 2003:*

²³ Տես *В. К. Триандафиллов. Характер операций современных армий. М., 1936:*

թվաքանակը գնահատում են 15000-20000, իսկ Տիգրան Մեծի բանակինը՝ 300000-ի կարգի: Ավելի անհեթեթ են կորուստների տվյալները. հայոց բանակում՝ 100000-ից ավելի սպանված, հռոմեականում՝ 100 վիրավոր և 5 սպանված: Եվ դա այն դեպքում, որ Տիգրանն իբր ուներ 30 հազ. նետածիգ:

Նման խեղաթյուրումների հանդիպում ենք նաև ավելի արդիական օրինակներում՝ ինչպես երկրորդ համաշխարհային պատերազմի, այնպես էլ դրանից հետո տեղի ունեցած պատերազմների առնչությամբ:

Սասնավորապես՝ 1944 թ. դեկտեմբերի 16-ին սկսվեց գերմանական զորքերի Արդենյան հակահարձակումը, այսպես կոչված «Հռենոսի հերթափոխ» (*Die Wacht am Rhein*) օպերացիան: Օգտագործելով հանկարծակիության գործոնը՝ գերմանացիներն առաջին օրերին հասան մեծ հաջողությունների՝ ձեռքբերելով 80 կմ լայնությամբ ճակատը, մինչև 90 կմ մխրձվելով հակառակորդի պաշտպանության խորքը և գերի վերցնելով շուրջ 30000 զինվորի ու սպայի: Սակայն դաշնակիցներին հաջողվեց ռազմաճակատի այլ հատվածներից տեղափոխել ուժեր, դանդաղեցնել, ապա և կանգնեցնել ըստ էության մարդկային ու նյութական բավարար պահուստ չունեցող հակառակորդի առաջխաղացումը: Իսկ երբ Չերչիլի՝ 1945 թ. հունվարի 6-ին հղած խնդրագրին ի պատասխան Խորհրդային բանակն Արևելյան ճակատում անցավ լայնամասշտաբ հարձակման, և գերմանացիներն ստիպված եղան Արդենի օպերացիայում ներգրավված ուժերի գրեթե երրորդ մասը տեղափոխել այնտեղ, դաշնակիցներն սկսեցին հետզհետե վերականգնել կորցրած դիրքերը²⁴: Օպերացիայում ներգրավված հիմնական գերմանական միավորումներից մեկի՝ 5-րդ տանկային բանակի հրամանատար գեներալ Հասսո-Էկարդ Ֆրայեն ֆոն Մանտոյֆելը գրում է. «Կարմիր բանակի սրընթաց առաջխաղացումը ի դերև հանեց Արդենյան հարձակման շնորհիվ ձեռք բերված դադարի հետևանքները և անխուսափելի դարձրեց պատերազմի արագ ավարտը: Այդ էր պատճառը, որ Արևմտյան ճակատում ժամանակի նվաճված շահումը եղավ խաբուսիկ»²⁵:

Իսկ ո՞րն է նման խեղաթյուրումների վտանգավորությունը:

Հայտնի է, որ գիտական վարկածներին ու տեսություններին հատուկ է հավանականային բնույթը, վիճակագրական վերլուծությունը: Բայց եթե կեղծվում են անգամ շատ մոտ անցյալում տեղի ունեցած իրադարձությունները, ուրեմն ճշգրիտ չի լինի նաև վիճակագրությունը: Ուստի, ինչպես ասեցինք, պետք է պատմական փաստերի վերլուծության ժամանակ ցուցաբերել զգուշավորություն և շրջահայեցություն, հատկապես, եթե ընդունում ենք բրիտանացի ռազմական պատմաբան ու տեսաբան սեր Բեզիլ Հենրի Լիդել Հարտի (1895–1970) հետևյալ պնդման ճշմարտացիությունը. «Ֆիզիկական գործոնի նկատմամբ հոգեբանականի գերազանցությունն ու ավելի մեծ հաստատունությունը հանգեցնում են այն եզրակացության, որ յուրաքանչյուր

²⁴ Տես *Хассо фон Мантейфель*. Арденны. «Роковые решения». М., 1958:

²⁵ Նույն տեղում:

ռազմական տեսության հիմքը պետք է լինի հնարավորինս լայն: Մեծ ռազմարշավի մանրակրկիտ ուսումնասիրությունը, եթե այն չի հիմնվում ամբողջ ռազմական պատմության լավ իմացության վրա, կարող է հանգեցնել սխալ եզրակացությունների: Սակայն, եթե հայտնաբերվի որոշակի օրինաչափություն, որը բնորոշ լինի տարբեր դարաշրջանների և տեղի ունենա տարբեր պայմաններում, ապա կան բոլոր հիմքերը այդ օրինաչափությունը ռազմական տեսության մեջ ներառելու համար»²⁶:

Սա, կարելի է ասել, ռազմական պատմական փորձի և ռազմագիտական տեսության առնչությունը սահմանող հիմնարար դրույթ է, կարևոր չափանիշ:

Եթե գիտության հետազոտական մակարդակների մասին դատողությունները տարածենք նաև ռազմատեսական գիտելիքների ձեռքբերման վրա, ապա կարող ենք ասել, որ զինված պայքարի՝ որպես ռազմական գիտության առարկայի հետազոտությունը էմպիրիկ մակարդակում արտացոլում է այդ պայքարի հատկություններն ու հատկանիշները՝ պատերազմի օբյեկտիվ իրականության հետ հետազոտողի անմիջական շփումների պայմաններում: Տեսական մակարդակում, երբ չկա իրականության հետ հետազոտողի անմիջական շփում, գիտակցվում է զինված պայքարի էությունը, բացահայտվում են նրա պատճառահետևանքային, կառուցվածքագործառության, տարածաժամանակային և այլ կապեր: Եթե էմպիրիկ մակարդակում գիտելիքը ձևավորվում է որպես դատողություն, կամ կշռադատություն, ապա տեսական գիտելիքն ունի կատեգորիաների, սկզբունքների ձև:

Բոլոր գիտություններն ունեն իրենց ուրույն հետազոտական մեթոդները: Ռազմական գիտության մեթոդների հարցը ևս դարձել է երկար տարիների բանավեճերի առիթ՝ պայմանավորված այն բանով, թե տվյալ հետազոտողը ռազմական գիտությունը ինչ գիտությունների դասին է վերագրում և ընդհանրապես ինչպիսի վերաբերմունք կա ռազմական գիտության նկատմամբ: Այսպես. առաջին համաշխարհային պատերազմից հետո մեծ թվով առաջատար պետություններում օրենսդրության մեջ ու զանազան սոցիալական կառույցներում ամրագրվեց գիտության ու ռազմական գիտության փոխգործությունը, որը զարգանում էր ըստ «Գիտությունը դառնում է թշնամու նկատմամբ հաղթանակի հասնելու գործոն» կարգախոսի²⁷:

Մեկ այլ մոտեցմամբ՝ ռազմական գիտությունում սկսեց կիրառվել սոցիոլոգիայի ու հոգեբանության մեթոդաբանությունը, որը հիմնված էր Օգյուստ Կոնտի դասական պոզիտիվիզմի ու նրա հետևորդներ՝ 19–20-րդ դարերի խոշոր սոցիոլոգներ Էմիլ Դյուրկհայմի, Վիլհելմ Պարսոնսի, Ջոն Ստյուարտ Միլի, Հերբերտ Սպենսերի տեսական մշակումների վրա²⁸: Այդ

²⁶ *Бэзил Лиддел Гарт*. Стратегия непрямых действий. М., 2003, с. 32.

²⁷ *Stu «Война и армия: философско-социологический очерк»*. Под ред. Д. А. Волкогонова, А. С. Миловидова и С. А. Тюшкевича. М., 1977, с. 207:

²⁸ *Stu А. С. Луньков*. Неклассическая военная наука: методологический аспект. «Эпистемы» Сборник научных статей. Екатеринбург, 2015, Вып. 10 (http://elar.urfu.ru/bitstream/10995/39769/1/episteme_2015_03.pdf):

մոտեցման կողմնակիցներից էր հայտնի ռուս ռազմագետ-տեսաբան գեներալ Նիկոլայ Գոլովինը²⁹:

Ռուսաստանում այդ տարիներին լույս տեսած «Ռազմագիտական հանրագիտարանի» հրատարակիչ Իվան Սիտինը գրել է. «Ռազմական գիտությունը՝ որպես մարդկային գիտելիքի ամենաբարձր և առավել բարդ ոլորտի՝ սոցիոլոգիայի ճյուղ... չի կարող հավակնել այն կատարելության, որը բնորոշ է բնության մասին գիտություններին... Սոցիոլոգիան չի կարող կատարել փորձեր... կարող է եզրակացություններ անել և դրանք ստուգել քննապատմական մեթոդի կիրառմամբ»³⁰:

Ռազմական գիտության դժվարությունները մեկնաբանել է նաև Ճանաչված գիտնական, պատերազմի սոցիոլոգ Պիտերիմ Սորոկինը: Նա, մասնավորապես, նշել է, որ անհնար է «կատարել ցանկացած որակական-քանակական երևույթի «ճշգրիտ թարգմանություն» զուտ քանակական լեզվի: Մինչդեռ սոցիոմշակութային երևույթների մեծ մասը, այդ թվում և պատերազմներն ու հեղափոխությունները, օժտված են հենց այդ հատկությամբ»³¹: Իսկ այդ մոտեցման կողմնակից գեներալ Գոլովինն իր ատենախոսության մեջ, որի մի ծավալուն գլուխը թարգմանաբար հրատարակվել է «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսում, հանգել է այն հիմնարար եզրակացությանը, որ «Ամեն մի մարտ ավարտվում է կռվող կողմերից մեկի հրաժարմամբ մարտից» և դրա պատճառը համարել է զուտ հոգեբանական³²:

Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ որպես ռազմական գիտության մեթոդաբանության հիմք ավանդաբար ծառայել է ռազմական պատմությունը, ինչը հանգեցրել է ռազմական գիտելիքից անբաժանելի մի իմացաբանական հակասության, որը սրամիտ կերպով արտահայտվել է «Գեներալները պատրաստվում են անցած պատերազմի» ասույթով:

Եթե ընդունենք այն տարածված տեսակետը, որ ռազմական գիտության հիմնական օբյեկտն է պատերազմը՝ որպես հասարակության վիճակ, ապա ընդունելի պետք է համարել նաև այն կարծիքը, թե ռազմական գիտությունը կարելի է դասել հասարակական գիտությունների շարքն այն վերապահումով, որ դա համալիր գիտություն է, որի բաժինների մի մասն ակներևաբար տեխնիկական գիտությունների տարատեսակ է: Ընդհանուր առմամբ ռազմական երևույթների հետազոտման համար սոցիոլոգիայի և հոգեբանության մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս լուծելու մի շարք խնդիրներ, ինչպիսիք են պատերազմի վրա հասարակության կառուցվածքի ու սոցիալական խմբերի միջև հարաբերությունների ազդեցությունը, պատերազմի ազ-

²⁹ Տես Ն. Ն. Գոլովին, Մարտի հետազոտություն. մարդու՝ որպես մարտիկի գործունեության և հատկությունների հետազոտություն: «Հայկական բանակ», 1997, հմ. 1–2, 3, 1998, հմ. 1:

³⁰ «Военная энциклопедия» в 18-и т. Под ред. В. Ф. Новицкого и др. СПб., 1911–1915. Т. 6, с. 476.

³¹ П. А. Сорокин. Социальная и культурная динамика. М., 2006, с. 680.

³² Տես Ն. Ն. Գոլովին, Նշ. աշխ.:

դեցությանը հասարակության և առանձին սոցիալական խմբերի զարգացման դինամիկայի փոփոխությունը, ռազմական գործողությունների ընթացքի և արդյունքների համար զանազան սոցիալական գործոնների (կրոնական, քաղաքական, բարոյական, մշակութային, քաղաքակրթական) դերը³³:

Ռազմական գիտության դասակարգման և ընդհանրապես գիտություն կամ ոչ գիտություն համարելու հարցում հետազոտողների դիրքորոշման վրա վճռորոշ ազդեցություն է գործում ուսումնասիրողի կողմնորոշումը, այն է՝ նրա ընտրությունը հոգուտ դիալեկտիկայի, թե՛ մետաֆիզիկայի (բնագանցության):

Պատերազմի տեսական իմաստավորման համար կարևոր է նաև, թե որ գաղափարներին է դավանում հետազոտողը՝ դետերմինիզմի, թե ինդետերմինիզմի: Առաջին դեպքում նա պատերազմը կդիտարկի որպես պատճառականությամբ պայմանավորված սոցիալական երևույթ, կընդունի պատերազմի ու զինված պայքարի օբյեկտիվ օրենքների գոյությունը: Երկրորդ դեպքում հետազոտողը կբացասի պատերազմի ու զինված պայքարի օբյեկտիվ օրինաչափությունների գոյությունը, կբացարձակացնի պատահականության դերը: Այսպես. Կառլ Ֆոն Կլաուզեֆցը պնդում էր, որ «Պատերազմը պատահականության ոլորտ է... Պատերազմում իմացության իմաստով օրենքի հասկացությունը գրեթե ավելորդ է, ... պատերազմի վարումը չի ընդունում պնդումներ, որոնք լինեն այն աստիճանի ընդհանուր, որպեսզի արժանանան օրենք կոչվելու իրավունքի»³⁴:

Շեշտենք, որ այստեղ կարող է խոսք լինել քանակական օրենքների մասին, մինչդեռ գործում են հետևյալ երեք հիմնարար օբյեկտիվ օրենքները:

Առաջին օրենքը պնդում է, որ մարդկային հասարակության զարգացմանը զուգընթաց տեղի է ունենում զինված պայքարի կառուցվածքի ուղղորդված և անդառնալի փոփոխություն:

Երկրորդը սահմանում է, որ մարդկային հասարակության զարգացման հետ միաժամանակ տեղի է ունենում զինված պայքարում միմյանց դիմակայող կողմերի փոխադարձ ներգործության ուղղվածության համակարգված և անդառնալի փոփոխություն, այն է՝ մարդու վրա ներգործությունից հետևողական անցում դեպի ներգործում զինված պայքարի միջոցների վրա:

Եվ *երրորդ* օրենքն ասում է, որ մարդկային հասարակության զարգացման հետ մեկտեղ տեղի է ունենում զինված պայքարի բնույթի ուղղորդված և անդառնալի փոփոխություն, որը դրսևորվում է որպես հետևողական անցում խոցվող օբյեկտների ոչնչացումից դեպի դրանց նախատեսված գործունեության խաթարում, ապա՝ փոփոխում:

Այս երեք օրենքները, որոնք արտահայտվում են զինված պայքարի զարգացման մշտական կոնկրետ և հաստատուն միտումների առկայության միջոցով, պետք է այլ օրենքների ու օրինաչափությունների հետ մեկտեղ

³³ Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Н. А. Корф. Общее введение в стратегию: этюды по философии военных наук. Изд. 2-е. М., 2012, сс. 64–66*:

³⁴ *К. Клаузевиц. О войне, сс. 36, 71.*

հաշվառված լինեն պաշտպանության կազմակերպման միջոցառումների և ընդհանրապես ռազմական գործունեության գիտական հիմնավորման ժամանակ: Եվ որքան ավելի ճշգրիտ կերպով հաշվի առնվի այդ օրենքների ազդեցությունը, այնքան ընդունված որոշումները ավելի մեծ չափով կլինեն օպտիմալ՝ դրանով իսկ մեծացնելով տվյալ բնագավառում օբյեկտիվ հնարավորությունների իրացման արդյունավետությունը:

Այդուհանդերձ, առավել հիմնավոր է այն տեսակետը, որ ռազմական գիտությունը միանգամայն համապատասխանում է գիտությանը ներկայացվող հիմնական պահանջներին, այն է՝ ունի հետազոտության իր օբյեկտն ու առարկան, մեթոդները, հասկացութատերմինաբանական ապարատը, իր սկզբունքները, տեսությունները, կառուցվածքը, այլ գիտությունների հետ գիտահետազոտական առնչություններ:

Ըստ այդմ՝ ընդունելի են հեզելյան դիալեկտիկական մոտեցումը, ռազմական գործում օրինաչափությունների և սկզբունքների գոյությունը և ռազմական գիտության դիտումը որպես կայացած գիտության՝ իր ուրույն կառուցվածքով, որում ներկայումս առանձնացվում են հետևյալ բաժինները.

- ընդհանուր հիմունքներ (ընդհանուր տեսություն),
- ռազմական արվեստի տեսություն,
- ՋՈՒ-ի շինարարության տեսություն,
- ՋՈՒ-ի կառավարման տեսություն,
- ՋՈՒ-ի տեսակների տեսություն,
- զինվորական ուսուցման ու դաստիարակության տեսություն,
- սպառազինության տեսություն,
- ռազմական էկոնոմիկայի ու ՋՈՒ-ի թիկունքի տեսություն,
- ռազմական պատմություն³⁵:

Պետք է շեշտել, որ ռազմական գիտությունը այս առարկաներն ուսումնասիրում է այլ գիտությունների հետ համագործակցությամբ:

Ռազմական գիտության հիմնական գործառույթներ են **ճանաչողականը, կանխագուշակիչը և կառավարակարգավորիչը:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով՝ կարող ենք հանգել հետևյալ հիմնական եզրակացություններին:

1. Ռազմական գիտությունը՝ որպես ինքնուրույն ու փաստացի կայացած գիտություն, ունի հետազոտման իր օբյեկտն ու առարկան, կառուցվածքը, յուրահատուկ մեթոդներն ու ճշմարտացիության որոշման չափանիշները, տեսություններն ու սկզբունքները, ուրույն հասկացութատերմինաբանական ապարատը:
2. Ռազմական գիտությունը, ինչպես և ցանկացած գիտակարգ, երկար ժամանակ զարգացել է շնորհիվ տաղանդավոր անհատների ջանքերի,

³⁵ Տես «Военная наука» (<http://knowledge.su/v/voennaya-nauka>):

սակայն այժմ կրում է գերազանցապես կոլեկտիվ բնույթ՝ ականավոր գործիչների առաջնորդությամբ: Ռազմական գիտությունը հույժ կարևոր է հատկապես փոքր, սուղ մարդկային, ֆինանսական, հումքային, տեխնիկատեխնոլոգիական ռեսուրսներ ունեցող պետությունների համար, որոնք, ձեռնամուխ լինելով ռազմական գիտության զարգացմանը, պետք է նկատի ունենան առաջին հերթին դրա պատմական զարգացման ներքին տրամաբանությունը:

3. Մեր կարծիքով՝ ՀՀ-ում կան ռազմական գիտության զարգացմանը խոչընդոտող ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներ: Այսպես. մեզանում չկա ռազմական գիտությամբ զբաղվելու ավանդույթ: Խորհրդային շրջանում, երբ Հայաստանում մեծ բարձունքների հասան գիտությունն ու կրթությունը, չկար ոչ մի ռազմագիտական կամ ռազմակրթական հաստատություն:
4. Տարածաշրջանում տիրող ռազմաքաղաքական իրադրությունը հրամայաբար պահանջում էր գործնական կադրերի հրատապ պատրաստում: Արտասահմանյան ռազմակրթական հիմնարկներում սովորելու գործուղվող կադրերի ընտրազատման չափանիշները միշտ չէ, որ բավարար աստիճանի խիստ էին, կադրերն էլ պատրաստվում էին ըստ առանձին ճյուղերի, իսկ ռազմական գործի փիլիսոփայության գծով մասնագիտացողներ չկային: Եվ ընդհանրապես ՀՀ-ում գիտակրթական համակարգը ներկայումս գտնվում է որոնումների և կայացման փուլում, ուստի ռազմագիտության զարգացման համար դեռևս չկա անհրաժեշտ գիտաճյուղային համագործակցության միջավայր:

ИНСТИТУЦИОНАЛЬНОЕ ЗНАЧЕНИЕ И ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ВОЕННОЙ НАУКИ С ВОЗМОЖНОСТЬЮ ЛОКАЛИЗАЦИИ МИРОВОГО ОПЫТА

*Т. Т. КОЧАРЯН, полковник, доктор политических наук, профессор, заместитель
Начальника по образованию и науке НИУО МО РА – Начальник ИНСИ*

РЕЗЮМЕ

Войны всегда сопутствовали истории человечества. Причем по мере накопления опыта в войнах и развития оружия возрастали также боевые возможности, усложнялись применяемые в бою приемы и способы его ведения. Опыт и знания передавались из поколения в поколение, что позволяло не только фиксировать, но и анализировать, – а следовательно – и теоретически развивать используемые идеи, тем самым способствуя формированию военной науки.

В статье на основе анализа мирового исторического опыта представлены фундаментальные характеристики, цели и задачи, а также тенденции развития военной науки, что позволило прийти к следующим выводам:

1. военная наука как самостоятельная и фактически состоявшаяся наука имеет собственную институциональную составляющую: собственный объект и предмет исследования, структуру, особые методы и критерии определения истины, теории и принципы, специфический понятийно-терминологический аппарат;

2. военная наука, как и любая научная дисциплина, долгое время развивалась благодаря усилиям талантливых индивидуумов, однако в настоящее время носит главным образом коллективный характер, где в качестве лидеров выступают творческие личности с глубокими знаниями и стратегическим мышлением. Военная наука крайне важна в особенности для малых, имеющих ограниченные человеческие, финансовые, сырьевые, технико-технологические ресурсы государств, которые, приступая к развитию военной науки, должны учитывать в первую очередь внутреннюю логику ее исторического развития;

3. в Армении существуют как объективные, так и субъективные причины, препятствующие развитию военной науки. В первую очередь, это отсутствие у нас сложившихся традиций в области военной науки. Даже в советское время, когда наука и образование в Армении находились на высоком уровне, здесь не было ни одного военно-научного или военно-учебного заведения;

4. существующая в регионе военно-политическая обстановка диктует императивную необходимость безотлагательной подготовки практических кадров. Критерии их отбора для командирования на учебу в зарубежные военно-учебные заведения не всегда были достаточно действенными, а подготовка офицерских кадров преследовала сугубо практические цели, в частности, не было специализирующихся по философии военного дела. И поскольку в настоящее время научно-образовательная система в РА находится на этапе поисков и становления, то для развития военной науки нет необходимой среды междисциплинарного взаимодействия и сотрудничества.

THE INSTITUTIONAL VALUE AND DEVELOPMENT TENDENCIES OF THE MILITARY SCIENCE WITH THE POSSIBILITIES OF LOCALIZING THE WORLD'S EXPERIENCE

T. T. KOCHARYAN, Colonel, Doctor of Political Science, Professor, Deputy Head in Education and Research NDRU, MOD, RA – Head of INSS

SUMMARY

Wars have always accompanied the history of mankind. Moreover, along with the cumulation of experience in wars and development of weapons there also increased the combat possibilities, and the techniques

used in battles and ways of fighting got complicated. The experience and knowledge were passed down through generations this enabling not only to record, but also to analyze and thus theoretically develop the used ideas, which contributed to the shaping of the military science.

On the basis of the world's historical experience the article presents fundamental features, goals and tasks, as well as development tendencies of the military science, this drawing the following conclusions:

1. the military science as an independent and substantially succeeded science has its own institutional component: its own object and research subject, structure, special methods and criteria for determining the truth, theories and tenets, specific conceptual and terminological apparatus;

2. for a long time the military science, like any other branch of science, has been developing due to the efforts of talented individuals, though today this mainly has a collective nature, when creative people with deep knowledge and strategic thinking step up as leaders. The military science is critically important for minor states, having limited human, financial, stock, technical and technological resources, which, must take into account first of all the inner logic of its historical development when taking up the development of the military science;

3. in the RA there are both objective and subjective reasons hindering the development of the military science. Foremost, it is the absence of any established military science traditions with us. Even in the Soviet period when the science and education were at a high level in Armenia, there weren't any military-scientific or military-educational establishments here;

4. the current military-political situation in the region dictates the imperative need for urgent training of practical personnel. The criteria of their selection for training secondment in foreign military-educational establishments have not always been effective enough, while the officer training has pursued purely practical goals, in particular – there was no one specializing in the philosophy of military affairs. Hence, at present the RA scientific-educational system is at the stage of quests and formation, there is no necessary environment of interdisciplinary interaction and cooperation for the development of the military science.

ՀԻՄՆԱՐԱՐ ՈՒ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՐԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՓՈՐՁԸ*

*Ա. Հ. ՄԵԼԻՔՅԱՆ, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի առաջատար գիտաշխատող, ԵՊՀ պրոֆեսոր,
«Հայկական բանակ» ՌԳՀ Գևտն անդամ,
Դ. Ս. ԶԻՆԻՆԳԱՐՅԱՆ, գնդապետ (պաշտոնաթող), «Հայկական բանակ» ՌԳՀ գլխավոր խմբագիր*

«Առանց հիմնարար գիտության չի լինի նաև այն գիտությունը, որի նվաճումները հնարավոր է կիրառել»¹:

Ներածություն

Իր ծագման օրվանից մարդկությունը մշտապես բախվել է ինչպես օբյեկտիվ (պայմանավորված բնության երևույթներով և պրոցեսներով), այնպես էլ սուբյեկտիվ (մարդածին) բնույթի տարատեսակ մարտահրավերների և սպառնալիքների հետ: Ձգտելով իրեն պաշտպանելու դրանց քայքայիչ ազդեցությունից՝ մարդը փորձել է հայտնաբերել կամ մշակել դրանց չեզոքացման կամ առնվազն ներգործության մակարդակի նվազեցման եղանակներ ու միջոցներ, ինչի համար անհրաժեշտ էր ըմբռնել դրանց էությունը: Այդպես հետզհետե կուտակվում էին գիտելիքներ բնության երևույթների, ինչպես նաև պաշտպանության արդյունավետ միջոցների ստեղծման եղանակների մասին: Կուտակման որոշ փուլում անհրաժեշտ դարձավ այդ գիտելիքների համակարգումը: Այդպիսով ձևավորվեցին գիտելիքների երկու ենթահամակարգ. մեկը՝ բնական երևույթների ու պրոցեսների բնույթի և օրինաչափությունների, դրանց փոխազդեցության ու փոխգործության մասին, մյուսը՝ տարբեր միջոցների պատրաստման եղանակների ու սկզբունքների մասին: Ըստ այդմ գիտելիքների համակարգը բաժանվեց այսպես կոչված հիմնարար ու կիրառական գիտելիքների, ընդամին դա տեղի ունեցավ դեռ անտիկ շրջանում²:



* Հոդվածն ստացվել է 25.03.2024՝ ռուսերեն լեզվով և անցել գիտական գրախոսություն ՀՀ-ում և ՌԴ-ում: Հոդվածի գրախոսությունները ստացվել են ՌԴ-ից՝ 03.05.2024 և ՀՀ-ից՝ 14.05.2024:

¹ Այս և հաջորդ հղումները տես ռուսերեն տեքստից հետո: – *խմբ.*:

Մարդկության զարգացմանը և գիտելիքների կուտակմանը զուգընթաց ընդլայնվում և առանձին՝ ավելի նեղ, գիտելիքների էր տրոհվում գիտական համակարգը, ինչը հեշտացնում էր ճանաչողությունը դրանցից յուրաքանչ-յուրի ոլորտում: Սակայն մասնավոր գիտության հետազոտական դաշտի նման նեղացումն ստեղծում էր նաև պրոբլեմներ, քանի որ բազմաթիվ երևույթներ չէին «տեղավորվում» մի գիտաճյուղի սահմաններում՝ գտնվելով երկու և ավելի մասնավոր գիտությունների հարակից շրջաններում: Այդ դեպքում կատարվում էին այսպես կոչված «միջգիտաճյուղային» հետազոտություններ տարբեր գիտությունների կցակետում:

Համապատասխանաբար առաջ եկան գիտության դասակարգման համակարգեր ըստ տարբեր չափանիշների ու հատկանիշների: Որպես արդյունք՝ ստեղծվեցին տրոհման զանազան համակարգեր՝ բնական, ճշգրիտ, հումանիտար (հասարակական, սոցիալական) և տեխնիկական գիտություններ, հիմնարար ու կիրառական գիտություններ և այլն³: Սույն հետազոտության համար հետաքրքրություն է ներկայացնում տրոհումը հիմնարար և կիրառական գիտությունների:

1. Հիմնարար ու կիրառական գիտությունները և դրանց գլխավոր բնութագրիչները

Գիտական գրականության մեջ հաճախ կարելի է հանդիպել «հիմնարար գիտություն», «հիմնարար հետազոտություններ», «կիրառական գիտություններ», «կիրառական հետազոտություններ» արտահայտությունների (տերմինների):

ՅՈՒՆԵՍԿՕ-ն հիմնարար (բազային) հետազոտությունների շարքն է դասում այն հետազոտությունները, որոնք նպաստում են բնության ընդհանուր օրենքների հայտնաբերմանը, իրականության երևույթների, պրոցեսների և օբյեկտների միջև փոխազդեցության մեխանիզմների պարզորոշմանը: Դրանց հիմնական գործառնություն է ճանաչողական գործունեությունը, հիմնական խնդիրը՝ բնության ընդհանուր ու կայուն օրենքների և օրինաչափությունների մասին կոնկրետ պատկերացումների ձևավորումը, իսկ բնորոշ հատկանիշներն են հայեցակարգային համապիտանիությունը և տարածաժամանակային ընդհանրությունը⁴:

Մակդոնալդի՝ Տարրական մասնիկների աստղաֆիզիկայի ինստիտուտի սահմանմամբ՝ «Հիմնարար գիտությունը այն գիտելիքների և տեղեկության որոնումն է, որոնք ծառայում են բնական երևույթների ավելի լավ ըմբռնմանն ու բացատրությանը»⁵: Իսկ ՈՂ ԿՎԿ սահմանմամբ՝ «Հիմնարար հետազոտությունների շարքն են դասվում այն փորձարարական ու տեսական հետազոտությունները, որոնք նպատակաուղղված են նոր գիտելիքների ստացմանը՝ առանց այդ գիտելիքների օգտագործման հետ կապված որևէ կոնկրետ նպատակի»⁶:

Ինչպես երևում է բերված սահմանումներից, հիմնարար գիտությունը «գիտություն է հանուն գիտության», «մաքուր գիտություն»: Հիմնարար հետազոտությունների հենքի վրա զարգանում են կիրառական գիտություններ

ըը՝ առաջընթաց ապահովելով պետության սոցիալ-տնտեսական վիճակում, նպաստելով իր զարգացման համար անվտանգ միջավայր ստեղծելու կարողությունների մեծացմանը, այսինքն՝ առաջին հերթին բարձրացնելով պաշտպանունակության մակարդակը⁷, բարելավելով մարդու և հասարակության կենսագործունեության պայմանները և արդյունավետությունը: Ընդամիսն հարկ է նշել, որ կիրառական հետազոտությունների արդյունքների ներդրումը դրական էֆեկտի հետ մեկտեղ հաճախ առաջ է բերում բնամիջավայրային խախտումների տեսքով բացասական արգասիքներ, իսկ երբեմն անգամ ամբողջ մարդկության համար մահացու սպառնալիքներ*:

Այս առիթով «Բել Թելեֆոն Լաբորատորիա» ընկերության Տնօրենների խորհրդի նախագահ Ֆրենկ Ջուետը դեռ 1941 թ. գրել է. «Պետք է ունենալ գիտության ոլորտում խոր և լայն գիտելիքներ, որպեսզի հասկանալ, որ այսօր տեղի ունեցող կազմակերպված զանգվածային սպանող, որը մենք անվանում ենք պատերազմ, գլխավորապես կիրառական գիտության պետական օգտահանում է՝ կատարված հսկայական մասշտաբներով և ընդամենը մեկ որոշակի նպատակով: Ավելին. առանց երկար-բարակ մտածելու կարելի է հասկանալ, որ այն աշխարհում, որին կիրառական գիտությունը հասցրել է մի կետի, որտեղ ժամանակն ու տարածությունն ըստ էության վերացել են ինչպես հաղորդակցությունների, այնպես էլ փոխադրամիջոցների համար, պետությունը գործնականում զրկվել է իրեն պաշտպանելու մեթոդի ընտրության հնարավորությունից»⁸:

Նշանակալից հայտնագործություններն ու գյուտերը, որոնք կատարվել են մեկուկես դարից նվազ ժամանակահատվածում, թվում է, թե վկայում են, որ գիտության բնագավառում շեշտը տեղափոխվում է դեպի կիրառական գիտությունների գերակայություն, իսկ հիմնարար գիտությունները, որոնցից տացք կարելի է սպասել մեկ-երկու տասնամյակ հետո, չունեն առանձնակի պահանջարկ: Սակայն դա այդպես չէ:

Որպես ապացույց նշենք հետևյալ փաստը: Գիտատեխնիկական ու պաշտպանական ոլորտներում աշխարհի անառարկելի առաջատար ԱՄՆ-ի Պաշտպանության գերատեսչության համակարգում ստեղծվել էր փորձագետների խումբ, որը պետք է ուսումնասիրեր հիմնարար պաշտպանական հետազոտությունների երկարաժամկետ պլանավորման ու ռազմավարության մշակման ոլորտում ստեղծված իրավիճակը: Հանձնաժողովը նշել էր, որ.

- ռազմական ոլորտում մրցունակության մեծացման համար անհրաժեշտ գիտական կադրային ռեսուրսներով Պաշտպանության գերատեսչությունն ապահովելու համար անհրաժեշտ է ոչ թե ենթադրել, թե դա կարող է տեղի ունենալ ինքն իրեն՝ առանց նպատակաուղղված ջանքերի գործադրման, այլ ձեռնարկել ավելի փոխհամաձայնեցված գործողություններ,

* Որպես օրինակ հիշատակենք ատոմի կառուցվածքի և նյութի ու էներգիայի կապի հարցերի լուծումը, որը տվեց հիմնարար գիտությունը (ատոմային ֆիզիկան) և որի հիման վրա ստեղծվեցին միջուկային ռեակտորը, իսկ հետո նաև ատոմային ռումբը (տես *Ա. Հ. Մելիքյան*, Էյնշտեյնը և որոշ ժամանակակից տեխնոլոգիաներ: «ՀԲ», 2022, հմ. 4):

- համաշխարհային հիմնարար հետազոտություններում արտասահմանյան երկրների մասնաբաժնի աճումը գիտության համընդհանրացմանն ուղղված ընդհանուր միտումների վկայությունն է և կապված է տեխնոլոգիական հանկարծակիության առջև հայտնվելու ռիսկերի մեծացման հետ, ինչի հաղթահարման համար անհրաժեշտ է, որ Պաշտպանության գերատեսչությունը միշտ գտնվի հիմնարար հետազոտությունների առաջավոր բնագծերում այն բնագավառներում, որոնք համապատասխանում են նրա մասնագիտական շահերին⁹:

Շարունակելով հիմնարար և կիրառական գիտությունների կապի մասին դատողությունները՝ նպատակահարմար ենք համարում նշել այս երկու տեսակի հետազոտություններով զբաղվող գիտնականների մոտեցումներում եղած կարևոր տարբերությունը: Հիմնարար գիտությունների ոլորտում հետազոտողներին առաջին հերթին հետաքրքրում է իրենց ստացած արդյունքների վերացարկված ճշմարիտությունը, մինչդեռ կիրառական հետազոտություններով զբաղվող գիտնականների մտահոգությունն է իրենց ստացած արգասիքների կիրառելիության արդյունավետությունը: Ընդսմին հազվադեպ կարելի է հանդիպել գիտնականների, որոնք ունակ են հաջողությամբ աշխատելու այս երկու ոլորտում էլ, քանի որ նրանք ունենում են միանգամայն տարբեր «իմացաբանական կողմնորոշիչներ ու նորմեր»¹⁰: Սակայն կիրառական հետազոտությունները կարող են արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ գոյություն ունի հիմնարար գիտության ոլորտում ստեղծված հիմք, ինչպես նաև այդ արդյունքների իրացման համար արտադրական բազա¹¹:

Միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել, որ հիմնարար գիտության զարգացումը ոչ միայն տեղի է ունենում շնորհիվ մարդու հետաքրքրասիրության, այլև դրա վրա հսկայական դրական ազդեցություն է գործում կիրառական գիտության, մասնավորապես՝ գիտական սարքաշինության զարգացումը: Հիմնարար և կիրառական գիտությունների փոխկապվածությունը կարելի է նկարագրել հետևյալ կերպ: Հիմնարար գիտությունը ձևակերպում է բնության նոր օրենքներն ու սկզբունքները: Կիրառական գիտությունը դրանց հիման վրա սարքում է չափումների և դիտումների համար գործիքներ: Գրեթե միշտ այդ գործիքները լինում են ավելի կատարյալ ու հնարավորություն են տալիս չափումներն ու դիտումները կատարելու ավելի մեծ ճշգրտությամբ: Դա իր հերթին հանգեցնում է բնության նախկինում հաստատված օրինաչափությունների վերանայման: Այսպիսով՝ հիմնարար և կիրառական գիտությունները քայլում են «ուս ուսի»՝ նպաստելով միմյանց զարգացմանը:

Կա ևս մի կարևոր հանգամանք, որը նույնպես շեշտում է հիմնարար և կիրառական գիտությունների միջև տարբերությունը: Եթե կիրառական գիտությունների զարգացման խթանը հասարակության պահանջմունքներն են, ապա հիմնարար գիտությունների զարգացման օրենքները դեռևս հայտնի չեն:

Ավարտելով սույն համառոտ քննարկումը՝ ցանկանում ենք մեկ անգամ ևս շեշտել պետության սոցիալ-տնտեսական ու պաշտպանատեխնիկական զարգացման համար հիմնարար գիտահետազոտական աշխատանքների

կարևորությունը: Ինչպես ցույց է տալիս համաշխարհային պրակտիկան, կան զգալի թվով պետություններ, որոնք հետ են մնում տեխնիկատեխնոլոգիական առումով, հատկապես՝ եթե ունեն սահմանափակ մարդկային ու ֆինանսատնտեսական ռեսուրսներ, հրաժարվում են հիմնարար հետազոտությունների կատարումից (ֆինանսավորումից)՝ այն ցնորական հույսով, թե կարող են իրենց հետ մնալը կրճատել կիրառական հետազոտությունների խթանմամբ: Սակայն հազվագյուտ բացառություններով նրանք չեն հասնում ցանկալի արդյունքների, քանի որ կիրառական աշխատանքների հաջող կատարման համար անհրաժեշտ է հիմնարար գիտությունների ոլորտում ստեղծել հիմնարար գիտելիքների հարուստ պաշար:

2. Հիմնարար ու կիրառական գիտություններ և ՌԱՀ

Այսօր աշխարհի և ոչ մի պետություն չի կարող հույս ունենալ հաջողությամբ պաշտպանելու իր շահերը, եթե նրա պաշտպանական համակարգը խարսխված չէ ամենաարդիական, առաջին հերթին՝ թվային, տեխնոլոգիաների, հիմնարար ու կիրառական գիտությունների այլ նվաճումների վրա: «Զորորդ արդյունաբերական հեղափոխության» դարաշրջանում պայքարի վարման եղանակներում տեղի ունեցան որակական փոփոխություններ, որոնք պայմանավորված են օգտագործվող միջոցների՝ սպառազինության, ռազմական և հատուկ տեխնիկայի (ՄՌՀՏ)՝ որպես հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում տեղի ունեցած գիտատեխնիկական առաջընթացի արգասիքի աննախադեպ հնարավորություններով: Ակնհայտ է, որ առաջընթացի ապահովումը հնարավոր է «միայն, եթե առկա է ժամանակակից գիտատեխնոլոգիական ներուժ, որի հիմքը հիմնարար ու որոնողական գիտական հետազոտությունների հատվածն է»¹²: Ընդամին բուռն տեմպերով տեղի է ունենում նոր գիտելիքների կուտակում, որոնց ծավալը կրկնապատկվում է յուրաքանչյուր 10 տարին մեկ, իսկ կենսաբանությունում՝ 5, միջուկային ֆիզիկայում և տիեզերագնացությունում՝ 3, գենետիկայում՝ 2 տարին մեկ¹³: Հիմնարար գիտությունների արդյունքների ներդրման ժամկետները ևս կրճատվում են 20-25-ից մինչև 10 տարի՝ հաշվված դրանց մեկնարկից մինչև արտադրությունում յուրացում¹⁴: Դրա հետ մեկտեղ դիտվում է արտադրության ռազմական ու քաղաքացիական հատվածների միջև տեղեկույթի փոխանակման վեկտորի փոփոխման հետաքրքրական միտում: Եթե առաջներում բոլոր գիտական նվաճումները ներդրվում էին առաջին հերթին ռազմական արտադրության մեջ և միայն մի որոշ ժամանակ անց (իրենց նորամուծական կարգավիճակը կորցնելուց հետո) փոխանցվում էին քաղաքացիականին, ապա հիմա տվյալ գործընթացը հակադարձվել է, և տեղի է ունեցել գիտական արտադրանքի առևտրայնացում:

«Հիմնարար գիտություններ–կիրառական գիտություններ–ինժեներատեխնիկական մշակումներ–արտադրություն» շղթայի կազմակերպման փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ամեն մի երկրում այն ունի իր յուրահատկությունը՝ պայմանավորված տվյալ պահին այս շղթայի օղակների

ձևավորված բնույթով, այդտեղ գործող գիտական և արտադրական ավանդույթներով, բնակչության ազգային կերպարանքով և այլ գործոններով, ինչպիսիք են, օրինակ, որոշակի տեսակի բնական ռեսուրսների առկայությունը, ներմուծման–արտահանման տրանսպորտային և այլ հնարավորություններ, գործող կրթական հաստատությունների ուղղվածությունը և այլն: Սակայն ընդհանուր են հետևյալ սկզբունքները.

- օտար համակարգի ուղղակի պատճենումը *անթույլատրելի է*, քանի որ չունի համապատասխան գիտական հիմքեր և անխուսափելիորեն ձախողված է,
- արդյունավետ է միայն տվյալ շղթայի յուրաքանչյուր օղակի հաշվեկշռված զարգացումը:

Այժմ փորձենք ներկայացնել պաշտպանական արդյունաբերական հավաիրի (ՊԱՀ) վիճակը որոշ առաջատար պետություններում:

Սակայն նախապես նշենք, որ աշխարհի մեծաթիվ տարածաշրջաններում տիրող ռազմաքաղաքական ու ռազմական իրադրությունը ՆԱՏՕ-ի անդամներին ստիպել է վերանայել իրենց ազգային ռազմական կազմակերպվածքի ու ռազմական շինարարության վերաբերյալ տեսակետները: Դրան համապատասխան՝ նրանք մեծացնում են ռազմական ծախսերը՝ ձգտելով արդիականացնելու իրենց զինված ուժերը, առաջին հերթին՝ դրանք ժամանակակից ՍՈՏ-ով սպառազինելու առումով¹⁵:

Գերմանիա: Գերմանիայի դաշնային կառավարությունը 2022 թ. որդեգրեց ռազմական բյուջեի մեծացման ուղեգիծ, դրա հետ մեկտեղ ստեղծվեց նաև 100 մլրդ եվրոյի պահուստային ֆոնդ¹⁶: Դրա հիմնական պատճառն այն մտահոգությունն էր, որ Գերմանիայի համար գերակա ոլորտներում ՍՈՏ ներմուծումը (հիմնականում՝ ԱՄՆ-ից) ընդլայնվում է, ինչն ուղեկցվում է ազգային արդյունաբերության առաջավարական դիրքերի կորստով:

Բյուջեն բաշխվում է հետևյալ կերպ. անձնակազմի և սպասարկող աշխատակազմի պահման վրա ծախսեր՝ 41,8 %, տեխնիկայի շահագործում և սպասարկում՝ 37,1 %, տեխնիկայի և սարքավորանքի գնում՝ 18,6 % (այդ թվում՝ ԳՀՓԿԱ-ներին հատկացում՝ 3,5 %), ենթակառուցվածքների պահպանման և ստեղծման վրա ծախսեր՝ 2,5 %:

ՌԱՀ-ի կազմի մեջ մտնող ընկերությունները հիմնականում միջին դասի են, ընդ որում՝ բավականաչափ հատվածայնացած: Կան և խոշոր կորպորացիաներ, ինչպիսիք են «Աերոբուս Գրուպ», «Դայլ ԲԳՏ Դիֆենս», «Տիսեն Կրուպ Մարին Սիստեմս», «Կրաուզ Մաֆայ Ռեզման», «Ռայնմետալ» և այլ կորպորացիաներ, որոնցում միավորված են միջին ու փոքր մասնավոր ընկերություններ: Ընդ որում՝ պետության մասնաբաժինը չի գերազանցում 5 %-ը:

ՌԱՀ-ում ծառայում են ավելի քան 55 հազ. մարդ, իսկ տարեկան շրջանառությունը կազմում է 11,2 մլրդ եվրո: Դրանք ըստ ճյուղերի բաշխվում են հետևյալ կերպ. *օդատիեզերական հատված*՝ 22,9 հազ. մարդ և 7,1 մլրդ եվրո, *հրետանահրաձգային հատված և մարտապաշարի արտադրություն*՝ 10,8 հազ. մարդ և 2,4 մլրդ եվրո, *նավաշինություն*՝ 9,8 հազ. մարդ և 1,1 մլրդ

Եվրո, *գրահատանկային հատված*¹² հազ. մարդ և 0,721 մլրդ եվրո: Միևնույն ժամանակ, նշվում է, որ, օրինակ, Բունդեսվերի սարքավորանքի, տեղեկատվական տեխնոլոգիաների և շահագործմանն աջակցության գծով դաշնային վարչությունում (*Bundesamt für Ausrüstung, Informationstechnik und Nutzung der Bundeswehr*) կա ավելի քան 2000 թափուր տեղ, ընդ որում, այդ թիվն անընդհատ կաճի՝ ներկայիս աշխատողների թռչակի անցնելու համեմատ:

Լուրջ քննարկումների և մտահոգության առարկա է դարձել Բունդեսվերի ֆինանսավորման պրոբլեմը 100 մլրդ եվրո պահուստային ֆոնդի սպառումից հետո: Ամենայն հավանականությամբ այլ հատուկ ֆոնդ չի լինի, քանի որ ո՛չ երկու կառավարող կուսակցությունների դաշնադրությունում, ո՛չ ընդդիմադիր ԲՂՄ/ԲՍՄ-ում այս օրինագծի կողմնակիցները մեծամասնություն չեն կազմում¹⁷: Մինչդեռ ՀՆԱ-ից պաշտպանության վրա ծախսերի երկտոկոսանոց շեմը, որը պահանջում է ՆԱՏՕ-ն, 2024 թ. գերազանցվեց (2,1 %) միայն շնորհիվ հատուկ պահուստային ֆոնդի (72 մլրդ եվրոն կազմվեց բյուջեական միջոցներից հատկացված 51,95 մլրդ եվրոյից և պահուստային ֆոնդից տրամադրված 20 մլրդ եվրոյից), որը, ինչպես արդեն նշվել էր, շուտով կսպառվի, իսկ նոր ֆոնդի հույսեր գործնականում չկան¹⁸:

Չինաստան: 1990-ական թվականներին Չինաստանը ձեռնարկեց ռազմական արդյունաբերական կառուցվածքի մի շարք կարևոր բարեփոխումներ¹⁹: Այդ բարեփոխումների շնորհիվ կտրուկ աճեցին ԶՃՀ ՁՈՒ-ի արդիականացման տեմպերը, տարատեսակվեց բիզնեսը և մեծացավ պաշտպանական արդյունաբերության կայունությունը, արագ առաջընթաց ապահովվեց երկակի նախանշանակման առանցքային տեխնոլոգիաների ոլորտում, մասնավորապես՝ այն տեխնոլոգիաների, որոնք կապված են ատոմային էներգետիկայի, նավաշինության և տիեզերական գործունեության հետ:

Ռազմական արդյունաբերության ուղղորդումը դրվեց Պաշտպանական գիտության, տեխնիկայի և պաշտպանական արդյունաբերության կոմիտեի վրա, որը 2008 թ. վերակազմակերպվեց Արդյունաբերության և տեղեկութավորման նախարարության կազմում ստեղծված Պաշտպանական գիտության, տեխնիկայի և պաշտպանական արդյունաբերության գծով պետական վարչության: Ներկայումս այդ վարչությունը պաշտպանական արդյունաբերության համար մշակում է միասնական ստանդարտներ ու նորմեր, տրամադրում է հավաստագրեր ու թույլտվություններ, վերահսկում է պետական առաջադրանքների կատարումը, ինչպես նաև Պետական տիեզերական վարչությունը, որը պատասխանատու է տիեզերական ծրագրի իրականացման համար: Վարչությանը ենթակա են նաև մի քանի խոշոր տեխնիկական բուհեր (Պեկինի, Հարբինի, Հյուսիսարևմտյան և այլ պոլիտեխնիկական համալսարաններ), որոնք վճռական դեր են խաղում ի շահ ամբողջ ճյուղի կադրերի պատրաստման և հետազոտությունների կատարման գործում:

Ռազմական արդյունաբերության կառավարման և ռազմական պատվերների տեղաբաշխման հստակ տարանջատումը նպաստեց այն բանին, որ արմատախիլ արվեց ՍՌՏ կանխավ անորակ նմուշների առաջնղման արտավոր պրակտիկան, ինչպես նաև էապես սահմանափակվեցին ՌԱՀ-ի լոբբինգի հնարավորությունները:

Միևնույն ժամանակ, «ՌԷՆԴ» կորպորացիայի մասնագետները նշում են Կառավարության, գիտական կազմակերպությունների և պաշտպանական ոլորտի արդյունաբերական ձեռնարկությունների միջև փոխկապվածության թուլությունը:

Այդուհանդերձ Չինաստանը լավ մտածված կոնվերսիայի և բարենպաստ արտաքին հանգամանքների վարպետ օգտագործման շնորհիվ կարողացավ մտնել լավագույն ՌԱՀ-ն ունեցող հինգ պետությունների խումբ:

Ռուսաստան: 2008–2012 թթ. Պաշտպանության նախկին նախարար Ա. Սերդյուկովի իրագործած ռազմական, այդ թվում՝ ՌԴ պաշտպանական արդյունաբերության ոլորտում, ծախսողված բարեփոխումներից հետո փորձեր են արվում ՊԱՀ-ը հասցնելու պետության բավարար պաշտպանունակությունն ապահովելու և սպառազինությունների միջազգային շուկայում առաջատար դիրքեր զբաղեցնելու համար անհրաժեշտ մակարդակի²⁰: ՊԱՀ-ի ոլորտում կատարվեց ձեռնարկությունների համակարգի վերակառուցավորում: Մասնավորապես՝ 2007 թ. համալիրի ակտիվների համախմբման միջոցով ստեղծվեց խոշոր «ՌՌՍԵԿ» կորպորացիան: Դրա խնդիրներն են բարձր տեխնոլոգիական արտադրանքի մշակումն ու թողարկումը, ռազմական արտադրանքի արտահանման խթանումը: Ներկայումս Ռուսաստանում գործում են պաշտպանական-արդյունաբերական համալիրի այնպիսի հզոր կազմակերպություններ, ինչպիսիք են «Ալմազ-Անտեյ» ՕՏՊ կոնցեռն» ԲԸ-ն, որը մասնագիտացած է ՀՕՊ-ի և ՀՀՊ միջոցների թողարկման գծով, «Միավորված նավաշինական կորպորացիան» և այլն:

ՊԱՀ-ի ձեռնարկությունների յուրահատուկ տարբերակիչ առանձնահատկություններն են թողարկվող արտադրանքի, ինչպես նաև կադրային, հումքային և նյութական ռեսուրսների որակին ներկայացվող խիստ պահանջները, սպառման շուկայում մենաշնորհացումը, քանի որ շուկայի պահանջարկի 90 %-ը պայմանավորված է պետպատվերով, ներդրումային ծրագրերի երկարաժամկետությունն ու կապիտալատարությունը, ինչը պահանջում է հսկայական ֆինանսների գործարկում, արտադրողների բարձր աստիճանի մասնագիտացումն ու մենաշնորհացումը, ինչը և՛ առավելություն է, և՛ թերություն, քանի որ պահանջում է արտադրության վերակողմնորոշման և նոր արտադրանքի յուրացման ժամանակ զգալի ֆինանսական, կադրային (ներառյալ՝ կառավարչական), նյութական ու տեղեկատվական ռեսուրսների ծախսում, գաղտնիության հատուկ պահանջները, ինչը սահմանափակում է կոոպերացիայի և տեխնոլոգիաների փոխանցման հնարավորությունները²¹:

Վերջին տարիներին էապես աճել են ՊԱՀ-ում կատարվող պետական ներդրումները, ինչը հանգեցրել է նորամուծական լուծումների ու մշակումների հիմքի վրա արտադրության տեխնիկատեխնոլոգիական մակարդակի

բարձրացմանը և ճյուղի ծեռնարկությունների տնտեսական աճի համար նախադրյալների ստեղծմանը: Սակայն արդյունավետության հասնելու սկզբունքը չպահպանելու դեպքում նման մասշտաբային ֆինանսավորումը կարող է հանգեցնել տնտեսության ռազմականացման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով²²:

Ընդամին անգամ նշվում է, որ Ռուսաստանում նախկին ԽՍՀՄ-ի համեմատությամբ «կտրուկ նվազել է հիմնարար, կանխատեսումային և կիրառական հետազոտություններով զբաղվող շնորհալի գիտական աշխատողների թվաքանակը և ԳՀՎ-ների (գիտահետազոտական կազմակերպություններ.– *հեղ.*) թիվը, որոնց մեծ մասը դանդաղորեն է վերագինում իր նյութատեխնիկական բազան, ինչի հետևանքով վերջին տարիներին ՌԴ-ում կատարվում են միայն մի քանի տասնյակ ԳՀՓՎԱ-ներ՝ ԽՍՀՄ-ում պլանային կերպով կատարվող ավելի քան 3000-ի դիմաց²³: Ընդամին մի շարք պատճառներից առանձնացվում են երկուսը. ռազմատեխնիկական գիտության անբավարար ռազմավարական պլանավորումը, ինչն անդրադառնում է ՍՌՀՏ նմուշների մշակման վրա, և գիտատեխնիկական պաշարի ստեղծմանն ուղղված աշխատանքների ծավալների ու գիտատեխնիկական մակարդակի նվազումը²⁴:

Միևնույն ժամանակ, մեր կարծիքով, նման գնահատականը ավելի շատ արտահայտում է Ռուսաստանի հետագա ճակատագրով քննադատների մտահոգությունները, քանի որ ռուսաստանյան ՊԱՀ-ը հաջողությամբ է հաղթահարում ՌԻկրահայում զինված հակամարտության ընթացքում ծավալված մասշտաբային տեխնիկատեխնոլոգիական դիմակայությունը:

ԱՄՆ: Երկրի առաջին խորհրդային արբանյակի արձակումն ԱՄՆ-ին ստիպեց լրջորեն վերանայել պետության վերաբերմունքը գիտությանն ու կրթությանը, առաջին հերթին՝ կտրուկ մեծացնել դրանց ֆինանսավորումը և վերակազմակերպել այդ սոցիալական ոլորտների կառավարման կառուցվածքը: Այսպես. 1958 թ. Պաշտպանության քարտուղարությանը (Պաշտպանական գերատեսչություն) առընթեր ստեղծվեց Հեռանկարային (առաջավոր) պաշտպանական հետազոտական նախագծերի գործակալություն (ՀՊՀՆԳ, *Defense Advanced Research Project Agency, DARPA*): ԱՄՆ-ում ՀՊՀՆԳ-ն չունի նմանակներ*, միայն վերջին ժամանակներս նման կազմակերպություններ ստեղծվել են Ֆրանսիայում (*Agence nationale de la recherche, ANR*), Գերմանիայում (*Deutsches Zentrum für Luft- und Raumfahrt, DLR*), Հնդկաստանում (*Defence Research and Development Organisation, DRDO*):

Իր գոյության ավելի քան 60 տարվա ընթացքում գործակալությունը հասել է զգալի հաջողությունների, որոնց շարքը, առաջին հերթին, պետք է դասել համացանցը, ՀԴՀ-ն (*GPS*), «Ստելս» տեխնոլոգիաները, միկրոէլեկտրոնային համակարգերը (*MEMS*), ածխածնային թելքերի բաղադրատարրերը: Գործակալության նորամուծությունները կիրառվել են սմարտ-

* Որոշ ռուսաստանյան գիտնականների կարծիքով՝ դրա նախատիպն է եղել ԽՍՀՄ ԳԱ, այնուհետև ՌԳԱ-ի կիրառական պրոբլեմներով բաժանմունքը (տես Վ. Ե. Ֆորտով, Ի. Ա. Կայյան, Նշ. աշխ.):

ֆոններում, մարզական գույքում և սարքերում, վերջույթների պրոտեզներում: Բացի այդ, գործակալությունը կարևոր դեր է խաղացել բազմամիլիարդանոց արդյունաբերության ստեղծման գործում²⁵: Եվ այս ամենը ձեռք է բերվել շնորհիվ գործողությունների սրընթացության (ծրագրերի իրագործումը տևում է 3–5 տարի), հաստիքների սահմանափակության (մոտ 120 մշտական աշխատող) և համեստ բյուջեի (տարեկան մոտ 3 մլրդ դոլար մոտավորապես 200 նախագծերի համար): Սովորական արագագործությունը, արդյունավետությունը և արդյունարարությունը գործակալությանը դարձնում են «հատուկ ուժերի» (*“Special Forces”*) օրինակելի նորամուծական մոդել:

Ի դեպ՝ ԽՍՀՄ-ում և ԱՄՆ-ում գիտության զարգացման դինամիկայի տարբերությունը լավ է բացատրել Լանդաուի աշակերտ հայտնի տեսաբան-ֆիզիկոս Մարկ Ազբելը: Նրա կարծիքով՝ խորհրդային գիտնականների համար գիտությունը արվեստի նման մի զբաղմունք է, իսկ ամերիկացի գիտնականների համար՝ առաջին հերթին բիզնեսի տեսակներից մեկը²⁶:

Սույն մոդելը բաղկացած է 3 տարրերից՝ հեռու գնացող նպատակներ, նախագծերի իրագործման ժամանակավոր թիմեր (խմբեր), անկախություն: Վերջին տարրը ինքնավարությունն է, որն իրագործվում է նախագծի ընտրության և կատարման, դրա համար աշխատակազմի հավաքագրման, լուծումների ու ռիսկերի ընդունման ժամանակ, քանի որ կառույցի հետազոտական բյուջեի մեծ մասը տրամադրվում է նորամուծական մշակումներին, որոնք կարևոր են ընկերությունների ու ֆիրմաների մրցունակության պահպանման համար:

ՀՊՀՆԳ-ում կիրառվում են նախագծերի ընտրազատման երկու մեթոդ: Առաջինը այն բանի գիտակցումն է, որ տվյալ գիտական ոլորտը հասել է որոշ բեկումնային կետի և հնարավորություն է տալիս երբեմն նորովի լուծելու կարևոր խնդիր: Երկրորդն սպառողների այնպիսի պահանջարկի հայտնաբերումն է, որը հնարավոր չէ բավարարել գոյություն ունեցող տեխնոլոգիաներով: Ընդամին նախագծի պորտֆելը պետք է պարունակի երկու այնպիսի նախաձեռնությունների ռացիոնալ հաշվեկշիռ, որոնք կենտրոնացած են գիտական առաջընթացի շնորհիվ ստեղծված նոր հնարավորությունների ու նոր գիտական մշակումների օգտագործման միջոցով հին խնդիրների լուծման վրա:

Նախագծի իրագործման ընթացքում դրա ղեկավարը, որը բոլորից լավ է պատկերացնում իր նախագծի տեխնիկական առանձնահատկությունները, իրավունք է ստանում ընտրություն կատարելու ռեսուրսների վերաբաշխման, առաջընթացի հեռանկարների գնահատման և գործունեության ընթացքում նախագծի նպատակների վերանայման հարցերում:

ՀՊՀՆԳ-ն չունի լաբորատորիաներ ու հետազոտական կենտրոններ և այս ասպարեզում համագործակցում է տարբեր ընկերությունների, ֆիրմաների, պետական ու մասնավոր, առաջին հերթին՝ համալսարանական, լաբորատորիաների հետ՝ ֆինանսավորելով իրենց կազմակերպություններում աշխատող գիտնականների և ինժեներների հետազոտությունները:

Գործակալության հաջողությունները, որոնք ձեռք են բերվել ԱՄՆ-ի գիտատեխնիկական ու տեխնոլոգիական գերազանցության ապահովման գործում, վկայում են, որ ճեղքումնային նորամուծական նախագծերը կարող են իրագործվել հետևողականորեն, էապես ավելի կարճ ժամկետներում և, ի դեպ, ձկուն ու տեղաշարժուն փոքր կազմակերպությունների ջանքերով:

Ինչպես «Մեծ մարտահրավեր» (*“The Grand Challenge”*) նորամուծական մրցույթը գնահատելիս նշում են ամերիկյան մասնագետները, գործակալությունը այն անցկացնում էր որոշակի նպատակով, որ «ամերիկյան հնարամտությունը խթանի այնպիսի ինքնուրույն ապարատների արտադրության տեխնոլոգիաների մշակումը արագացնելու համար, որոնք հնարավոր լինելու օգտագործել ռազմական կարիքները բավարարելու համար»²⁷:

Ֆրանսիա: Վերջին տարիներին Ֆրանսիան ակտիվորեն զարգացնում է իր պաշտպանական արդյունաբերությունը՝ այն նպատակաուղղելով ՍՈՏ արտահանմանը²⁸: Սույն գործընթացի հիմքում դրված են այնպիսի ղեկավար փաստաթղթեր, ինչպիսիք են 2013 թ. «Պաշտպանության և ազգային անվտանգության հարցերով սպիտակ գիրքը» և «2019–2025 թթ. Ջինված ուժերի շինարարության և տեխնիկական զինման ծրագիրը»:

Ֆրանսիայի ղեկավարության քաղաքականությունը, սկսած Մազարինիի և Կոլբերի դարաշրջանից, կողմնորոշված է դեպի պետության կարիքների բավարարում, հատկապես՝ պաշտպանության բնագավառում, ի հաշիվ հայրենական արտադրության, ինչը ներկայումս հնարավոր չէ առանց գիտական հետազոտությունների ու մշակումների: Ըստ այդմ Ֆրանսիան 2017 թ. հետազոտությունների ու մշակումների նպատակով կատարված ներդրումների ծավալով աշխարհում զբաղեցրել է 5-րդ տեղը (47 մլրդ, ՀՆԱ-ի 2,24 %), արտոնագրային հայտերի թվով՝ 4-րդ տեղը (դրանց ընդհանուր թվի 6,7 %), Նոբելյան մրցանակակիրների թվով (61 մարդ)՝ 4-րդ տեղը, ինչպես նաև արտահանման ծավալներում բարձր տեխնոլոգիական արտադրանքի բաժնեմասով ԵՄ-ում 4-րդ տեղը (20,5 %): Միևնույն ժամանակ, մի շարք փորձագետների կարծիքով՝ Ֆրանսիայի գիտական համալիրում կան մի շարք լուրջ պրոբլեմներ, ինչպիսիք են՝ գիտական հետազոտությունների բարձր աստիճանի բյուրոկրատացումը, գիտական ընկերակցության կտրվածությունը առևտրային ընկերություններից, տնտեսական պրակտիկայի մեջ ԳՀԱ-ների արդյունքների ներդրման անբավարար ակտիվությունը և այլն:

ԳՀԱ-ների պետական ֆինանսավորումն ապահովելու և փոքր ու միջին բիզնեսի՝ զերակա ուղղություններով հետազոտություններ կատարող ընկերությունների ու ձեռնարկությունների սուբսիդավորման նպատակով ստեղծվել են մի քանի գործակալություններ: Դրանցից արդեն հիշատակված ԱՀԳ-ն (*“ANR”*), որը հիմնադրվել է 2005 թ., սլյալ ոլորտի առանցքային դերակատարներից մեկն է: Նրա խնդիրն է «բարձրագույն կրթության ու հետազոտությունների բնագավառում խոշոր պետական ներդրումային ծրագրերի կառավարումը և իրացման վերահսկումը»:

Ֆրանսիայի ՊԱՀ-ի հիմքն են ավելի քան 170 ձեռնարկություններ, որոնցից 30-ն առաջատար են: Վերջիններիս բաժնեմասը կազմում է բոլոր արտադրական հզորությունների ավելի քան 70 %-ը²⁹: Ընկերությունների խոշոր միավորումներին հատուկ է խառը ձևի սեփականությունը՝ պետության մասնակցությամբ: Վերջինս, տնօրինելով բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթը, ընդունում է ռազմավարորեն կարևոր որոշումներ և արգելանքներ դնում այն որոշումների վրա, որոնք կարող են վտանգել իր շահերը:

Ռազմական արտադրության գերակա ուղղություններ են հայտարարվել հետևյալ ճյուղերը. *հրթիռատիեզերական* («Էրբյուս դեֆենս էնդ սպեյս» ընկերության «Սպեյս սիստեմ» ստորաբաժանումները և «ՄԲԴԱ» կորպորացիայի «ՄԵԴԱ-Ֆրանս»-ը), *նավաշինական* («Նատալ Գրուպ»), *ավիացիոն* («Դասո ավիասիոն», «Սաֆրան», «Էրբյուս Գրուպ»), *գրահատանկային* («Իվեկո-Ֆրանս», «Վարտսիլա», «Մոտյոդ Բոդուեն»), *հրետանահրաձգային* («Նեքստեր», «Տալես» կորպորացիայի «ՏԴԱ արմաման»), *ռադիոէլեկտրոնային* («Տալես», «Սաֆրան», «Էրբյուս Գրուպ»):

Ամփոփում

Եվ այսպես. աշխարհի առաջատար պետությունների պաշտպանության համակարգի ռազմատեխնիկական ապահովման կազմակերպման առաջավոր միջազգային փորձի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հանգելու հետևյալ եզրակացությունների.

- հիմնարար գիտությունը մնում է որպես այն գլխավոր հենքը, որի վրա խարսխվում է առաջատար պետությունների պաշտպանության ժամանակակից համակարգերի ռազմատեխնիկական ապահովումը,
- հիմնարար հետազոտությունների արդյունքները կիրառական գիտությունների մշակումների կերպափոխելու ժամկետները և դրա հետ մեկտեղ «հիմնարար հետազոտություններ – կիրառական հետազոտություններ – գիտատեխնիկական մշակումներ – արտադրություն – ընդունում շահագործման» փուլաշրջանի տևողությունը մշտապես կրճատվում են,
- ամեն մի պետություն յուրովի է կազմակերպում «ՍՌՀՏ մշակում – արտադրության մեջ ներդրում» կապը՝ պայմանավորված իր գիտատեխնիկական և արտադրատեխնիկական զարգացման աստիճանով, ՍՌՀՏ տեսակով, մարդկային, նյութական, ֆինանսական և այլ ռեսուրսների առկայությամբ, ազգային գիտաարտադրական ավանդույթներով և այլ ազգային առանձնահատկություններով, ինչի հետևանքով օտար մեթոդների, գործընթացների և ընթացակարգերի ուղղակի պատճենումը հղի է լուրջ ձախողումներով,
- պետության պաշտպանունակության գիտատեխնիկական ապահովման զարգացման գործում հաջողության անվերապահ գրավականն է գիտական, գիտատեխնիկական և արտադրական (այդ թվում՝ կառավարչական) կադրերի պատրաստման արդյունավետ կրթական համակարգը:

Թարգմանությունը՝ Դավիթ Չիլինգարյանի

ФУНДАМЕНТАЛЬНАЯ И ПРИКЛАДНАЯ НАУКИ И ИХ РОЛЬ В ОБЕСПЕЧЕНИИ ОБОРОНОСПОСОБНОСТИ ГОСУДАРСТВА: ЗАРУБЕЖНЫЙ ОПЫТ*

А. О. МЕЛИКЯН, член-корреспондент НАН РА, доктор физико-математических наук, ведущий научный сотрудник Института прикладных проблем физики НАН РА, профессор ЕГУ, член НКС ВНЖ «Айкакан банак»; Д. С. ЧИЛИНГАРЯН, полковник в отставке, главный редактор ВНЖ «Айкакан банак»

«Без фундаментальной науки не будет и науки, достижения которой можно применять».¹

Введение

Со дня своего зарождения человечество постоянно сталкивалось с разнообразными вызовами и угрозами как объективного (обусловленного природными явлениями и процессами), так и субъективного (антропогенного) характера. В стремлении защитить себя от их разрушительного воздействия человек пытался обнаружить или самому выработать способы и средства нейтрализации или, по крайней мере, снижения уровня их влияния, для чего надо было познать их суть. Так постепенно накапливались знания о природе явлений, а также о способах создания эффективных средств защиты. На каком-то этапе накопления стало необходимо систематизировать эти знания. Таким образом, сформировались две подсистемы знаний – о природе и закономерностях естественных явлений и процессов, их взаимовлиянии и взаимодействии и о способах и принципах изготовления различных средств. Тем самым, система знаний подразделилась на так называемые фундаментальные и прикладные знания, причем произошло это еще в эпоху античности².

С развитием человечества и накоплением знаний научная система расширялась и дробилась на отдельные, более узкие науки, что облегчало познание в сфере каждой из них. Однако подобное сужение исследовательского поля частной науки создавало и проблемы, поскольку многие явления не укладывались в рамки одной дисциплины, находясь в смежных областях двух и более частных наук. В последнем случае проводились так называемые «междисциплинарные» исследования на стыке различных наук.

* Статья поступила в редакцию 25.03.2024 на русском языке и прошла научное рецензирование в РА и РФ. Рецензии на статью были получены из РФ – 03.05.2024 и из РА – 14.05.2024.

Возникли системы классификации науки по различным критериям и признакам. В результате появились системы разбиения на естественные, точные, гуманитарные (общественные, социальные) и технические; на фундаментальные и прикладные, и т. д.³. Для данного исследования представляет интерес разделение наук на фундаментальные и прикладные.

1. Фундаментальная и прикладная науки и их основные характеристики

В научной литературе часто можно встретить выражения (термины) «фундаментальная наука», «фундаментальные исследования», «прикладные науки», «прикладные исследования».

К фундаментальным (базовым) исследованиям ЮНЕСКО относит те, которые способствуют открытию общих законов природы, уяснению механизмов взаимодействия между явлениями, процессами и объектами реальной действительности. Их основной функцией является познавательная деятельность, основной задачей – формирование конкретных представлений о законах и закономерностях природы, обладающих общностью и стабильностью, а характерными признаками – концептуальная универсальность и пространственно-временная общность⁴.

По определению Института астрофизики элементарных частиц Мак-Дональда: «Фундаментальная наука – это поиск знаний и информации для лучшего понимания и объяснения природных явлений»⁵. По определению же ЦСУ РФ: «К фундаментальным исследованиям относятся экспериментальные и теоретические исследования, направленные на получение новых знаний без какой-либо конкретной цели, связанной с использованием этих знаний»⁶.

Как видно из приведенных определений, фундаментальная наука является «наукой ради науки», «чистой наукой». На основе (фундаменте) фундаментальных исследований развиваются прикладные науки, обеспечивая прогресс как в социально-экономическом состоянии государства, так и в его возможностях обеспечить безопасную среду для развития, т. е., в первую очередь, повысить уровень обороноспособности⁷, способствуя улучшению условий и повышению эффективности жизнедеятельности человека и общества. При этом следует отметить, что внедрение результатов прикладных исследований, наряду с положительным, нередко создает и отрицательный эффект в виде экологических нарушений, а порой даже смертельные угрозы для всего человечества.

* В качестве примера приведем решение фундаментальной наукой (атомной физикой) вопроса о строении атома и связи вещества и энергии, на основе которого были созданы ядерный реактор, а затем и атомная бомба (см. А. О. Меликян. Эйнштейн и некоторые современные технологии (на арм. яз.). «Айкакан банак», 2022, № 4).

По этому поводу еще в 1941 г. Председатель Совета директоров «Белл Телефон Лабораторис» Фрэнк Джуэтт писал: «Не нужно обладать глубокими и обширными познаниями в области науки, чтобы понять, что сегодняшняя организация массового убийства, называемого нами войной, является главным образом государственной утилизацией прикладной науки в огромных масштабах и с одной единственной определенной целью. Более того, без долгих раздумий можно понять, что в мире, сведенном прикладной наукой до такой точки, в которой время и пространство, по сути, исчезли как для коммуникаций, так и для транспорта, у государства практически не остается выбора метода защиты самого себя»⁸.

Значительные открытия и изобретения за период менее, чем в полтора века, казалось бы, свидетельствуют о том, что в области науки акцент смещается в сторону приоритетности прикладных наук, а фундаментальные науки, отдачи от которых можно ожидать лишь 1-2 десятка лет спустя, не пользуются особым спросом. Но это далеко не так. В качестве доказательства приведем следующий факт. В системе Департамента обороны США, являющихся неоспоримым мировым лидером в научно-технической и оборонной сферах, была создана экспертная группа по изучению состояния дел в области планирования и разработки стратегии долгосрочных фундаментальных оборонных исследований, которая отметила, что:

- требуются более согласованные действия по обеспечению Департамента обороны необходимыми для повышения конкурентоспособности в военной сфере научными кадровыми ресурсами, а не полагать, что это может произойти само по себе, без приложения целенаправленных усилий;
- возрастающая доля зарубежных стран в мировых фундаментальных исследованиях является свидетельством общей тенденции к глобализации науки и связана с повышением рисков оказаться перед технологической внезапностью, для преодоления которой необходимо, чтобы Департамент обороны находился на передовых рубежах фундаментальных исследований в областях, которые соответствуют его специфическим интересам⁹.

Продолжая рассуждения о связи фундаментальной и прикладной наук, считаем целесообразным отметить разницу в подходах ученых, занимающихся этими двумя типами исследований. Изыскателей в области фундаментальных наук, в первую очередь, интересует абстрагированная истинность полученных ими результатов, в то время как ученых, занимающихся прикладными исследованиями, – эффективность применимости их результатов. Причем редко встречаются ученые, которые могут успешно работать в обеих сферах, поскольку у них совершенно разные «гносеологические ориентиры и нормы»¹⁰.

Однако прикладные исследования могут быть эффективными только в том случае, когда существуют соответствующий базис в сфере фундаментальной науки, а также производственная база для реализации их результатов¹¹.

Однако следует учесть, что развитие фундаментальной науки имеет место не только благодаря любознательности человека, но и огромное положительное влияние на этот процесс оказывает развитие прикладной науки, в частности научного приборостроения. Взаимосвязь фундаментальной и прикладной наук можно описать следующим образом. Фундаментальная наука устанавливает новые законы природы и принципы. Прикладная наука на их основе конструирует приборы для измерений и наблюдений. Почти всегда эти приборы оказываются более совершенными и позволяют проводить измерения и наблюдения с большей точностью. Это в свою очередь приводит к пересмотру ранее установленных закономерностей в природе. Таким образом, фундаментальная и прикладная науки шагают нога в ногу, способствуя развитию друг друга.

Есть еще одно важное обстоятельство, подчеркивающее разницу между фундаментальными и прикладными науками. Если для развития прикладных наук стимулом служат потребности общества, то законы развития фундаментальных наук пока неизвестны.

В завершение данного краткого обсуждения хотим еще раз подчеркнуть важность фундаментальных научно-исследовательских работ для обеспечения социально-экономического и оборонно-технического развития государства. Как показывает мировая практика, многие государства, отстающие в технико-технологическом плане, в особенности – с ограниченными людскими и финансово-экономическими ресурсами, отказываются от проведения (финансирования) фундаментальных исследований в призрачной надежде сократить свое отставание путем стимулирования прикладных исследований. Однако за редкими исключениями они не добиваются желаемых результатов, поскольку для успешного осуществления прикладных работ нужен солидный задел в сфере фундаментальных наук.

2. Фундаментальная и прикладная науки и ВПК

Сегодня ни одно государство в мире не может рассчитывать на успех в защите своих интересов, если его оборонная система не базируется на самых современных, в первую очередь цифровых, технологиях, иных достижениях фундаментальных и прикладных наук. В эпоху «четвертой промышленной революции» произошли качественные изменения в способах ведения борьбы, обусловленные беспрецедентными возможностями используемых средств – вооружения,

военной и специальной техники (ВВСТ) – как следствия научно-технического прогресса во всех сферах жизнедеятельности общества. Очевидно, что обеспечение прогресса возможно «только при наличии собственного современного научно-технологического потенциала, основу которого составляет сектор фундаментальных и поисковых научных исследований»¹². При этом бурными темпами происходит накопление новых знаний, объем которых удваивается каждые 10 лет, а в биологии – 5 лет, в ядерной физике и космонавтике – 3 года, в генетике – 2 года¹³. Сокращаются и сроки внедрения результатов фундаментальных исследований от их начала до освоения производства с 20–25 лет до 10-и¹⁴. Вместе с тем, наблюдается любопытная тенденция к изменению вектора передачи информации между военным и гражданским секторами производства. Если раньше все новейшие научные достижения внедрялись в первую очередь в военное производство и лишь спустя некоторое время (после утери ими инновационного статуса) передавались в гражданскую, то сейчас данный процесс реверсировал – и произошла коммерциализация научных продуктов.

Изучение опыта организации цепочки «фундаментальные науки – прикладные науки – инженерно-технические разработки – производство» показывает, что в каждой стране она имеет свою специфику, обусловленную характером сформировавшихся на данный момент звеньев этой цепи, бытующих здесь научных и производственных традиций, национального облика населения и других факторов, как, например, наличие природных ресурсов определенного типа, транспортные и иные возможности импорта – экспорта, направленность функционирующих образовательных учреждений и т. д. Однако общими являются следующие принципы:

- прямое копирование чужой системы *недопустимо*, поскольку не имеет соответствующего научного фундамента и неизбежно провально;
- эффективно только сбалансированное развитие каждого звена данной цепочки.

Теперь попробуем представить состояние оборонно-промышленного комплекса в некоторых ведущих государствах.

Однако прежде отметим, что царящая во многих регионах мира военно-политическая и военная обстановка заставила членов НАТО пересмотреть свои взгляды на национальную военную организацию и военное строительство. В соответствии с этим они увеличивают военные расходы, стремясь модернизировать свои вооруженные силы, в первую очередь, в плане их оснащения современными ВВТ¹⁵.

Германия. Федеральное правительство Германии взяло в 2022 г. курс на увеличение военного бюджета, к тому же был создан резерв-

ный фонд в 100 млрд евро¹⁶. Основной причиной является тревога по поводу вызывает проблема расширения импорта ВВТ (в основном из США) в приоритетных для Германии сферах с потерей национальной промышленностью своих лидирующих позиций.

Бюджет распределяется следующим образом: затраты на содержание личного состава и персонала – 41,8 %, эксплуатация и обслуживание техники – 37,1 %, покупка техники и оборудования – 18,6 % (в том числе, на НИОКР – 3,5 %), расходы на поддержание и создание инфраструктуры – 2,5 %.

Входящие в ВПК компании в основном «среднего класса», причем достаточно фрагментированы. Есть и крупные корпорации, как «Аэробус Групп», «Дайл БГТ Дифенс», «Тисен Крупп Марин Системс», «Краус Мафай Вегман», «Райнметалл», в которых объединены средние и малые частные компании. Причем доля государства не превышает 5 %.

В ВПК служат более 55 тыс. человек, а годового оборот составляет 11,2 млрд евро, распределение которых по отраслям имеет следующий вид: *аэрокосмический сектор* – 22,9 тыс. человек и 7,1 млрд евро; *артиллерийско-стрелковый сектор и производство боеприпасов* – 10,8 тыс. чел. и 2,4 млрд евро; *судостроение* – 9,8 тыс. чел. и 1,1 млрд евро; *бронетанковый сектор* – 12 тыс. чел. и 0,721 млрд евро. В то же время отмечается, что, например, в Федеральном управлении по оборудованию, информационным технологиям и поддержке эксплуатации Бундесвера (*Bundesamt für Ausrüstung, Informationstechnik und Nutzung der Bundeswehr*) более 2 тысяч вакантных мест, причем их число будет все возрастать по мере ухода на пенсию его нынешних сотрудников.

Предметом серьезных дискуссий и озабоченности стала проблема финансирования Бундесвера после того, как будет исчерпан резервный фонд в 100 млрд евро. Вероятно, другого специального фонда не будет, так как ни в коалиции двух правящих партий, ни в оппозиционной ХДС/ХСС нет большинства за этот законопроект¹⁷. А между тем требуемый НАТО двухпроцентный порог для затрат на оборону от ВВП в 2024 г. достигнут (2,1 %) лишь благодаря специальному резервному фонду (72 млрд евро складываются из 51,95 млрд евро из бюджетных средств и 20 млрд евро из резервного фонда), который, как уже отмечалось, будет вскоре исчерпан, а надежды на новый практически нет¹⁸.

Кумай. В 1990-ых гг. Китай провел ряд важных реформ структуры военной промышленности¹⁹. В результате этих реформ резко ускорились темпы модернизации ВС КНР, был диверсифицирован бизнес и повысилась устойчивость оборонной промышленности, был обеспечен быстрый прогресс в сфере ключевых технологий двойного назначения, в частности, связанных с атомной энергетикой, судостроением и космической деятельностью.

Курация военной промышленности была возложена на Комитет по оборонной науке, технике и оборонной промышленности, в 2008 г. реорганизованный в Государственное управление по оборонной науке, технике и оборонной промышленности в составе Министерства промышленности и информатизации. Сейчас Управление вырабатывает единые стандарты и нормы для оборонной промышленности, выдает лицензии и разрешения, контролирует выполнение правительственных заданий, а также Государственное космическое управление, отвечающее за реализацию космической программы. В подчинении Управления находятся несколько крупных технических вузов (Пекинский, Харбинский, Северо-Западный и другие политехнические университеты), которые играют решающую роль в подготовке кадров и проведении исследований в интересах всей отрасли.

Четкое разделение управления военной промышленностью и размещения военных заказов способствовало искоренению порочной практики проталкивания заведомо некачественных образцов ВВТ, а также существенному ограничению возможности лоббизма со стороны ОПК в ущерб интересам военных.

В то же время специалисты корпорации «РЭНД» отмечают слабую взаимосвязь между Правительством, научными организациями и промышленными предприятиями оборонной сферы.

Тем не менее Китай, благодаря продуманной конверсии и умелому использованию благоприятных внешних обстоятельств, сумел войти в пятерку государств, обладающих лучшим ВПК.

Россия. После провальной военной реформы, в том числе в оборонной промышленности РФ, осуществленной в 2008–2012 гг. бывшим Министром обороны А. Сердюковым, предпринимаются попытки поднять ее до уровня, необходимого для обеспечения достаточной обороноспособности государства и выхода на лидирующие позиции на международном рынке вооружений²⁰.

В сфере ОПК произошла реструктуризация системы предприятий. В частности, в 2007 г. путем консолидации активов ОПК была создана крупная корпорация «Ростек». Ее задачами являются разработка и выпуск высокотехнологической продукции, стимулирование экспорта военной продукции. В настоящее время в России функционируют такие мощные организации ОПК, как АО «Концерн ВКО «Алмаз – Антей»», специализирующееся на выпуске средств ПВО и ПРО, «Объединенная судостроительная корпорация» и др.

Отличительными специфическими особенностями предприятий ОПК являются: повышенные требования, предъявляемые к качеству выпускаемой продукции, а также к квалификации кадровых, сырьевых и материальных ресурсов; монополизация на потребительском рынке, поскольку 90 % потребностей рынка определяется госзаказом; долго-

срочность и капиталоемкость инвестиционных проектов, что требует задействования огромных финансовых ресурсов; высокая степень специализации и монополизации производителей, что является как преимуществом, так и недостатком, так как требует затраты значительных финансовых, кадровых (в том числе управленческих), материальных и информационных ресурсов при перепрофилировании производства и освоении новой продукции; особые требования секретности, что ограничивает возможность кооперации и передачи технологий²¹.

В последние годы существенно возросли государственные инвестиции в ОПК, что привело к повышению технико-технологического уровня производства на базе инновационных решений и разработок и созданию предпосылок для экономического роста предприятий отрасли. Однако при отсутствии соблюдения принципа достижения эффективности такое масштабное финансирование может привести к милитаризации экономики со всеми негативными последствиями²².

При этом даже отмечается, что в России по сравнению с бывшим СССР произошло «резкое сокращение числа одаренных научных сотрудников, занятых фундаментальными, прогнозными и прикладными исследованиями, и НИО (научно-исследовательские организации – *авторы*), в большинстве своем медленно переоснащающих свою материально-техническую базу», в результате чего в РФ в последние годы выполняется лишь несколько десятков НИОКР против свыше 3 тыс. планомерно выполнявшихся в СССР²³. Причем из множества причин выделяются две: неудовлетворительное стратегическое планирование военно-технической науки, сказывающееся на разработке образцов ВВСТ, и снижение объемов и научно-технического уровня работ по созданию научно-технического задела²⁴.

В то же время, по нашему мнению, подобная оценка скорее следствие озабоченности критиков дальнейшей судьбой России, поскольку российский ОПК успешно выдерживает масштабное технико-технологическое противостояние в процессе вооруженного конфликта на Украине.

США. Запуск первого советского спутника Земли заставил США всерьез пересмотреть отношение государства к науке и образованию, в первую очередь резко увеличить их финансирование и реорганизовать структуру управления этими социальными сферами. Так, в 1958 г. при Секретариате по обороне (Департамент обороны) было создано Управление (агентство) по перспективным (продвинутым) оборонным исследовательским проектам (УПОИП; *Defense Advanced Research Project Agency, DARPA*). УПОИП не имеет в США аналогов*, лишь в последнее

* По мнению некоторых российских и советских ученых, прототипом для УПОИП послужила секция по прикладным проблемам (СПП) АН СССР, а затем РАН (см. В. Е. Фортвов, И. А. Каляев. Ук. соч.).

время похожие организации созданы во Франции (*Agence nationale de la recherche, ANR*), Германии (*Deutsches Zentrum für Luft- und Raumfahrt, DLR*), Индии (*Defence Research and Development Organisation, DRDO*).

За более чем 60 лет своего существования УПОИП добилось значительных успехов, к которым, в первую очередь, следует отнести Интернет, СГП (*GPS*), технологии «Стелс», микроэлектромеханические системы (*MEMS*), компоненты углеродных волокон. Инновации Управления нашли применение в смартфонах, спортивных инвентаре и устройствах, протезах конечностей. Кроме того, УПОИП сыграло важную роль в создании многомиллиардной промышленности²⁵.

И все это достигнуто в условиях стремительности действий (осуществление программ длится 3–5 лет), немногочисленности штатов (около 120 постоянных сотрудников) и скромного бюджета (около 3 млрд долларов в год на приблизительно 200 проектов). Благодаря своему обычному быстродействию, эффективности и результативности УПОИП представляет собой образцовую инновационную модель «специальных сил» (*“Special Forces”*).

Между прочим, разницу динамики развития науки в СССР и в США хорошо объяснил ученик Ландау, известный физик-теоретик Марк Азбель. По его мнению, для советских ученых наука – занятие, схожее с искусством, в то время как для американских ученых это, в первую очередь, разновидность бизнеса²⁶.

Эта модель состоит из 3 элементов: далеко идущие цели, временные команды (группы) осуществления проектов, независимость. Последний элемент заключается в автономности при выборе и осуществлении проекта, наборе для этого персонала, принятии решений и рисков, поскольку большая часть корпоративного исследовательского бюджета выделяется на инновационные разработки, представляющие важность для сохранения конкурентоспособности компаний и фирм.

В УПОИП применяются два метода отбора проектов. Первый – это осознание того, что данная научная область достигла некоей переломной точки и позволяет решить подчас по-новому некую важную задачу. Второй – выявление такой потребности потребителей, которую невозможно удовлетворить существующими технологиями. При этом портфель проекта должен содержать рациональный баланс двух таких инициатив, которые сфокусированы на решении старых задач посредством использования новых возможностей и новых научных разработок, являющихся следствием научного прогресса.

В процессе осуществления проекта его руководитель, который лучше всех представляет технические особенности своего проекта, получает право делать выбор в вопросах перераспределения ресурсов, оценки перспективы прогресса и пересмотра в процессе деятельности целей проекта.

УПОИП не имеет собственных лабораторий и исследовательских центров и в этом плане сотрудничает с различными компаниями, фирмами, государственными и частными, в первую очередь – университетскими, лабораториями, финансируя исследовательскую деятельность изыскателей, работающих в своих организациях.

Успехи, достигнутые УПОИП в плане обеспечения научно-технического и технологического превосходства США, свидетельствуют о том, что прорывные инновационные проекты могут быть осуществлены последовательно, в значительно более короткие сроки и к тому же небольшими гибкими и маневренными организациями.

Как отмечают американские специалисты, оценивая инновационный конкурс «Великий вызов» (*“The Grand Challenge”*), УПОИП проводило его в целях «стимулирования американской изобретательности на ускорение разработки технологий производства автономных аппаратов, которые можно было бы использовать для военных нужд»²⁷.

Франция. В последнее время Франция активно развивает свою оборонную промышленность с нацелом на экспорт ВВТ²⁸. В основу этого процесса заложены такие руководящие документы, как «Белая книга по вопросам обороны и национальной безопасности» 2013 г. и «Программа строительства и технического оснащения Вооруженных сил на 2019–2025 годы».

Политика руководства Франции, начиная с эпохи Мазарини и Кольбера, была ориентирована на удовлетворение нужд государства, в особенности в области обороны, за счет отечественного производства, которое в настоящее время невозможно без научных исследований и разработок.

В соответствии с этим Франция в 2017 г. по объему инвестиций в исследования и разработки заняла 5-е место в мире (47 млрд евро, 2,24 % от ВВП), 4-е место по числу патентных заявок (6,7 % от их общего числа) и по числу Нобелевских лауреатов (61 чел.), 4-е место в ЕС по доле высокотехнологичной продукции в экспорте (20,5 %). В то же время, по мнению ряда экспертов, в научном комплексе Франции существует ряд серьезных проблем, как то: высокая степень бюрократизации научных исследований, оторванность научного сообщества от коммерческих компаний, недостаточная активность внедрения результатов НИР в экономическую практику и т. д.

В целях обеспечения государственного финансирования НИР и субсидирования компаний и предприятий малого и среднего бизнеса, проводящих исследования по приоритетным направлениям, действуют несколько агентств. Уже упомянутое «НИА» (*“ANR”*), созданное в 2005 г., является одним из ключевых акторов в данной сфере, задача которого состоит в «управлении крупными государственными инвестиционными программами в области высшего образования и исследований и контроле за их реализацией».

Основу ОПК Франции составляют более 170 предприятий, около 30 из которых являются ведущими. На их долю приходится не менее 70 % всех производственных мощностей²⁹.

Крупным объединениям компаний присуща смешанная форма собственности с участием государства, которое, владея контрольным пакетом акций, принимает стратегически важные решения и накладывает вето на те, которые могут представлять опасность для интересов государства.

Приоритетными отраслями военного производства объявлены: *ракетно-космическая* (подразделения «Спейс систем» компании «Эрбюс дефенс энд спейс» и «МЕДА-Франс» корпорации «МБДА»); *судо-строение* («Натал групп»); *авиационная* («Дассо авиасьон», «Сафран», «Эрбюс групп»); *бронетанковая* («Ивеко-Франс», «Вартсила», «Мотер Бодуэн», «Некстер»); *артиллерийско-стрелковая* («Некстер», «ТДА армаман» корпорации «Талес»); *радиоэлектронная* («Талес», «Сафран», «Эрбюс групп»).

Заключение

Таким образом, изучение передового международного опыта организации военно-технического обеспечения системы обороны ведущих государств мира позволяет сделать следующие выводы:

- фундаментальная наука остается тем основополагающим фундаментом, на котором зиждется военно-техническое обеспечение современных систем обороны ведущих государств;
- сроки трансформации результатов фундаментальных исследований в разработки прикладных наук и вместе с этим длительность цикла «фундаментальные исследования – прикладные исследования – научно-технические разработки – производство – прием в эксплуатацию» постоянно сокращаются;
- каждое государство по-своему организует связь «разработка ВВСТ – внедрение в производство» в зависимости от степени своего научно-технического и производственно-технического развития, вида ВВСТ, наличия человеческих, материальных, финансовых и других ресурсов, национальных научно-производственных традиций и других национальных особенностей, вследствие чего простое копирование чужих методов, процессов и процедур чревато серьезными провалами;
- непреложным условием достижения успеха в развитии научно-технического обеспечения обороноспособности государства является эффективная образовательная система подготовки научных, научно-технических и производственных (в т. ч. управленческих) кадров.

¹ Stu / См. «Доклад ЮНЕСКО по науке: на пути к 2030 году». Издательство ЮНЕСКО, 2016, с. 30 (https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000235406_rus/PDF/235406rus.pdf.multi).

² Stu / См. *В. П. Котенко*. Наука XXI века: фундаментальная или прикладная (или технонаука)? «Дискурс», 2016, № 1 (<https://discourse.elpub.ru/jour/article/view/4/4>).

³ Stu / См. *В. Дедова*. Классификация наук. Номотетические и идиографические науки В. Виндельбанда. Науки о природе и науки о культуре Г. Риккерта. «Zaochnik.com» (<https://zaochnik.com/spravochnik/filosofija/sotsialnaja-filosofija/klassifikatsija-nauk/>).

⁴ Stu / См. «Проблемы современной фундаментальной науки». Учебное пособие. Под ред. Л. В. Черкесовой. М., 2016, с. 6 (https://s.monographies.ru/doc/2016/04/file_571ca18096176.pdf).

⁵ Stu / См. “About Fundamental Science” (<https://mcdonaldinstitute.ca/about/fundamental-science>).

⁶ Stu / См. «Фундаментальные исследования, фундаментальная наука». «Психологос», 02.10.2022 (<https://psychologos.ru/articles/view/fundamentalnye-issledovaniyazpt-fundamentalnaya-nauka>).

⁷ Stu / См. *В. Ю. Корчак, А. А. Макоско*. Роль фундаментальной науки в обеспечении обороны и безопасности Российской Федерации. «Компетентность», 2019, № 9–10 (<https://cuberleninka.ru/article/n/rol-fundamentalnoy-nauki-v-obespechenii-oborony-i-bezopasnosti-rossiyskoy-fedetatsii/viewer>).

⁸ *Frank B. Jewett*. Industrial and Scientific Research for National Defense. “Jstor”, January 1941, Vol. 19, N 2 (<https://www.jstor.org/stable/1172587>).

⁹ Stu / См. “Report of the Defense Science Board Task Force on Basic Research”. Washington, D.C., January 2012 (<https://dsb.cto.mil/reports/2010s/BasicResearch.pdf>).

¹⁰ Stu / См. *Б. И. Пружинин*. Прикладное и фундаментальное в этосе современной науки. «Философия науки и техники», вып. 11: «Этос науки на рубеже веков». М., 2005, сс. 109–120.

¹¹ Stu / См. *В. Г. Горохов*. Фундаментальные и прикладные исследования, а не фундаментальные и прикладные науки. «Эпистемология и философия науки», 2014, т. XL, № 2.

¹² Stu / См. «Доклад о состоянии фундаментальных наук в Российской Федерации в 2016 году». М., 2017, с. 6 (<https://www.ras.ru/FStorage/Download.aspx?id=8338e3bc-b6d4-45a0-b0b1-94d350d854be>).

¹³ Stu / См. *В. С. Пусько*. Взаимосвязь фундаментальных и прикладных исследований в современной науке. «Гуманитарные, социально-экономические и общественные науки», 2015, № 4.

¹⁴ Stu / См. *Г. А. Лавринов, Е. Ю. Хрусталева, А. А. Косенко, Г. В. Бабкин*. Роль фундаментальной науки в обеспечении обороноспособности государства. «Национальные интересы: приоритеты и безопасность», 2013, № 35(224) (<https://cyberleninka.ru/article/n/rol-fundamentalnoy-nauki-v-obespechenii-oboronosposobnosti-gosudarstva/viewer>).

¹⁵ ՆԱՏՕ-ի առանձին անդամների և ՌԴ ՌԱՀ-երի վերաբերյալ տես նաև / О ВПК отдельных членов НАТО и РФ также см. *Մ. Ն. Կարապետյան, Ա. Պ. Պետրոսյան*, Ռազմատեխնիկական բաղաբաղականությունը որպես ռազմական արդյունաբերության զարգացման ուղեցույց, *Մ. Н. Карапетян, А. П. Петросян*. Военно-техническая политика как ориентир развития военной промышленности (на арм. яз.). «Айкакан банак», 2022, № 2.

¹⁶ Ծարադրվում է ըստ հետևյալ հոդվածների / Излагается по статьям: *А. С. Ломакин*. Состояние и направления развития военно-промышленного комплекса ФРГ. «Научно-аналитический вестник ИЕ РАН», 2023, №1 (<https://cyberleninka.ru/article/n/sostoyanie-i-napravleniya-razvitiya-voenno-promyshlennogo-kompleksa-frg/viewer>); *М. В. Стрелец*. Военная промышленность ФРГ утрачивает позиции среди экспортеров. «Независимое военное обозрение», 17.08.2023; «Оборонная промышленность Германии поднялась после

начала СВО». «Лента.RU», 05.04.2023 (https://lenta.ru/news/2023/04/05/germany_defense_industry/).

¹⁷ Stü / См. *Alexander Budweg*. Auf der Suche nach den künftigen Milliarden. “Tagesschau”, 16.02.2024 (<https://www.tagesschau.de/inland/innenpolitik/bundeswehrfinanzierung-sondervermoeegen-schuldenbremse-haushalt-100.html>).

¹⁸ Stü / См. “Verteidigungsetat umfasst knapp 52 Milliarden Euro”. “Verteidigung”, Deutscher Bundestag (<https://www.bundestag.de/dokumente/textarchiv/2024/kw05-devertheidigung-977670>).

¹⁹ Սույն ենթաբաժնի շարադրանքի հիմքում դրված են / В основу изложения данного подраздела заложены: *В. Кашин*. Ревущие двадцатые: китайская оборонная промышленность на современном этапе (<https://russiancouncil.ru/2020s-china/>); “Assessing Systemic Strengths and Vulnerabilities of China’s Defense Industrial Base”. “RAND” corporation, 11 February 2022 (https://www.rand.org/pubs/research_reports/RRA930-1.html); *Д. А. Журенков*. Диверсификация оборонно-промышленного комплекса России и Китая: сходства и различия. «Большая Евразия: развитие, безопасность, сотрудничество», 2019, вып. 2, ч. 1 (<https://cyberleninka.ru/article/n/diversifikatsiya-oboronno-promyshlennogo-kompleksa-rossii-i-kitaya-shodstva-i-razlichiya/viewer>).

²⁰ Stü / См. «Суть военных реформ в России – план Сердюкова». «РИА Новости», 18.12.2008 (<https://ria.ru/20081218/157554452.html>); *Ч. Ч. Սելիվանով, Յ. Ղ. Դյլին*, Ռազմատեխնիկական քաղաքականության կատարելագործումը որպես պետության փաշտպանության ամրապնդման հանգուցային ուղղություն, *В. В. Селиванов, Ю. Д. Ильин*. Совершенствование военно-технической политики – ключевое направление обеспечения обороноспособности государства. «Айкакан банак», 2023, № 1.

²¹ Stü / См. *И. Р. Мязитов*. Финансовые и кадровые ресурсы ОПК как институциональной структуры экономики России. «Российское предпринимательство», 2013, № 12.

²² Stü / См. *В. Ж. Дубровский, Е. М. Иванова, Н. В. Чупракова*. Проблемы оценки эффективности деятельности предприятий ОПК. «Journal of New Economy», 2019, т. 20, № 5.

²³ Stü / См. *В. В. Селиванов, Ю. Д. Ильин*. Анализ состояния развития военно-технической науки. «Военная мысль», 2019, № 7.

²⁴ Stü / См. *В. Е. Фортов, И. А. Каляев*. Сохранить фундамент оборонной науки. «Российская академия наук», 25.06.2010 (<https://www.ras.ru/digest/showdnews.aspx?id=dec52f8d-3c3c-411b-86e4-048e8ef20e15&print=1>).

²⁵ Ենթաբաժնի շարադրված է ըստ հետևյալ հրապարակումների / Подраздел изложен на базе: *Regina E. Dugan and Kaigham S. Gabriel*. “Special Forces” Innovation: How DARPA Attacks Problems. “Harvard Business Review”, October 2013 (<https://hbr.org/2013/10/special-forces-innovation-how-darpa-attacks-problems>); “Creating Breakthrough Technologies and Capabilities for National Security”. “DARPA” (<https://www.darpa.mil>); “About DARPA”. “DARPA” (<https://www.darpa.mil/about-us/about-darpa>); *Г. А. Лавринов, Е. Ю. Хрусталева, А. А. Косенко, Г. В. Бабкин*. Ук. соч.

²⁶ Stü / См. *Марк Азбель*. Иерусалимские размышления. «Природа», 1991, № 10.

²⁷ Stü / См. “The Grand Challenge”. “DAPRA” (<https://www.darpa.mil/about-us/timeline/grand-challenge-for-autonomous-vehicles>).

²⁸ Սույն ենթաբաժնի արդյունքներն են / Источниками подраздела являются: *Д. Михайлов*. Военная промышленность Франции (2020). «Зарубежное военное обозрение», 2020, № 5; “Livre Blanc: Défense et Sécurité Nationale-2013”. Paris, 2013 (<https://ccdcoe.org/uploads/2018/10/Livre-blanc-sur-la-Defense-et-la-Securite-nationale-2013-2.pdf>); *А. А. Кравцов*. Научный комплекс и научная политика Франции в XXI в.: ключевые направления и тенденции развития. «МИР», 2018, т. 9, № 4 (<https://www.mir-nayka.com/jour/article/view/861/835>).

²⁹ Stü նաև / См. также *М. Н. Карапетян, А. П. Петросян*. Ук. соч.

FUNDAMENTAL AND APPLIED SCIENCES AND THEIR ROLE
IN ENSURING THE STATE'S DEFENSE CAPABILITY:
THE FOREIGN EXPERIENCE

A. H. MELIKYAN, Corresponding Member, NAS, RA, Doctor of Physical and Mathematical Sciences, Leading Research Fellow, Institute of Applied Problems in Physics, NAS, RA, Professor, YSU, Member, Academic-Advisory Council, "Haikakan Banak" DAJ; D. S. CHILINGARYAN, Colonel (Ret.), Editor-in Chief, "Haikakan Banak" DAJ

SUMMARY

This article is dedicated to the role of fundamental and applied sciences in strengthening the state's defense capability. The common characteristic of a fundamental science is given, its objectives and methods of achieving them are also defined. The role of an applied science in developing a fundamental science is underlined, thus making them a unified organism, the development of which underlies their interaction.

A review on the state of things in the defense-industrial sectors of economics of headmost developed states is presented. A comparison of various states' potentials in this sphere is given; the reasons and objectives of reforms in different states, as well as their results both positive and negative are discussed. In conclusion, the results of analyzing the state of things in the military-industrial sphere of the leading states in the military aspect are cited, this bringing forth the following statements.

A study on the organization of the chain *fundamental sciences – applied sciences – engineering developments – production* shows that each state has its own specificity which is conditioned by the character of the shaped by that moment links of this chain, existing scientific and manufacturing traditions, the national image of the population and other factors, like, for instance, the availability of natural resources of certain type, transportation and other capabilities of import–export, the directions of functioning educational establishments and so on. Nevertheless, the following principles are general: direct copying of someone else's system is unacceptable as it lacks corresponding scientific basis and is inevitably failing; only the balanced development of each link of the chain is effective; a purposeful training of scientific-technical and manufacturing (including managerial) personnel is necessary.

ՀՀ-ՈՒՄ ՈԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

*Լ. Թ. ԱՍԱՏՐՅԱՆ, մ.գ.դ., պրոֆեսոր, Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության
ամբիոնի պրոֆեսոր, Վ. Վ. ՄԵԼՔՈՆՅԱՆ, ավագ լեյտենանտ,
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանի հայցորդ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի գիտաուսումնական
բաժանմունքի պետ*

Ներածություն

Ամբողջ աշխարհում կրթությունը, այդ թվում՝ ռազմական կրթությունը, իրավա-ցիորեն դասվում է պետության անվտանգության ապահովման համակարգի կարևոր գործոնների շարքը: Տեղին է հիշատակել նշանավոր զորահրամանատար Զորջ Պատտոնի կարծիքը, որ պատերազմը վարում են զենքով, բայց դրանում հաղթում են մարդիկ¹: Ընդսմին պատերազմներում հատկապես կարևոր է ռազմական կրթություն ստացած մարդու դերը: Այսպես, առաջին աշխարհամարտի



հայտնի զորապետներից գեներալ Բրուսիլովը 1915 թ. ռուսական բանակի կրած անհաջողությունների ու հետագա քայքայման գլխավոր պատճառներից մեկը համարում էր այն, որ «Շարքում կադրային սպաներ... շատ քիչ կային՝ ամեն գնդի հաշվով մոտ հինգ-վեց մարդ, սպաների մնացած կազմը բաղկացած էր հապճեպ ու վատ ուսումնավարժեցված ենթասպաներից ... Հին ենթասպաներ էլ գրեթե չկային ... Պատերազմի մեկ տարվա ընթացքում ուսումնավարժեցված կանոնավոր բանակը անհետացավ, նրան փոխարինեց բանակ՝ կազմված տգետներից»²:

* Հոդվածն ստացվել է 25.03.2024: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 20.05.2024:

¹ Stu *George S. Patton, Jr.* Mechanized Forces. A Lecture Given to the Regular Officers at Fort Myer, Va., in January; at Fort Humphreys in March and to Reserve Officers at Fort Myer in August, 1933. "The Cavalry Journal", September-October 1933, Vol. XLII, N 179 (<https://mcoecbamcoepwprd01.blob.core.usgovcloudapi.net/library/CavalryArmorJournal/1930s/1933Jan-Dec.pdf>):

² *A. A. Брусиллов.* Мои воспоминания. М., 1941, с. 147 (<https://www.booksite.ru/fulltext/172775/text.pdf>).

«Հ ՋՈՒ-ի ներկայիս շինարարությունը և ըստ դրա կատարվող օպտիմալացումը որակական նոր պահանջներ են առաջադրում սպաների մասնագիտական պատրաստականության մակարդակին: Դրանք պետք է արտացոլվեն ռազմական կրթության մեջ՝ նոր մեխանիզմների մշակմամբ ու ներդրմամբ ապահովելով կրթության շարունակականությունը, արդյունավետ փոխկապվածությունը, բարձր որակը:

Ռազմական կրթության համակարգի ռազմավարական արդիականացումը, ըստ էության, գիտելիքի կառավարման մի յուրահատուկ գործընթաց է, որտեղ ռազմաուսումնական հաստատությունները կարող են առանցքային դեր խաղալ՝ դառնալով բարեփոխումների լոկոմոտիվ ու հիմնական նախածեռնող³: Ըստ էության, ռազմական կրթության արդիականացման արդյունքը պետք է լինի ինտեգրալ համակարգի ստեղծումը, որը հնարավորություն կտա ձևավորելու ոչ միայն լավ պատրաստված, ժամանակակից պատերազմավարման պահանջներին համապատասխանող մասնագետների, այլև ներդաշնակորեն զարգացած անհատականությունների, որոնք կարող են լուծել իրենց առջև ծառայող բարդ խնդիրներ:

Ռազմական կրթության յուրահատկությունը և կատարելագործման ուղիները

ՌԴ «Ռազմական հանրագիտարանային բառարանում» ռազմական կրթությունը սահմանվում է որպես զինվորական մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման գործընթաց, որն ուղեկցվում է ձեռք բերված կրթության մակարդակի արձանագրումով⁴: Արևմտյան ընկալմամբ՝ պրոֆեսիոնալ ռազմական կրթությունը ենթադրում է մասնագիտական պատրաստում՝ զինված ուժերը խաղաղ և պատերազմական ժամանակ արդյունավետորեն ղեկավարելու համար: Կրթությունը գաղափարախոսական պատրաստումից (խմբային արժեքների, ավանդույթների, դիրքորոշումների փոխանցում ու սերտացում) և ուսումնավարժեցումից (որոշակի ֆիզիկական ու մտավոր հմտությունների զարգացում) տարբերվում է այն բանով, որ ուղղված է վերացական սկզբունքների ու տեսությունների ընկալմանը և արդյունավետ մտածողության ու հաղորդակցման մոդելների զարգացմանը⁵: «Հ ՊՆ ՊԱՀՀ-ի պաշտպանական-անվտանգային տերմինների բառարանում ռազմական կրթությունը սահմանվում է որպես ռազմական ոլորտում մասնագիտական ուսուցման համակարգ. անհատի դաստիարակության և ուսուցման համակարգ՝ ի շահ անհատի, հասարակության, պետության⁶: Մասնագիտական տեսանկյունից առանցքային նշանակություն

³ Ств «Системы управления знаниями (базами знаний) – мировой опыт». «iSpring», 13.07.2016 (<https://www.ispring.ru/elearning-insights/sistemy-upravleniya-znaniyami-mirovoy-opyt/>):

⁴ Ств «Военный энциклопедический словарь». М., 2002, с. 883:

⁵ Ств «Education, Military» (<https://www.encyclopedia.com/history/encyclopedias-almanacs-transcripts-and-maps/education-military>):

⁶ Ств Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան, Պաշտպանական-անվտանգային տերմին-

ունեցող «ռազմական կրթություն» հասկացությունը ձևակերպված չէ ՀՀ կրթության ոլորտի օրենսդրական բազայում, իսկ 2012 թ. ընդունված ՀՀ ռազմական կրթության հայեցակարգում ներկայացված է միայն «ռազմական կրթության համակարգ» հասկացությունը⁷:

Այսպիսով՝ ռազմական կրթությունը, ըստ էության, ռազմամանկավարժական գործընթացի մաս է, որին՝ որպես յուրատիպ համակարգի հատուկ են մի շարք առանձնահատկություններ⁸: Դիտարկենք դրանցից հիմնականները:

Զինվորական մասնագիտությանը արհեստավարժորեն տիրապետելը յուրաքանչյուր զինվորականի պարտքն է: Ընդ որում, այս պահանջն ունի գործող իրավական ամրագրում, որով նախատեսվում է նաև զինծառայողի իրավական պատասխանատվությունը:

Ռազմամանկավարժական գործընթացն իրականացվում է առանց զինվորական ծառայության ընդհատման և ունի ընդգծված գործնական բնույթ: Այս առանձնահատկությունը կարևոր է, քանի որ ՀՀ-ում զինվորական ծառայությունը պետական ծառայության հատուկ տեսակ է, որը նախատեսում է օրենսդրությամբ սահմանված հանրային ծառայողի կարգավիճակից բխող իրավունքներ, պարտականություն, «բարեվարքության պահանջներ» և այլն⁹:

Ռազմամանկավարժական գործընթացը կազմակերպվում է մշտական մարտական պատրաստման պայմաններում և ուղղված է դրա ապահովմանը: Այլ կերպ ասած՝ գոյություն ունի ռազմամանկավարժական գործընթացի և մարտական պատրաստման օբյեկտիվ ու սերտ փոխկապվածություն:

Ռազմամանկավարժական գործընթացին հատուկ է ռազմական տեխնիկայով և սպառազինությամբ հագեցվածությունը, քանի որ անձնակազմի՝ սպառազինությանն ու ռազմական տեխնիկային բարձր մակարդակով տիրապետելու և դրանք կիրառելու կարողությունը ժամանակակից մարտում հաջողությունների հասնելու հիմնական երաշխիքն է:

Ռազմամանկավարժական գործընթացին հատուկ է լարվածությունը: Այն ուղղակիորեն կապված է զինվորականից պահանջվող ֆիզիկական և հոգեբանական ծանրաբեռնվածության հետ: Ընդ որում, տարբերակվում են տեսական ու գործնական ուսումնական պարապմունքները և ինքնապատրաստումը, որը կրթության բարձր որակի ապահովման երաշխիքներից է:

Ռազմամանկավարժական գործընթացին բնորոշ է ուսուցման և դաս-

ների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 516:

⁷ Տես «ՀՀ ռազմական կրթության հայեցակարգ», ՀՀ Կառավարության 2012 թ. մարտի 7-ի նիստի հմ. 9 արձանագրային որոշման հավելված հմ 1 (https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/03/MAR9-18_1.pdf):

⁸ Տես «Военная педагогика». Под ред. О. Ю. Ефремова. Учебник для вузов. 2-е изд., испр. и доп. СПб., 2017, сс. 117–119:

⁹ Տես ՀՀ 2018 թ. մարտի 23-ի «Հանրային ծառայության մասին» հմ. ՀՕ-206-Ն օրենքը, հոդ. 18–33 (<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=120832>):

տիարակության խմբայնությունը (կոլեկտիվ լինելը), քանի որ հաջողությունը կախված է ոչ միայն առանձին մասնագետի, այլև ամբողջ ստորաբաժանման պատրաստականությունից:

Ռազմամանկավարժական գործընթացին հատուկ են բազմապլանությունը, բազմամակարդակությունը, բազմաոլորտությունը:

Նշված առանձնահատկությունների համատեքստում դիտարկենք ՀՀ ռազմական կրթության որոշ կողմեր: ՀՀ-ում ռազմական կրթությունն ընդհանուր կրթական համակարգի բաղկացուցիչ մասն է և, համապատասխանաբար, ենթարկվում է կրթության բնագավառի օրենսդրական և այլ նորմատիվային պահանջներին, սակայն պահպանում է նաև ռազմաուսումնական հաստատությունների և դրանցում կազմակերպվող գիտակրթական գործունեության առանձնահատկությունները¹⁰: Ըստ ՀՀ ռազմական կրթության առանձնահատկությունների ուսումնասիրության՝ դրանք բաժանել ենք երկու խմբի. հաստատութենական (ինստիտուցիոնալ) և գործընթացային:

Հաստատութենական առանձնահատկություններն ուղղակիորեն առընչվում են ռազմակրթական ու ռազմագիտական գործունեություն վարող հաստատությունների կազմակերպարարական հարցերին, որոնք կանոնակարգվում են օրենսդրությամբ¹¹: Ի տարբերություն հանրակրթական ու միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատություններից, մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ռազմաուսումնական հաստատություններ կարող է ստեղծել բացառապես Կառավարությունը¹²: Ընդսմին ՀՀ-ում ռազմաուսումնական հաստատությունները գործում են զորամասի կարգավիճակով, իսկ դրանց գործունեության և կառավարման համակարգի առանձնահատկությունները սահմանվում են հաստատության կանոնադրությամբ:

ՀՀ-ում ռազմաուսումնական հաստատությունները կարող են գործել համազորային կամ ռազմագիտական համալսարանի կամ ինստիտուտի ձևով: Օրենքի այս դրույթը, կարծում ենք, կարիք ունի լրամշակման, քանի որ ՀՀ Կառավարությունը 2023 թ. որոշել է ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի ռազմական համալսարանի և ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանի միացմամբ ու վերակազմակերպմամբ ստեղծել ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիա¹³:

¹⁰ Տես ՀՀ 2004 թ. դեկտեմբերի 14-ի «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» հմ. ՀՕ-62-Ն օրենքը, հոդ. 7 (<https://www.arlis.am/documentview.aspx?docid=25820>):

¹¹ Տես ՀՀ 1999 թ. ապրիլի 14-ի «Կրթության մասին» հմ. ՀՕ-297 օրենքը, հոդ. 29 (<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=68299>), նաև՝ ՀՀ 2015 թ. հունիսի 22-ի «Ձորամասերի և զինվորական հաստատությունների կարգավիճակի մասին» հմ. ՀՕ-99-Ն օրենքը, հոդ. 6 (<https://www.arlis.am/documentview.aspx?docID=99167>):

¹² Տես նույն տեղում:

¹³ Տես ՀՀ Կառավարության 2023 թ. հունիսի 8-ին «ՀՀ պաշտպանության նախարարության «Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարան» և ՀՀ պաշտպանության նախարարության «Մարշալ Արմենակ Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարան» պետական հիմնարկները միաձուլման ձևով վերակազմակերպելու և ՀՀ

Գործընթացային առանձնահատկությունը վերաբերում է ռազմամանկավարժական գործընթացին, որը «իրամանատարների, շտաբների, անձնակազմի հետ աշխատանքի մարմինների նպատակաուղղված, կազմակերպված գործունեությունն է՝ միտված զինծառայողների, ստորաբաժանումների և ընդհանուր առմամբ զորամասի ուսումնավարժեցմանը, դաստիարակությանը, նրանց պատրաստմանն ըստ իրենց նախանշանակման և հմտորեն գործելուն»¹⁴: Խաղաղ ժամանակ ռազմամանկավարժական գործընթացի գլխավոր նշանակությունը զորամասերի և ստորաբաժանումների բարձր մակարդակի մարտական պատրաստության պահպանումն է, հիմնական նպատակը՝ խաղաղ և պատերազմական շրջաններում հայրենիքի զինված պաշտպանության ժամանակ առաջադրված խնդիրները հաջող լուծելու համար զինծառայողների և զինվորական կոլեկտիվների համակողմանի պատրաստման ապահովումը¹⁵:

Նախկինում ռազմական կրթությունը կառուցվում էր վերադասի հրամանների անվերապահ կատարման գաղափարի հիման վրա: Սակայն պատերազմավարության եղանակների փոփոխման հետևանքով, մասնավորապես՝ մարտական գործողությունների արագընթացության կտրուկ աճման, որոշումների ընդունման համար հատկացվող ժամանակի խիստ կրճատման, գլխավոր ուժերից կտրվածության պայմաններում փոքր խմբերով և առանձին ստորաբաժանումներով գործելու դեպքերի հաճախացման և այլ երևույթների ազդեցությամբ, կրթության հարացույցը վերանայվեց: Այժմ կատարողականությանը փոխարինելու եկան շրջահայաց նախաձեռնողականությունը, շիսկի դիմելու խիզախությունը, ինքնուրույն որոշումներ ընդունելու և դրանք իրագործելու հմտությունը¹⁶:

Այսօր արդեն ավանդական մոտեցումներով կրթված սպայի մասնագիտական գիտելիքները, կարողությունները, հմտությունները և անձնային որակները հնարավորություն չեն տալիս լուծելու առաջադրվող խնդիրները¹⁷: Ըստ այդմ՝ ԵՄ-ի Ռազմական կոմիտեն և Անվտանգության ու պաշտպանության եվրոպական քոլեջը համատեղ մշակեցին զինվորական մասնագիտությունների որակավորման համակարգ, որը համահունչ է Եվրոպական

պաշտպանության նախարարության «Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիա» պետական հիմնարկ ստեղծելու մասին» հմ. 917-Ա որոշումը (<https://www.e-gov.am/gov-decrees/item/40553/>):

¹⁴ Տես *Ս. Օ. Литвинов*. Сущность, структура и содержание военно-педагогического процесса, его закономерности и противоречия. «Актуальные исследования», май 2023, № 20(150) (<https://apni.ru/article/6252-sushchnost-struktura-i-soderzhanie-voenno-ped>):

¹⁵ Տես «Военная педагогика», с. 117:

¹⁶ Տես *Ա. Վ. Հայրապետյան*, Ջորջերի կառավարման արդիական եղանակը և ՋՈՒ-երում դրա ներդրման խոչընդոտները: «ՀԲ», 2023, հմ. 2:

¹⁷ Այս մասին ավելի հանգամանորեն տես *Վ. Վ. Մելքոնյան*, Հայաստանի Հանրապետությունում ռազմական կրթության նոր հայեցակարգի մշակման նկատմամբ որոշ մեթոդաբանական մոտեցումներ՝ պատերազմների փոփոխվող բնույթի հաշվառմամբ: «ՀԲ», 2022, հմ. 4:

որակավորման համակարգին: Ըստ դրա՝ ռազմական ակադեմիաներում և այլ նմանատիպ հաստատություններում կրթություն ստացող և վերապատրաստվող բոլոր մակարդակների սպաների համար մշակվել է որակավորման շրջանակ, որով նախատեսվում է ութ ոլորտներում ձեռնհասության (կոմպետենցիաների) ձևավորում ու զարգացում¹⁸: Կարծում ենք՝ կարևոր կլինի «ՀՀ կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի և ռազմակրթական բնագավառի ներկայացուցիչների մասնակցությամբ որակավորումների նշված շրջանակի մեթոդաբանական հիմքի վրա մշակել և ներդրել ՀՀ-ում Զինված ուժերի սպայական կազմի որակավորման ոլորտային շրջանակ: Այն կդառնա ՀՀ-ում կրտսեր, ավագ և բարձրագույն սպայական կազմերի ռազմական կրթության պլանավորման և կազմակերպման համար մասնագիտական կողմնորոշիչ, մեթոդաբանական ուղեցույց: Մեթոդաբանական առումով այն հնարավորություն կտա յուրաքանչյուր կազմի համար որոշելու կրթական ծրագրերի հաջորդականության ու փոխլրացման, ընդհանուր ու մասնագիտական ձեռնհասությունների սահմանման, տեսություն–պրակտիկա հաշվեկշռի հաստատման և, առհասարակ, կրթության անընդհատության ու շարունակականության ապահովման, համապատասխան կրթական տեխնոլոգիաների, մեթոդների և գնահատման ձևերի ու եղանակների ընտրության սկզբունքային հարցերը:

Մեր կարծիքով՝ ներկայիս փուլում ռազմական կրթության արդիականացման գլխավոր խնդիրը պետք է լինի անձի՝ որպես իրական ապագա ղեկավարի պատրաստումը, մի առաջավարի, որն ունակ լինի ստեղծված բարդ իրադրության պայմաններում ճիշտ և արագ կողմնորոշվելու, կայացնելու ճիշտ որոշումներ, ճիշտ կազմակերպելու դրանց իրագործումը և պատասխանատվություն ստանձնելու իր գործունեության արդյունքների համար:

Ստորև ներկայացնում ենք ռազմամանկավարժական գործընթացի կատարելագործման հիմնական ուղղություններն ըստ մասնագիտական գրականության¹⁹ և լուծում պահանջող հարցերի վերաբերյալ որոշ առաջարկություններ:

1. *Ռազմամանկավարժական գործընթացի ինտենսիվացում և օպտիմալացում*: ավանդական և նորամուծական մոտեցումների հաշվառմամբ ուսուցման և դաստիարակության այնպիսի տեխնոլոգիաների, մեթոդների, ձևերի, տեխնիկական միջոցների ընտրություն և ներդրում, որոնք առավելագույնս կապահովեն ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետությունը՝ ժամանակի և զինծառայողների ջանքերի համեմատաբար ռացիոնալ օգտագործմամբ:

Նորագույն կրթական տեխնոլոգիաները, այդ թվում նաև թվային, պետք է դիտարկվեն իբրև ուսումնական գործընթացի արդյունավետությունը մե-

¹⁸ Այս մասին ավելի հանգամանորեն տես “The Sectoral Qualifications Framework for the Military Officer Profession (SQF-MILOF) Package” (<https://esdc.europa.eu/document/the-sectoral-qualifications-framework-for-the-military-officer-profession-sqf-milof-package/>):

¹⁹ Տես «Военная педагогика», сс. 121–123:

ծացնող տարր՝ ուսուցման փոխներգործուն մեթոդների, սկզբունքների, այլ տեխնոլոգիաների և միջոցների հետ համադրմամբ:

Այսօր ռազմական կրթության գործընթացի թվայնացումը գերակա նշանակություն ունի 21-րդ դարի սպայի տեղեկությանի մշակույթի ձևավորման, մարտավարության մեջ ՏՀՏ-ների կիրառման կարողությունների և հմտությունների զարգացման համար: Այս համատեքստում ռազմական կրթության ոլորտում ՏՀՏ-ների կիրառման նպատակներ պետք է համարել՝

- մանկավարժական գործընթացի նախագծումը,
- ուսումնական գործընթացի արդյունավետության ապահովումը,
- սովորողների նախագծային, ստեղծագործական, մետաձանաչողական կարողությունների զարգացումը,
- դասավանդման մեթոդների կիրառման արդյունավետության ապահովումը,
- ռազմական ոլորտի գիտելիքների յուրացման, կարողունակությունների զարգացման և դաստիարակության ընթացիկ արդյունքների վերահսկումը, գնահատումը, շտկումը:

Ռեսուրսային տեխնոլոգիաները կարելի է դասակարգել ըստ հետևյալ չափանիշների.

- ազդեցության օբյեկտը (ուսուցումը ո՞ր կարգախմբի սպաների համար է, ինչպես նաև հիմնական, թե լրացուցիչ կրթական ծրագրով),
- առարկաների ոլորտը (ճշգրիտ, հումանիտար, ընդհանուր մասնագիտական, նեղ մասնագիտական գիտակարգ և այլն),
- կիրառվող միջոցները (ուսումնատեխնիկական, տեղեկատվական, պրոբլեմագործունեական, ռեֆլեկսիվ),
- ուսումնական գործընթացի կազմակերպման տեսակը (անհատական, խմբային, կոլեկտիվ, համագործակցային),
- մեթոդական խնդիրը (առարկայի բաժնի, մեկ թեմայի, ամփոփիչ, ստուգիչ և այլն),
- նորամուծական տեխնոլոգիաները (նախագծային, համակարգչային, հեռավար ուսուցում, զարգացնող ուսուցում, մոլտիմեդիական, ինտեգրային և այլն):

Ռեսուրսային տեխնոլոգիայի ընտրության և արդյունավետ կիրառման կարևոր նախապայմաններից է ուսուցման մոդելի և դասավանդման մեթոդաբանության ճիշտ որոշումը:

Այսօր անցում է կատարվել դասախոսակենտրոն ուսուցումից ուսանողակենտրոն ուսուցման²⁰, որի համար ժամանակակից կրթական տեխնոլոգիաները լայն հնարավորություններ են ընձեռում: Ռեսուրսային ուսուցման մոդելի պայմաններում առավել մեծ ուշադրություն է դարձվում ուսուցման ակտիվ մեթոդների կիրառության վրա²¹: Մեր կարծիքով՝ այս երկու

²⁰ Տես Ա. Ճուղուրյան, Ա. Մխիթարյան, Ա. Ավետիսյան, Մասնագիտական կրթության կառավարման հիմունքներ, ուսումնական ծեռնարկ: Ե., էջ 32–42:

²¹ Տես M. Prince. Does Active Learning Work? A Review of the Research. “Journal of

մոդելների և դրանցով պայմանավորված ուսուցման տեխնոլոգիաների ու մեթոդների կիրառման պարագայում էլ արդյունավետության հասնելու համար հիմնական շեշտը պետք է դրվի դասավանդողի մասնագիտական, մանկավարժական և մեթոդական պատրաստվածության վրա:

Ինչպես քաղաքացիական, այնպես էլ ռազմական բուհերում դասավանդողները ունեն որոշակի ակադեմիական ազատություն, այդ թվում՝ դասավանդման ոճ, մոդել, տեխնոլոգիա և մեթոդներ ընտրելու համար: Այնուամենայնիվ, ռազմական ուսուցման հիմնական առանձնահատկություններից մեկը ուսուցման բովանդակության որոշակի կանոնակարգվածությունն է, որով նախատեսվում է հատկապես ռազմամասնագիտական ու մասնագիտական առարկաների դասավանդում ՋՈՒ-ում գործող հայեցակարգներին, կանոնադրություններին, հրահանգներին, ուսումնական ձեռնարկներին համապատասխան: Դա կարող է կաշկանդել դասավանդողին, քանի որ որոշակիորեն խզվում է հետազոտություն–կրթություն սերտ կապը, որը դասավանդողի մասնագիտական գործունեության կարևոր ուղղություններից է և ուսուցման կարևորագույն սկզբունքներից մեկը՝ գիտականության սկզբունքը²²: Բացի այդ, եթե դասավանդողն իր ուսումնական առարկայի բովանդակությունը բխեցնում է ՋՈՒ-ում գործող փաստաթղթային հիմքերից, ապա հաճախ խնդիր է առաջանում հենց այդ փաստաթղթային հիմքերի ժամանակավրեպության պատճառով: Մինչդեռ համաձայն գիտականության սկզբունքի դիդակտիկական պահանջների՝ պետք է.

- ուսումնական նյութը մշակել գիտության և տեխնիկայի վերջին ձեռքբերումների, ռազմական պրակտիկայում դրանց կիրառման փորձի հաշվառմամբ,
- ռազմական գործում առկա իրողությունները ուսումնասիրել փոխադարձ կապերով հանդերձ և փոխկապվածության մեջ:

Տվյալ սկզբունքի ապահովմանն է ուղղված, օրինակ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ուսումնական գործընթացի հիմքում դրված՝ «հետազոտությունների վրա հիմնված կրթություն» մոտեցումը²³: Դա ուսուցման բավական արդյունավետ տեխնոլոգիա է, որը նպաստում է ուսումնական նյութը պարբերաբար թարմացնելուն, ճշգրտելուն, դասավանդողի՝ որպես հետազոտող գիտնականի իր մասնագիտական ոլորտի զարգացումներին հետևելուն, մասնագիտական դիրքորոշումներ, դիտարկումներ ունենալուն, ոլորտային փաստաթղթերի մշակումներում ներգրավվելուն, դրանք փորձաքննելուն: Ռազմական կրթության մեջ ժամանակակից կրթական տեխնոլոգիաների ներդրմանը և

Engineering Education”, July 2004, Vol. 93, N 3; նաև՝ “Challenges to Designing and Implementing Active and Integrated Learning Experiences” (<http://www.cdio.org/implementing-cdio-your-institution/implementation-kit/teaching-learning/challenges>):

²² Տես «Военная педагогика», сс. 166–167:

²³ Տես E. M. Granjeiro. Research-based teaching-learning method: a strategy to motivate and engage students in human physiology classes. “Advances in Physiology Education”, 2019, Vol. 43, N 4 (<https://journals.physiology.org/doi/epdf/10.1152/advan.00034.2019>):

դասավանդողների կարողությունների ընդլայնմանն են ուղղված ՆԱՏՕ-ի պաշտպանական կրթության զարգացման ծրագրի շրջանակներում գործող էլ. Ակադեմիայի (*NATO DEEP e-Academy*) ընձեռած հնարավորությունները²⁴:

Անհրաժեշտ ենք համարում նաև արժարժեքի հետևյալ հարցը. ներկայումս ուսանողակենտրոն ուսուցման համատեքստում բավական լայն տարածում է ստացել պայմանականորեն «տեսական ուսուցում, ինքնապատրաստում, սեմինար կամ գործնական պարապմունք» մոդելից անցումը «ինքնապատրաստում, քննարկման ձևաչափով տեսական ուսուցում, սեմինար կամ գործնական պարապմունք» մոդելին: Պետք է նկատի ունենալ, որ ուսուցման երկու մոդելներն էլ լիովին կիրառելի են և հնարավորություն են տալիս օգտագործելու ուսուցման ակտիվ մեթոդներ, որոնցով ապահովվում է ուսանողակենտրոն ուսուցումը: Այստեղ զլխավոր խնդիրը կրկին մնում է ուսուցման նպատակի և ըստ այդմ մոդելի, տեխնոլոգիայի, դասավանդման, ուսումնառության ու զնահատման մեթոդների ընտրությունը: Երկրորդ մոդելը միշտ չէ, որ արդյունավետ է, հատկապես մասնագիտական ու ռազմամասնագիտական առարկաների դասավանդման պարագայում, երբ ուսանող զինժառանգողը չունի բավարար բազային գիտելիքներ: Այն բավական արդյունավետ է ռազմավարական մակարդակում սպաների, միջգերատեսչական ձևաչափով կազմակերպվող կրթական ծրագրերով մասնագետների պատրաստման ու վերապատրաստման ժամանակ, երբ ուսուցման համար առավել կարևոր են դառնում խորքային գիտելիքների ու մասնագիտական փորձի հիմքի վրա ակադեմիական հարթակում գիտելիքի հարստացման, համակարգման, փոխանակման և պրակտիկ կիրառման (օրինակ՝ ռազմավարական խաղերի, հրամանատարաշտաբային զորավարությունների, սցեներային պլանավորումների) մոտեցումները:

Ռազմական ուսուցման գործում որպես կրթական տեխնոլոգիա կիրառվում է ինքնապատրաստումը՝ որպես զինժառանգողի ինքնուսուցման, ինքնիրացման, ինքնուրույն պարապմունքի տեսակ: Օրինակ՝ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ում իրականացվող մագիստրոսական կրթական ծրագրով հատկացված մեկ կրեդիտի առնվազն 50 %-ը նախատեսված է որպես ինքնապատրաստում, այդ թվում՝ դասավանդողի ղեկավարմամբ:

Ուսուցման տեխնոլոգիան որոշելիս հույժ կարևոր է ուսումնական գործընթացում տեսության և պրակտիկայի, այդ թվում՝ ուսումնական գործընթացում գիտատեսական գործունեությամբ զբաղվող կադրերի և պրակտիկ զինվորականների ներգրավման հաշվեկշռի որոշման հարցերը: Այս խնդրի վերաբերյալ բավական հետաքրքիր մոտեցում է ներկայացրել պրոֆեսոր Ֆուտը, որը պնդում է, թե ռազմաուսումնական հաստատությունում երիտասարդ, փորձառու, տաղանդավոր կադրերի պատշաճ գործնական ուսու-

²⁴ Stu “Defence Education Enhancement Programme (DEEP) eAcademy” կայքը (<https://deeportal.hq.nato.int/eacademy/>):

ցումը ուժի աղբյուր է, որը հնարավորություն է տալիս ուսումնական պլանով նախատեսված հիմնարար տեսական առարկաների ուսուցմանը զուգահեռաբար կազմակերպելու նախածառայողական պատրաստում: Բացի այդ, գործնական նշանակություն ունի նաև ուսումնառող սպաների մասնակցությունը արտասահմանյան հրահանգիչների ու մասնագետների հետ հանդիպումներին, կլոր սեղան-քննարկումներին: Շատ կարևոր է նաև ուսումնական գործընթացում այնպիսի սպաների ներգրավումը, որոնց հետ հետագայում սպան կարող է մասնակցել որևէ ռազմական օպերացիայի²⁵:

Այս նպատակադրմամբ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի օպերատիվ օղակի սպայական կազմի վերապատրաստման դասընթացի ուսումնական պլանով պարապմունքների շուրջ 35 %-ը հատկացված է գործնական պարապմունքներին և հրամանատարաշտաբային զորավարություններին, իսկ տեսական պարապմունքները հիմնականում վարում են ՋՈՒ-ի ԳՇ-ում և բանակային կորպուսում համապատասխան պաշտոններ զբաղեցրած և այժմ պահեստագրում ընդգրկված ավագ ու բարձրագույն սպայակազմի ներկայացուցիչներ:

2. *Ռազմամանկավարժական գործընթացի հումանացում և ժողովրդավարացում*, ինչով նախատեսվում են յուրաքանչյուր զինծառայողի մեջ հասարակական ճանաչում, սոցիալական պաշտպանվածության երաշխավորում, անհատականության դրսևորում, ուշադրություն զինվորականի ներաշխարհին, նրա նյութական և հոգևոր կարիքների բավարարում: Հումանացումը հնարավոր է, եթե ստորաբաժանման մեջ խստորեն պահպանվում են օրենքները, զինվորական կանոնադրությունների պահանջները, հետևողականորեն իրագործվում են դաստիարակության սկզբունքները: Ռազմամանկավարժական գործընթացի ժողովրդավարացման հիմքում այնպիսի պայմանների ստեղծումն է, որ սպան դրսևորի ակտիվություն, ստեղծագործականություն, նախածեռնողականություն, որ նրան ներգրավեն ուսումնական գործընթացի պլանավորման և որոշ ուսումնադաստիարակչական հարցերի լուծման, զինվորական ծառայության հետ կապված գործերում: Այս առումով կարելի է հիշատակել ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի փորձը, երբ տարբեր կրթական ծրագրերով ուսումնառող սպաները հնարավորություն ունեն ուսումնական գործընթացի շրջանակներում մասնակցելու համալսարանում անցկացվող կլոր սեղան-քննարկումներին, գիտաժողովներին, գիտական սեմինարներին, ինչի շնորհիվ նրանք կարող են անմիջականորեն հաղորդակցվել պաշտպանական-անվտանգային բնագավառի հայրենական և օտարերկրյա առաջատար մասնագետների հետ և մասնակցել նրանց հետ քննարկումներին: Ղա, մի կողմից, ամրապնդում է յուրացրած գիտելիքները, քննության ենթարկում դրանք, մյուս կողմից՝ նպաստում է իրենց մտքերը, տեսակետները, դիրքորոշումները արտահայտելու, հաղորդակցվելու, փորձը փոխանակելու կարողությունների և հմտությունների զարգացմանը:

²⁵ Տես *Փխեր Ֆուտ*, Նոր հանգամանքներ. ռազմական կրթության արմատական վերափոխում: «ՀԲ», 2010, հմ. 1:

Ամփոփելով նշենք, որ ռազմական կրթությունը, լինելով ընդհանուր կրթական համակարգի անքակտելի մասը, ունի առանձնահատկություններ, որոնք ռազմաուսումնական գործընթացին հաղորդում են կանոնակարգված, համակարգված, պլանաչափ բնույթ, ինչն էլ պայմանավորում է ուսուցման մոդելների, տեխնոլոգիաների, դասավանդման, ուսումնառության, գնահատման մեթոդների ընտրությունը: Այս ամենի հաշվառմամբ՝ ՀՀ-ում արդի ռազմական կրթությունը կազմակերպելիս պետք է դիտարկվեն հետևյալ առաջնահերթությունները.

1. իրավանորմատիվային բազայի թարմացում և համապատասխանեցում արդի իրողություններին,
2. կրթական ծրագրերի բովանդակային վերանայում և ռազմավարական, օպերատիվ ու մարտավարական մակարդակներում դրանց տրամաբանական փոխլրացմամբ սպաների աստիճանական և շարունակական կրթության ապահովում,
3. դասախոսական կազմի կարողությունների զարգացում՝ վերապատրաստումների և հետազոտական աշխատանքների միջոցով,
4. կրթական տեխնոլոգիաների, դասավանդման և ուսումնառության, գնահատման ձևերի և մեթոդների վերանայում և կատարելագործում:

ОСОБЕННОСТИ ВОЕННОГО ОБРАЗОВАНИЯ И ВОЗМОЖНОСТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ В РА

Л. Т. АСАТРЯН, доктор педагогических наук, профессор, профессор кафедры педагогики Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна, В. В. МЕЛКОНЯН, старший лейтенант, соискатель Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна, начальник Научно-учебного отделения НИУО МО РА

РЕЗЮМЕ

Осуществляемые в РА строительство ВС и соответствующая оптимизация предъявляют новые качественные требования к уровню профессиональной выучки офицеров. Они должны быть отражены в военном образовании посредством разработки и внедрения новых механизмов с обеспечением непрерывности, эффективной взаимосвязи и высокого качества обучения. Результатом модернизации военного образования должно стать создание комплексной системы, которая даст возможность формировать не только хорошо подготовленных специалистов, отвечающих требованиям ведения современной войны, но и гармонично развитых личностей, способных решать стоящие перед ними сложные разноплановые задачи.

Военное образование, являясь неотъемлемой частью общеобразовательной системы, имеет особенности, придающие военно-учебному процессу регламентированный, систематизированный, планомерный

характер, чем и обусловливается выбор моделей, технологий обучения, методов преподавания, обучения и оценки. Учитывая вышеизложенное, целесообразно рассмотреть следующие приоритеты при организации современного военного образования в РА: обновление нормативно-правовой базы военного образования и приведение ее в соответствие с современными реалиями; пересмотр содержания образовательных программ и обеспечение поэтапного и непрерывного образования офицеров с логическим взаимодополнением этих программ на стратегическом, оперативном и тактическом уровнях; развитие способностей преподавательского состава посредством переподготовок и вовлечения в исследовательские работы; пересмотр и совершенствование образовательных технологий, форм преподавания и обучения, а также оценки.

PECULIARITIES OF MILITARY EDUCATION AND OPPORTUNITIES OF ITS IMPROVEMENT IN THE RA

L. T. ASATRYAN, Doctor of Pedagogy, Professor, Professor at the Chair of Pedagogy, Khachatur Abovyan Armenian State Pedagogical University;

V. V. MELKONYAN, Senior Lieutenant, Applicant, Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Head, Academic-Educational Division, NDRU, MOD, RA

SUMMARY

The development of the RA Armed Forces, and the optimization carried out in line with it do impose new qualitative requirements on the level of officers' professional skill. These requirements must be reflected in the military education by way of developing and introducing new mechanisms to ensure continuity, effective interconnection and high quality learning. Modernization of military education should result in the creation of a comprehensive system that will make it possible to shape not only well-trained specialists who meet the requirements of modern warfare, but also harmoniously developed individuals capable of solving the complex and diverse tasks facing them.

As an integral part of the general education system, military education has features imparting a regulated, systematized, systematic character to the military educational process, which determines the choice of training models and technologies, methods of teaching, training and assessment. Taking into account all of the above, it is expedient to consider the following priorities when organizing modern military education in the Republic of Armenia: updating the legal framework of military education and bringing it in line with modern realities; reviewing the content of educational programs and ensuring officers' phased and continuous education with the logical complementarity of these programs at the strategic, operational and tactical levels; developing the abilities of teaching staff through retraining and involving them in research work; reviewing and improving educational technologies, forms of teaching, training and assessment.

ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀԵՌԱՎԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

Ս. Գ. ԳԱԼՍՅԱՆ, պահեստազորի ք/ծ գնդապետ, ք. գ. դ., պրոֆեսոր,
ԵՊԲՀ ՈԲԿԳ կենտրոնի տնօրեն, Գ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, ք. գ. թ., դոցենտ,
ԵՊԲՀ հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր,
Ս. Հ. ԱԴԱՍՅԱՆ, ք. գ. թ., ԵՊԲՀ ֆիզիոլոգիայի ամբիոնի ավագ
դասախոս, Լ. Ռ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, ք. գ. դ., պրոֆեսոր, ԵՊԲՀ ուսումնական
աշխատանքների գծով պրոռեկտոր

Ներածություն

20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին ամբողջ աշխարհում բուհերի ուսանողների թիվն զգալիորեն աճել է: Ընդ որում, շարունակում է մեծանալ առաջին հերթին օտարերկրյա (միջազգային) ուսանողների, հատկապես՝ հետբուհական կրթություն ստացողների՝ մագիստրոսների, ասպիրանտների, դոկտորանտների թիվը: Մեծ Բրիտանիայում, օրինակ, 2010–2011 թթ. օտարերկրյա ուսանողները կազմում էին բոլոր ուսանողների 28 %-ը: Ընդհանրացող աշխարհում այս իրավիճակը հանգեցրեց հեռավար կրթության զաղափարի թարմացմանն ու զարգացմանը¹:

Համաձայն «Եվրոպական համալսարանների ասոցիացիայի» (*“European University Association”, EUA*) «Միտումներ 2015. ուսուցում և ուսուցանում Եվրոպական համալսարաններում» (*“Trends 2015: Learning and Teaching in European Universities”*) տարեկան հաշվետվության՝ 2013 թ. աշխարհի տարբեր երկրներում սովորող օտարերկրացիների թիվը՝ որպես ուսանողների ընդհանուր թվի մասնաբաժին, աճում է բարձրագույն կրթության ցածր՝ բակալավրի աստիճանից դեպի ավելի բարձր՝ դոկտորական աստիճանը²:

Բարձրագույն կրթության պահանջարկը բավարարելու նպատակով բազմաթիվ կրթական հաստատություններ սկսել են իրենց ուսումնական պլաններում ավելի ու ավելի մեծ չափով ներառել հեռավար կրթության հնարավորություն ընձեռող ծրագրեր՝ օգտագործելով ժամանակակից թվային տեխնոլոգիաները³:

* Հոդվածը նախնական տեսքով ստացվել է 29.01.2024: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 04.04.2024:

¹ Տես Օ. Գ. *Ламинина*. Технологии и принципы дистанционного обучения: зарубежный опыт. «Педагогический журнал», 2016, № 4:

² Տես *Andrée Sursock*. Trends 2015: Learning and Teaching in European Universities. EUA publications, May 2015 (<https://eua.eu/downloads/publications/trends-2015-learning-and-teaching-in-european-universities.pdf>):

³ Տես *Е. В. Соколова, А. Я. Шатрова*. Цифровые технологии в образовании: наукометрический анализ зарубежных и отечественных исследований. «Вестник Северо-Восточного федерального университета им. М. К. Аммосова». Серия: «Педагогика. Психология. Философия», 2023, № 1 (29):

Հեռավար կրթության էությունը

Հեռավար կրթությունը, որի պատմության սկիզբ կարելի է համարել 19-րդ դարը, 1800-ական թվականների վերջին արդեն բավական տարածում էր ստացել հյուսիսամերիկյան մայր ցամաքում: Հաղորդակցման միջոցների հնարավորությունների ընդլայնումը, տարբեր տեխնոլոգիաների զարգացումը, գիտական նորամուծությունները նպաստեցին հեռավար կրթության տարածմանը, իսկ 20-րդ դարի վերջին այն կտրուկ առաջընթաց ապրեց՝ տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիական հեղափոխության շնորհիվ⁴: Արդեն 1990-ականներին համալսարաններն ու քոլեջներն սկսեցին փորձեր անել անցնելու հեռավար կրթության զարգացման հաջորդ փուլին՝ առցանց դասընթացների ձևով: 1998 թվականին Նյու Յորքի համալսարանն առաջինն էր, որ բացեց կրթական առևտրային (վճարովի) ստորաբաժանում⁵:

COVID-19-ի բռնկումից հետո կրթական միջավայրում տեղի ունեցան լուրջ փոփոխություններ: Այսպես, որոշ ժամանակով փակվեցին բոլոր ուսումնական հաստատությունները: Ֆիզիկական հեռավորություն պահպանելու անհրաժեշտությունը ուսումնական հաստատություններին ստիպեց անցում կատարել առցանց ուսուցմանը: Որոշ հաստատություններ պարզապես շեշտը դրեցին արդեն իսկ ինտեգրված հեռավար ուսումնական պլանի վրա, իսկ որոշ հաստատությունների համար այդ անցումը նշանակում էր նոր մարտահրավերների հաղթահարում, քանի որ նրանք մշակութային ու տեխնոլոգիական առումով պետք է հարմարվեին նոր իրադրությանը⁶:

Հեռավար կրթությունը տարբերվում է կրթության այլ՝ հեռակա, երեկոյան և էքստերն, ձևերից այն առումով, որ նվազ ծախսատար է և ունի օպերատիվ հետադարձ կապի առավելություններ: Բացի այդ, շնորհիվ հեռավար ուսուցման, հեռավոր շրջանների բնակիչներն ու տեղաշարժման սահմանափակ հնարավորություններով մարդիկ հնարավորություն ստացան շարունակելու իրենց կրթությունը⁷:

Հեռավար կրթությունը սահմանվում է որպես հաստատութնական ֆորմալ կրթություն, որի դեպքում առանձնացվում է ուսումնառող խումբ և

⁴ Stu Hope E. Kentnor. Distance Education and the Evolution of Online Learning in the United States. University of Denver, 2015:

^{*} Հարկ ենք համարում նշել, որ հեռավար կրթության (дистанционное обучение, distance education) և առցանց ուսուցման (онлайн обучение, online learning) արնչության վերաբերյալ ո՛չ արևմտյան, ո՛չ ռուսաստանցի մասնագետները միակարծիք չեն. ոմանք համարում են, որ առցանց ուսուցումը հեռավար կրթության եղանակ է, ոմանք՝ որ տեսակ է, ոմանք էլ՝ որ զարգացման փուլ է: Մենք հակված ենք ընդունելու վերջին պնդումը:

⁵ Տես նույն տեղում:

⁶ Stu J. Sandars, R. Correia, M. Dankbaar, P. de Jong, P. S. Goh, I. Hege, K. Masters, S.-Y. Oh, R. Patel, K. Premkumar, A. Webb, M. Pusic. Twelve tips for rapidly migrating to online learning during the COVID-19 pandemic. “MedEdPublish”, 29 April 2020 (<https://mededpublish.org/articles/9-82/v1>):

⁷ Տես Օ. Գ. Լամինինա, Նշ. աշխ.:

օգտագործվում են ինտերակտիվ հեռահաղորդակցության համակարգեր, որպեսզի ուսումնառողները (ուսանողները), ռեսուրսները և ուսուցանողները (ուսուցիչները) լինեն միավորված: Այս սահմանումը ներառում է չորս բաղադրիչ: Առաջինն այն գաղափարն է, որ հեռավար կրթությունն ունի հաստատութենական հիմք: Դրանով է այն տարբերվում ինքնուսուցումից: Երկրորդ բաղադրիչը ուսուցանողի և ուսումնառողի տարանջատված լինելու գաղափարն է, առավելապես աշխարհագրական առումով. ուսուցիչը գտնվում է մի վայրում, ուսանողը՝ մեկ այլ: Տարանջատումը կարող է ունենալ նաև ժամանակային բնույթ: Երրորդ բաղադրիչը ինտերակտիվ հեռահաղորդակցությունն է, որը կարող է լինել համաժամանակյա և տարաժամանակյա: Կարևոր է, որ ուսանողները հաղորդակցվեն ինչպես միմյանց, այնպես էլ ուսուցիչների հետ, ինչպես նաև նրանց հասանելի լինեն հրահանգների աղբյուրները: Իսկ «հեռահաղորդակցության համակարգերը» ենթադրում են էլեկտրոնային միջոցներ, ինչպիսիք են հեռուստացույցը, հեռախոսը և Համացանցը, սակայն չպետք է սահմանափակվեն միայն էլեկտրոնային միջոցներով: Հեռահաղորդակցությունը սահմանվում է որպես «հաղորդակցություն հեռավորության վրա»⁸:

Համաձայն Հոլմբերգի՝ հեռավար կրթությունը ներառում է ուսուցման տարբեր ձևեր բոլոր մակարդակներում. այն տեղի չի ունենում դասասենյակում կամ շենքում դասախոսի շարունակական և անմիջական հսկողությամբ, այդուհանդերձ, հեռավար կրթություն ստացողներն օգտվում են ուսումնական հաստատության տրամադրած կրթական պլաններից, ուղղորդումից և կրթաթոշակից⁹:

«Չկա հեռավար ուսուցման էության միասնական ընկալում: Կրթական հաստատությունն իրավունք ունի հեռավար կրթական տեխնոլոգիաները կիրառելու կրթության բոլոր ձևերի դեպքում: ... Որպես ուսուցման նոր ձև՝ այն չի կարող լինել բացարձակ ինքնուրույն: Հեռավար և առկա ուսուցման նպատակները նույնն են, եթե ուսուցումը հիմնված է նույն բովանդակությունն ունեցող համապատասխան կրթական ծրագրերի վրա: Սակայն այլ են նյութի մատուցման ձևը, դասախոսի և սովորողի, ինչպես նաև տարբեր սովորողների փոխազդեցությունները: Այլ են նաև հեռավար ուսուցման կազմակերպման ձևերը, որոնք պայմանավորված են համացանցի առանձնահատկություններով և նրա հնարավորություններով»¹⁰:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ հեռավար կրթությունը փոխում է ոչ միայն կրթական գործընթացի սկզբունքները, այլև կրթվողի դերը¹¹:

⁸ Stu “Defining Distance Education” (http://members.aect.org/pdf/DistED/CH_1.pdf):

⁹ Stu *Diane L. Carver*. Analysis of Student Perceptions of the Psychosocial Learning Environment in Online and Face-to-Face Career and Technical Education Courses. Old Dominion University, 2014:

¹⁰ Stu *Խ. Բեգիրջյան, Վ. Խաչատրյան, Գ. Հովհաննիսյան, Ս. Բաբայան*, Հեռավար ուսուցման կազմակերպումը և իրականացումը կանոնակարգող փաստաթղթերի ժողովածու: Ե., 2017, էջ 11:

¹¹ Stu *B. D. Miljković, A. V. Petojević, M. R. Žižović*. Monitoring the effect of

21-րդ դարում հեռավար կրթությունը շատ հաճախ հենվում է կրթական տեխնոլոգիաների՝ որպես սովորողների համար հիմնական միջոցի վրա: Կարևորվում է այն հանգամանքը, որ հեռավար կրթության պարագայում տեղեկատվության աղբյուրը և կրթություն ստացողը չեն գտնվում նույն ֆիզիկական միջավայրում, ըստ այդմ էլ տեղեկատվությունը կատարվում է տարբեր եղանակներով: Ընդամին առջանց կրթության համար կիրառվող գործիքները փոխել են հեռավար կրթության հեռանկարի նկատմամբ մանկավարժական մոտեցումներն ու տեսլականը:

Առջանց կրթությունն այլևս ինչ-որ ուղղվածություն չէ, ավելին. այն ընդհանուր հոսանք է¹²: Գործնականում առջանց կրթության դեպքում օգտվում են համացանցից, ուսումնական նյութ ստանալու, մշակելու, դասախոսի և մյուս ուսանողների հետ քննարկելու, գիտելիք ձեռք բերելու, իր ուրույն կարծիքը ձևավորելու և փորձառությունը մեծացնելու համար¹³: Առջանց ուսուցման ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ դրա դեպքում ուսուցանողի և ուսումնառողի հաղորդակցումը տեղի է ունենում համաժամանակյա աշխատակարգով՝ ժամանակի ռեալ մասշտաբում: Դրա համար կիրառվում են արդիական տեխնոլոգիաների ընձեռած այնպիսի հնարավորությունները, ինչպիսիք են սոցիալական հարթակները, օրինակ՝ Ջում (Zoom), Սկայպ (Skype) և այլն:

Տվյալ թեմայով անգլիալեզու և ռուսալեզու մասնագիտական գրականության մեր կատարած ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ փորձագետները տարբերակում են երեք հիմնական տեսակների հեռավար ուսուցում¹⁴.

1. *համաժամանակյա*, որը տեղի է ունենում ժամանակի ռեալ մասշտաբում, այս ձևաչափին են համապատասխանում առջանց հեռարձակումները, վեբինարները, տեսազանգերը,

2. *տարաժամանակյա*, կամ անհամաժամանակյա, որի դեպքում կիրառվում են նախօրոք պատրաստված ուսումնական նյութեր (*Փառերկոյնտ* ձևաչափով, տեսանյութեր, տեքստեր), ինչպես նաև ուսման ընթացքի վերահսկման նյութեր (թեստեր, առաջադրանքներ): Իր հերթին այս եղանակը լինում է երկու տեսակի՝ ավտոմատացված (ստանում են առաջադրանքները, անցնում թեստավորում և ավարտում դասընթացը) և դասավանդողի ուղեկցմամբ (ուսուցիչը սահմանված ժամկետներում ստուգում է, մասնակցում է քննարկումներին և այլն),

3. *խառը* ուսուցում:

motivation on mastering knowledge and skills in distance learning systems. "Vojnotehnički Glasnik / Military Technical Courier", 2016, Vol. 64, N 4:

¹² Տես Հոուպ Ի. *Քենտոնը*, Նշ. աշխ., էջ 21–34:

¹³ Տես M. Courtney, S. Wilhoite-Mathews. From distance education to online learning: practical approaches to information literacy instruction and collaborative learning in online environments. "Journal of Library Administration", May 2015, Vol. 55, Issue 4:

¹⁴ Տես «В чем разница между дистанционным и онлайн-обучением». «Русская школа управления», 03.04.2020 (<https://uprav.ru/blog/v-chem-raznitsa-mezhdu-distantsionnym-i-onlayn-obucheniem/>):

Մի շարք հեղինակներ հիմնավորում են *խառը ուսուցման*¹⁵ (blended learning, hybrid learning, hybrid education) ձևաչափի անհրաժեշտությունը, երբ հեռավար ուսուցումը համատեղվում է ավանդական կրթության հետ: Այս մոտեցմամբ ենթադրվում է «առջանց հաղորդակցման նպատակով առջանց ուսումնական նյութերի ու հնարավորությունների համատեղում ավանդական դասասենյակային մեթոդների հետ»¹⁶: Խառը ուսուցման հաջողություններն ամփոփված են հինգ հիմնական առավելություններում.

- հնարավորություն է տալիս հաշվի առնելու մեկ կոլեկտիվում բոլոր ուսումնառողների նախապատվությունները, թե ինչ են գերադասում՝ ավանդական, հեռավար, թե խառը ուսուցումը,
- միասնաբար օգտագործվում են առջանց և անցանց տեխնոլոգիաները, ինչն ուսուցանողներին հնարավորություն է տալիս իրենց ուսումնական պլաններում ճկուն կերպով կիրառելու կրթական ոլորտում եղած վերջին ձեռքբերումներն ու աշխատառճերը,
- նվազ ծախսատար է,
- խթանում է մասնակիցների ինտերակտիվ ներգրավվածությունն ու հաղորդակցումը,
- տարբեր լեզուներով խոսող, տարբեր վայրերում գտնվող, ինչպես նաև մասնագիտական տարաստիճան հմտությունների տիրապետող, սակայն մեկ ընդհանուր կորպորատիվ միջավայրով փոխկապված անհատներին հնարավորություն է տալիս ընտրողաբար մոտենալու ուսումնական նյութին և դրա շնորհիվ լավագույնս տիրապետելու դրան:

Ուսուցման նկատմամբ տվյալ մոտեցումն արդարացված է, երբ ազատ և զբաղված ուսումնառողները պետք է յուրացնեն մեծ ծավալի ուսումնական նյութ: Ընդամին ուսուցանողին խնդիր է դրվում իր ուսումնական պլանում արտացոլել խառը ուսուցման լավագույն փորձն ու ռազմավարությունները և առավելագույնս օգտագործել տնային ու դասարանային համատեղ ջանքերը:

Հեռավար ուսուցումը հաստատուն կերպով արմատավորվում է համալսարանական կրթական միջավայրում մրցակցության մեջ մտնելով դասավանդման ավանդական մեթոդների հետ: Եվ պատճառը միայն այն չէ, որ այս ձևի ուսուցումը ավանդականի համեմատությամբ նվազ ծախսատար է, ապահովում է սովորողների զանգվածային ընդգրկում, կիրառում է արդիական տեղեկատվական համակարգեր և աչքի է ընկնում կազմակերպման հարմարավետությամբ:

Կրթական ծառայությունների շահառուները, լինեն ուսանողներ, դասախոսներ, թե գործատուներ, ձգտում են կրթության ոլորտում տեսնելու առավել դինամիկ զարգացումներ: Մի կողմից՝ ներկայումս գիտելիքն արագ է

¹⁵ Տես «What is Blended Learning? A Guide to Everything You Need to Know» (<https://elmllearning.com/hub/elelearning/blended-learning/>):

¹⁶ Տես նույն տեղում:

«հնանում», մյուս կողմից՝ ուսանողի համար այն դառնում է ավելի բազմա- ոլորտ ու բազմաշերտ, քանի որ ընդլայնվում է շրջանավարտների հմտութ- յունների և կարողությունների շրջանը¹⁷: Աշխատաշուկայում մրցունակ լինելու համար ուսումնառողը պետք է դուրս գա ավանդական լսարանային դասախոսությունների ու պարապմունքների սահմաններից: Հեռավար ուսու- ցումն ապահովում է բազմակողմանի տեղեկացվածություն, ծավալուն խմբային քննարկումներ, փորձի փոխանակում, ընդամին նաև միջազգային մակարդակով, ինչն իր հերթին նպաստում է անհատական ու հաստատու- թենական հիմունքներով միջմշակութային հաղորդակցությունների ու շփում- ների զարգացմանը:

Այստեղ, մեր կարծիքով, կա մի լուրջ վտանգ, մտավախության պատ- ճառ: Ինքնին հասկանալի է, որ «բազմազգ» ուսանողության ու դասախոս- ների շփումները, քննարկումները, գիտելիքների փոխանցումը պետք է կատարվեն մեկ՝ բոլորի համար ընդհանուր, լեզվով, որի դեր կատարելու է (պարզ պատճառներով) անգլերենը՝ փաստորեն զբաղեցնելով ազգային լեզվի տեղն ու, ըստ էության, շրջանառությունից դուրս մղելով այն:

Կրթության թվայնացում

Հարկ է նշել, որ համաշխարհային կրթական միջավայրի բարեփոխման և արդիականացման տեսանկյունից կրթության թվայնացումը հզոր միտում է և պահանջում է կրթության համապատասխան որակի և բովանդակության ապահովում¹⁸: Եվրամիության կրթության զարգացման 2020 թ. ռազմավա- րությունն ունի թվային ուղղվածություն: Այս ռազմավարությունը թվային կրթության «Առնչվեք ապագային» (*“Touch the Future”*) կոչվող համապար- փակ ռազմավարական հայեցակարգի մի մասն է¹⁹: Տվյալ հայեցակարգը մշակվել է ԵՄ-ի կառավարության «ԴիջեդուՓոլ» (*“DigEduPol”*) փաստա- թղթի²⁰ հիման վրա: Հիմնական նպատակը կրթական գործընթացին թվային տեխնոլոգիաների ինտեգրումն է, որպեսզի դրանք օգտագործվեն առանձին առարկաների դասավանդման և ընդհանրապես դպրոցական կրթության գործընթացին զուգահեռաբար: Թվային տեխնոլոգիաները պետք է ոչ միայն

¹⁷ Տես Ն. Խաչատրյան, Հեռավար կրթության կազմակերպման մեթոդաբանական խնդիրները բուհերում: «Բանբեր Երևանի համալսարանի: Տնտեսագիտություն», 2021, հմ. 2 (http://www.old.yasu.am/files/04N_Khachatryan.pdf):

¹⁸ Տես Շ. Բ. Սափրազյան, Կ. Բ. Լիսովսկայա, Վ. Օ. Սիլոգով, Ե. Ա. Սարգսյան: Цифровизация как новое направление в сфере образования. Образовательный вестник «Сознание», 2020, т. 22, № 6:

¹⁹ Տես Olga N. Machekhina. Digitalization of education as a trend of its modernization and reforming. “Revista Espacios”, 2017, Vol. 38, N 40 (<https://www.revistaespacios.com/a17v38n40/a17v38n40p26.pdf>):

²⁰ Տես Johannes Conrads, Morten Rasmussen, Niall Winters, Anne Geniet, Laurenz Langer. Digital Education Policies in Europe and Beyond: Key Design Principles for More Effective Policies. JRC Science for Policy Report, 2017 (<https://publications.jrc.ec.europa.eu/repository/handle/JRC109311>):

օգնեն ուսանողներին յուրացնելու որոշակի փաստեր, այլև մեծացնեն նրանց ձեռնհասությունը (*competence*), զարգացնեն տրամաբանական մտածողության ու հաղորդակցական հմտությունները: Այդուհանդերձ, պետք է ընդունել, որ տեխնոլոգիան ոչ թե հիմնովին փոխարինում է, այլ միայն լրացնում է ուսուցման գործընթացը, քանի որ ցանկացած նորամուծության համար առանցքային դեր ունի մարդկային գործոնը:

Ժամանակակից տեխնոլոգիաները կտրուկ կերպով փոխում են տնտեսության բազմաթիվ ոլորտներ. տարածված մասնագիտությունները փոփոխվում են՝ մի մասը վերանում է, ի հայտ են գալիս նորերը: Կրթության ոլորտի մասնագետները նշում են, որ թվայնացումը ոչ միայն կրթության օպտիմալացում է, այլև որոշակի համակարգ, որի գործարկման արդյունքը նոր աշխատատեղերի ստեղծումն է: Հարկ է նշել, որ ՌԴ-ում, օրինակ, մեկ միլիոն մասնագետ արդեն ստացել է վկայականներ թվային տնտեսության ասպարեզում ձեռնհասությունների զարգացման համար, 10 միլիոն մարդ առցանց դասընթացների շնորհիվ բարելավել է իր հմտությունները թվային գրագիտության ուղղությամբ: Կարելի է եզրակացնել, որ բնակչության թվային գրագիտության բարելավման համար համալսարանները պետք է ունենան նոր ուսումնական ծրագրեր, բացեն լրացուցիչ կրթական կենտրոններ և կազմակերպեն վերապատրաստման առաջադիմական դասընթացներ, ինչը անհնար կլիներ առանց հեռավար կրթության և արհեստական բանականության ներդրման:

Խոսելով ուսումնասիրված ռուսական փորձի մասին՝ նշենք, որ ներկայումս բավական լուրջ քննարկումներ են ծավալվել բարձրագույն կրթության հայեցակարգային հիմքերը թվային տնտեսության պայմաններում հստակեցնելու ուղղությամբ²¹: Ոլորտի մասնագետները տարբերակել են առնվազն յոթ հիմքեր.

- մարդ-մեքենա համակարգում և տեղեկատվական հասարակությունում կրթության սուբյեկտների ձևավորման և զարգացման ապահովման համար «գիտություն – մշակույթ – ուսանող – բանականություն» շղթայում թվային կրթական համակարգին առաջատար դերի վերագրումը,
- անընդհատ կրթության հայեցակարգի օպտիմալացումը՝ ռուսաստանյան կրթական համակարգի թվայնացման և առցանցայնացման սկզբունքների հիման վրա,
- ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման կարծրատիպների փոփոխությունը՝ կարգադրական եղանակով,
- ուսումնական և մանկավարժական գործունեության համար կրթական սուբյեկտների պարտադիր պատրաստման և վերապատրաստման համակարգի ստեղծումը,

²¹ Сту В. И. Богословский, А. Л. Бусыгина, В. Н. Аниськин. Концептуальные основы высшего образования в условиях цифровой экономики. «Самарский научный вестник. Педагогические науки», 2019, т. 8, № 1(26):

- բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստման հիմնական կրթական ծրագրերի բովանդակության թվային օպտիմալացումը, հարմարեցումը և ձևափոխումը պետական գործող և հեռանկարային կրթական ծրագրերի շրջանակներում,
- կրթության սուբյեկտների հաղորդակցական հմտությունների ձևավորման և զարգացման համար շարժառիթավորման, արժեքային հիմքերի որոշումը,
- ռուսաստանյան կրթական համակարգի թվայնացման և առցանցայնացման կազմակերպման նկատմամբ մոտեցումների օրենսդրական և դիրեկտիվ փոփոխությունը, ներառյալ՝ թվայնացված կրթական համակարգի պայմաններում աշխատանքային գործառույթներ կատարող դասախոսների պարտականությունները և իրավունքները:

Հեռավար կրթության պարագայում հնարավոր է կիրառել բազմաթիվ մանկավարժական մեթոդներ, մասնավորապես՝ բազմակի օգտագործման ուսումնական ինտերակտիվ օբյեկտներ (միջոցներ), համակարգչային մոդելավորումներ, հղումներ համապատասխան կայքերին, տպագիր հոդվածներ, ինքնաստուգման անհատական թեստեր, առաջադրանքներ, էլեկտրոնային տեսա- և ձայնային նյութեր, վիկիվարժություններ՝ թվայնացված գրքերի առանձին գլուխների և էլեկտրոնային գրքերի ընթերցանություն և այլն²²:

Հեռավար կրթության առավելություններն ու թերությունները

Մասնագիտական գրականության տվյալների ուսումնասիրության ու վերլուծության արդյունքներով²³, որպես հեռավար կրթության ու նրա տարբեր դրսևորումների դրական կողմեր, առանձնացրել ենք հետևյալ դրույթները.

- առանց աշխատանքն ընդհատելու կրթություն ստանալու ուսանողների հնարավորությունը,
- ուսումնական հաստատություն ներկայանալու անհրաժեշտություն չլինելը, համեմայն դեպս՝ հաճախակի (հատկապես վերաբերում է հեռու ապրող ուսանողներին), ինչի շնորհիվ կրճատվում են նրանց ֆինանսական ծախսերը, ինչպես նաև հնարավոր է դառնում մայրաքաղաքային կամ արտասահմանյան բուհերի դիպլոմ ստանալը,

* Վերկայքեր, որտեղ ներկայացված տվյալները հնարավոր է փոփոխել կայքի գործիքակազմի միջոցով:

²² Steu I. Gemmell, R. Harrison, J. Clegg, K. Reed. Internationalisation in online distance learning postgraduate education: a case study on student views on learning alongside students from other countries. "Innovations in Education and Teaching International", March 2015, Vol. 52, N 2:

²³ Steu O. B. Кузнецова. Дистанционное обучение: за и против. «Международный журнал прикладных и фундаментальных исследований», 2015, № 8 (часть 2); Т. А. Танцура. Аспекты дистанционного обучения в современных условиях. «Мир науки, культуры, образования», 2020, № 2(81):

- թեև բարձրագույն կրթություն առաջարկող հաստատությունների համար հեռավար ուսուցման ներդրումը կապված է մեծ նյութական ծախսերի հետ (ծրագրային ապահովում, տեխնիկական սարքավորումներ, հատուկ կադրերի պատրաստում և այլն), սակայն վերջին հաշվով երկարաժամկետ հեռանկարում նրանց ծախսերն էապես նվազում են,
- կրթության հնարավորություն են ստանում ֆիզիկապես սահմանափակ կարողություններ ունեցող անձինք, որոնք այդ պատճառով չեն կարող գտնվել դասասենյակում,
- ուսանողներին տալիս է իրենց ուսումնական գործընթացի կազմակերպմանը մասնակցելու հնարավորություն՝ ընտրելու ուսումնական նյութի հետ աշխատելու ժամանակն ու վայրը, որոշելու նյութի ուսումնասիրման արագությունն ըստ իրենց մտածողության առանձնահատկությունների,
- բարձրացնում է ուսման նկատմամբ ուսանողների գիտակցված վերաբերմունքի մակարդակը, զարգացնում է ռացիոնալ կերպով ժամանակն ու ջանքերը բաշխելու նրանց հմտությունը,
- համալսարանին հնարավորություն է տալիս առանց էական լրացուցիչ ծախսերի ընդլայնելու ուսանողների շրջանը,
- բարձրացնում է կրթության որակը (մասնավորապես՝ ուսումնական նյութի ընկալելիությունը) շնորհիվ արդիական տեղեկատվական համակարգերի ու միջոցների կիրառման:

Որպես հեռավար կրթության թերություններ կարելի է նշել.

- խորհրդատվության համար դասախոսի հետ անմիջական կապը սահմանափակ է,
- անմիջական «կենդանի» շփման հնարավորությունները (ուսուցիչների, դասընկերների, համալսարանի ղեկավարության հետ) սահմանափակ են, ինչը խոչընդոտում է ավանդական հարաբերությունների կառուցմանը, լսարանի առաջ հրապարակային ելույթ ունենալուն,
- ըստ որոշ փորձագետների կարծիքի՝ կան մասնագիտություններ, որոնք չեն կարող յուրացվել հեռավար կերպով (բժիշկ, անասնաբույժ): Սակայն, ըստ մի շարք հեղինակների՝ ներկայումս անգամ բժշկական կրթության համակարգում որոշ մոդուլներով հեռավար ուսուցումն ընդլայնվում և փոխարինում է ավանդական ակադեմիական բժշկական կրթությանը²⁴,
- ոչ բոլոր ուսանողներն են կարողանում պահպանել ինքնուրույնաբար աշխատելու շարժառիթավորումը, ընդամին արդյունքի վրա բացասաբար է ազդում դասախոսի մշտական վերահսկման բացակայությունը,

²⁴ *Stu Sh. Farahmand, E. Jalili, M. Arbab, M. Sedaghat et al.* Distance learning can be as effective as traditional learning for medical students in the initial assessment of trauma patients. "Acta Medica Iranica", September 2016, Vol. 54(9):

- ուսանողը հնարավորություն չունի համեմատելու իր պատրաստության միջանկյալ արդյունքներն այլ ուսանողների արդյունքների հետ, ընդ որում՝ անմիջականորեն համեմատելու ճիշտ տարբերակի հետ և այլն,
- անհամաժամանակյա ուսուցման պարագայում նյութը հուզական երանգավորմամբ ներկայացնող անձը անմիջականորեն ներկա չէ, ինչն ազդում է ուսանողի ընկալման աստիճանի վրա,
- լսարանային պարապմունք անցկացնելիս դասախոսը չի տեսնում, թե ինչպես են ուսանողները ըմբռնում նյութը (ըստ նրանց արտահայտած տեսակետների ու տված հարցերի, իր հարցերին պատասխանների) և չի կարող օպերատիվ կերպով շտկել ուսուցանման գործընթացը, այն է՝ նորից կրկնել դժվարընկալելի հատվածները, որոշ հարցերի վերաբերյալ տալ լրացուցիչ պարզաբանումներ, փոխել տեմպը,
- տարբեր ժամային գոտիների դեպքում համաժամանակյա ուսուցման ձկուն կազմակերպումը,
- համակարգչային տեխնիկայից օգտվելու գործընթացի մասնակիցների (հատկապես՝ տարեց դասախոսների) գործնական գիտելիքների ոչ բավարար մակարդակը,
- համակարգչային տեխնիկա ձեռք բերելու և (կամ) համացանցից օգտվելու ոչ բավարար հնարավորությունները,
- հեռավար կրթությունն առանց կառավարության հավաստագրման իրականացնելու հնարավորությունները և այլն:

ՀՀ-ում հեռավար կրթության ներդրման ջանքերը

Քանի որ կորոնավիրուսային համավարակի հետևանքով բազմաթիվ երկրներ ստիպված եղան շտապ անցնել հեռավար կրթության²⁵, անհրաժեշտություն ծագեց հեռավար կրթության ոլորտում կատարելու համակարգային ուսումնասիրություններ և վերլուծություններ, մասնավորապես՝ պարզելու դրա առավելություններն ու թերությունները: Այդ երկրների թվում էր նաև Հայաստանը, որտեղ նույնպես կրթական համակարգի գործունեության մեջ տեղի ունեցան փոփոխություններ, և առկայից հեռավար, մասնավորապես՝ առցանց, եղանակին հապշտապ անցումը երևան հանեց մի շարք խնդիրներ, որոնք անհրաժեշտ էր ուսումնասիրել, հարմարեցնել կրթական միջավայրի պահանջներին, վերացնել թերությունները, ինչպես նաև մշակել այնպիսի համակարգ, որը ապահովեր ապագա հավանական մարտահրավերների հաղթահարումը:

Սույն հոդվածի հեղինակները կատարել են բժշկական բուհում հեռա-

²⁵ Տես *A. Ю. Алексеева, З. З. Балкизов. Медицинское образование в период пандемии COVID-19: проблемы и пути решения. «Медицинское образование и профессиональное развитие», 2020, т. 11, № 2; D. Taylor, J. Grant, H. Hamdy, L. Grant et al. Transformation to learning from a distance. "MedEdPublish", 23 April 2020 (<https://mededpublish.org/articles/9-76>); Զ. Սանդարս, Ռ. Քորեիա, Ս. Դանկար և ուրիշները, Նշ. աշխ:*

վար կրթական համակարգի ներդրման նախնական վերլուծություն, որն էլ ամփոփ ձևով ներկայացնում ենք ստորև:

Բժշկական բուհում հեռավար կրթության ձևաչափի ներդրման հրատապությունը ցույց տվեց, որ այս ձևաչափով դասեր անցկացնելուն դասախոսները լիարժեք կերպով պատրաստ չէին: Այդուհանդերձ պետք է նշել, որ ուսանողներին փաստացի տրամադրվում էին էլեկտրոնային ձևաչափով բոլոր ուսումնական և մեթոդական նյութերը, որոնց հիմնական մասը դրվում էր համալսարանի հարթակում: Բացի այդ, ընթացիկ հսկողությունը և միջանկյալ ատեստավորումները կատարվում էին էլեկտրոնային գրադարանում՝ համակարգում որոշակի թեստային առարկաների բանկի (շտեմարանի) օգտագործմամբ:

Տվյալ պահի հրամայականն էր դասախոսի աշխատանքը տնից, ինչը առանձնահատուկ դժվարություններ է առաջացրել 60-ից բարձր տարիքի այն դասախոսների համար, որոնք մասամբ էին տիրապետում էլեկտրոնային հաղորդակցության միջոցների ընձեռած հնարավորություններին: Որոշակի հարթակ ներբեռնելու համար նրանց անհրաժեշտ էին մանրամասն հրահանգներ և խորհուրդներ: Հետևաբար կարևոր էր, որ դասախոսները կարողանային ուսանողներին փոխանցել ոչ միայն առարկայի ծրագրային բովանդակությունը, այլև բավական լավ մակարդակով տիրապետելին համակարգչին ու նոր համացանցային տեխնոլոգիաներին:

COVID-19 համավարակի շրջանում ԵՊԲՀ-ում իրականացվող հեռավար ուսուցման ընդհանուր գործընթացի համատեքստում ռազմաբժշկական կրթության որոշ տեսական հատվածներ դասավանդվել են տվյալ ձևաչափով: Ընդսմին կարևորվել են ռազմական և ռազմաբժշկական առարկաների ատեստավորման արդյունքները: Ստորև ներկայացնում ենք «Բուժծառայության կազմակերպում և մարտավարություն» (ԲԾԿՍ) առարկային վերաբերող տվյալները (Աղ.):

Աղյուսակ

ԲԾԿՍ առարկայի հեռավար ուսուցման տվյալները կլինիկական օրդինատորների մասով

n/h	Կլինիկական օրդինատորներ		Ստուգարքի արդյունքներ		Առաջադիմություն
	ընդամենը	ցիկլն անցել են	ատեստավորվել են	չեն ատեստավորվել	
1	505	297 (58,8 %)	245	52	85 %

Վերլուծությունը ցույց է տալիս, որ 505 կլինիկական օրդինատորներից ԲԾԿՍ առարկայի ցիկլն անցել են 297-ը (58,8 %), ընդ որում, նրանցից ատեստավորվել են 245-ը (82,5 %), ինչը հեռավար կրթության ոլորտում առաջադիմության տեսակետից բավական լուրջ և կարևոր ցուցանիշ է:

Համընդհանրացմամբ պայմանավորված՝ մի շարք փոփոխություններ տեղի ունեցան նաև հայաստանյան բուհերում: Կրթության որակի նկատ-

մամբ առաջ եկան նոր պահանջներ, որոնք բխում էին կրթության շարունակաբար փոփոխվող չափանիշներից, տնտեսության թվայնացման միտումներից, համաշխարհային տեխնոլոգիական զարգացումներից: Ի վերջո, այս ամենն իր վճռորոշ ազդեցությունն ունեցավ բուհերի ուսումնական պլանների, ծրագրերի, դասագրքերի, ինչպես նաև դասավանդողների մասնագիտական հմտությունների և ուսուցման տեխնոլոգիաների վրա: Ներմուծվեցին նոր երևույթներ և հասկացություններ՝ «վիրտուալ լսարան», «ուսուցիչ (*tutor*) – դասավանդող», «միջազգային հավաստագրում», «համընդհանուր կրթական պլան», «առջանց ատեստավորում» և այլն:

Այդուհանդերձ ներկայումս Հայաստանում դեռևս չկա մի բուհ, որն ունենա հեռավար կրթության ամբողջական համակարգ, ինչպես և դեռ չկա մի մասնագիտություն, որի տարբեր առարկաների ուսուցումը ամբողջովին կազմակերպված լինի հեռավար սկզբունքով:

Նոր պայմաններում փոխվում է նաև դասավանդողի դերը: Նա խիստ «վարժապետից» վերափոխվում է տեղեկատվական աշխարհում ուսանողի համար ուղեկցի, հրահանգչի, տեղեկատվական միջնորդի: Ընդամին նրանից պահանջվում է ոչ թե օպերատորական վարպետություն, այլ դասավանդման նոր մեթոդների մշակման ու կիրառման հմտություն: Դասավանդողի առաջ ծառանում են հետևյալ խնդիրները.

- օգնել ուսանողին գտնելու իր ուղին տեղեկատվական լաբիրինթոսում,
- ուսանողին ներկայացնել տեղեկույթի արդյունավետ և նպատակային որոնման ուղիները,
- ձևավորել ու զարգացնել ուսանողի՝ տեղեկույթի կառավարման (ընտրագատման, վերլուծության, մշակման) հմտությունները:

Տպավորություն է ստեղծվում, թե մի կողմից, մեր բուհերն աշխատում են կրթական գործընթացում հնարավորինս ներդրել նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաներ, սակայն, մյուս կողմից, չնայած որոշ արմատական փոփոխությունների, ուսուցումն ընթանում է գրեթե նույն հունով, ինչ մի քանի տասնյակ տարի առաջ:

Հեռավար կրթության մերօրյա պրոբլեմները

Հեռավար ուսուցման ամենակարևոր հիմնախնդիրը որակի վերահսկումն է: Այստեղ որակ ասելիս ի նկատի ունենք մարդկային, կրթական, նյութատեխնիկական ռեսուրսների, ուսումնական գործընթացի ու կրթական ծրագրերի և արդյունքների որակը: Անհրաժեշտ կրթական որակը պետք է ապահովի հատուկ, գիտականորեն հիմնավորված համակարգը: Մեր կարծիքով՝ բարձրագույն կրթության հեռավար ուսուցման որակի ապահովման համակարգը (*Distance Learning Higher Education Quality Assurance System*) կնպաստի հեռավար ուսուցման մրցունակության մեծացմանը և միջազգային շուկայում կրթության որակի չափանիշներին համապատասխանեցմանը²⁶:

²⁶ *Stu Elpipres Muhammad Niku*. Quality Management of Distance Learning Higher Education. "International Journal of Social Science and Human Research", March 2023, Vol. 6, Issue 3:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ կարևոր հիմնախնդիրներից է նաև հավաստագրումը, ուստի նպատակահարմար է ստեղծել հեռավար ուսուցման մասնագետների ատեստավորման և մասնագիտությունների հավաստագրման համակարգ: Բացի այդ, պետք է հավաստագրվեն նաև էլեկտրոնային դասընթացները, կրթական գործընթացի իրագործման ու կառավարման համակարգը:

Որտե՞ղ և ինչպե՞ս կարելի է կիրառել հեռավար ուսուցումը: Տվյալ դեպքում պետք է հաշվի առնել, որ բժշկական կրթությունն ունի իր առանձնահատկությունները՝ պայմանավորված դասախոս–ուսանող, բժիշկ–բուժառու հարաբերություններով: Հենց այստեղ է, որ հեռավար կրթությունը դրսևորում է իր ձկունությունը: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ, օրինակ, բժշկական ասպարեզում հետդիպլոմային ուսուցումը (օրդինատուրա, ինտերնատուրա) և ընտանեկան բժիշկների որակավորումը հեռավար ուսուցման դասընթացը կազմակերպողների և կառավարողների համար պարարտ հող են:

Հետդիպլոմային ուսուցում անցնող բժիշկը, առաջին հերթին, բուժառուներին օգնություն ցուցաբերող բժիշկ է, ուստի նա կարող է ուսմամբ զբաղվել միայն աշխատանքից ազատ լինելու ժամանակամիջոցում, ընդսմին զրադարան կամ ուսումնական հաստատություն հաճախելու համար գրեթե ժամանակ չի մնում:

Հեռավար կրթության ձկունությունն ապացուցվել է նաև ընտանեկան բժիշկների որակավորման գործում:

Բժշկական համալսարանում հեռավար կրթության կազմակերպումը, մեր կարծիքով, կարող է ներառել հետևյալ մեթոդները.

- տեսական առարկաների դասընթաց՝ առանց դասախոսի ներկայության,
- դասախոսի մասնակի ներկայությամբ գործնական պարապմունքներով ուղեկցվող առարկաների դասընթաց,
- դասընթացներ դասախոսի (բժշկի) ներկայությամբ (կլինիկական առարկաներ), որոնց ժամանակ հեռավար ուսուցումը կարող է կատարվել «*հեռուստաբժշկության*» (*telemedicine*) եղանակով:

Եվ այսպես. եթե հեռավար կրթության համար անհրաժեշտ նվազագույն մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսներն առկա են, ապա կարիք է առաջանում ուսուցման նորագույն մեթոդները, որոնք վաղուց արդեն ընդունվել և հաջողությամբ կիրառվում են անգամ հարևան երկրներում, ներդրել նաև մեր կրթական համակարգում՝ ավանդական ձևերին զուգահեռ: Ձեռնարկված փորձնական դասընթացների վերլուծական գնահատումները, առկա նախադրյալները, ինչպես նաև ժամանակի հրամայականը ստիպում են լրջորեն մտածել հեռավար ուսուցման ներդրման և զարգացման մասին:

Ամփոփում

21-րդ դարում կրթության կազմակերպիչները կարող են բախվել մի շարք խնդիրների, որոնցով պայմանավորված՝ ավանդական եղանակներով

ուսուցումը դժվարանում է կամ երբեմն դառնում է անհնար, ինչպես, օրինակ, *Covid-19* համաճարակի ժամանակ:

Տեղեկության ղարաշրջանում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) տարածման պայմաններում էլ՝ ավելի են կարևորվում աշխատողների գիտելիքների և հմտությունների խորությունն ու բազմապիստությունը: Հենց կրթության և ՏՀՏ-ի փոխհարաբերությամբ են պայմանավորված կրթության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով բուն կրթական համակարգի արդիականացումը, ուսուցման և ուսումնառության արդյունավետության մեծացումը²⁷:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները, համակարգիչը հնարավորություն են տալիս իրագործելու բազմաբնույթ հեռահաղորդակցություն, ներառյալ՝ տարբեր սոցիալական խմբերի համար նախատեսված կրթական ծրագրերը:

Ներկայումս միայն լսարանային դասախոսություններով ու պարապմունքներով հնարավոր չէ պատրաստել աշխատաշուկայում մրցունակ մասնագետների, հետևաբար մերօրյա կրթության հրամայականն է խմբային լայնածավալ քննարկումների և փորձի փոխանակումների միջոցով բազմակողմանի տեղեկացվածության ապահովումը: Այս առումով առաջին պլան է մղվում կրթության հեռավար, մասնավորապես՝ առցանց, եղանակը: Մագիստրատուրայի, ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի ուսումնառողները, աշխատելով և միաժամանակ հեռավար կարգով սովորելով, կարող են արդյունավետ կերպով կառավարել իրենց ժամանակը:

Հեռավար կրթությունն ունի ինչպես իր ռիսկերը (էլեկտրոնային գործիքներին վատ տիրապետում, ոչ ձեռնհաս մարդկային ռեսուրսներ՝ ի դեմս կրթության ոլորտի մասնագետների, ուսումնառողների ինքնակազմակերպվածության պակաս և այլն), այնպես էլ առավելությունները (ժամանակի և ֆինանսների խնայում, ուսումնական նյութերի և միջոցների բազմազանություն և ընտրության հնարավորություն, ֆիզիկական հաշմանդամություն ունեցող կամ գյուղական վայրերի բնակիչների համար կրթության հնարավորություն առաջատար բուհերում, ուսումն աշխատանքի հետ համատեղելու հնարավորություն, բուհերի համար՝ ուսանողների թվաքանակի ընդլայնում, ընտրովի լրացուցիչ դասընթացների կազմակերպում և այլն):

Հեռավար ուսուցումը՝ որպես համակարգված ուսուցման ձև, որի դեպքում ուսանողի և ուսուցանողի միջև անմիջական և ոչ անմիջական հաղորդակցումը կատարվում է հիմնականում տեղեկատվական, տեխնոլոգիական և հեռահաղորդակցային միջոցներով, պետք է անհրաժեշտաբար կանոնակարգված լինի իրավանորմատիվային փաստաթղթերով: Դա հնարավորություն կտա հաստատութենացնելու հեռավար կրթությունը և համապատասխանաբար բարձրացնելու նրա հասարակական արժեքը:

²⁷ Տես *Վազգեն Արստամյան*, Հեռավար ուսուցման տեխնոլոգիաները ԲՈՒՀ-ում: «Գիտական տեղեկագիր», ՀՏԴ 37.02(004.45) (<https://arar.sci.am/dlibra/publication/391567/edition/362205>):

НЕКОТОРЫЕ РАССУЖДЕНИЯ В ОТНОШЕНИИ ДИСТАНЦИОННОГО ОБРАЗОВАНИЯ

С. Г. ГАЛСТЯН, полковник запаса м/с, доктор медицинских наук, профессор, директор ВМОН Центра ЕГМУ; Г. А. АВETИСЯН, кандидат медицинских наук, доцент, проректор по послевузовскому и непрерывному образованию ЕГМУ; С. Г. АДАМЯН, кандидат медицинских наук, старший преподаватель кафедры физиологии ЕГМУ; Л. Р. АВETИСЯН, доктор медицинских наук, профессор, проректор по учебной работе ЕГМУ

РЕЗЮМЕ

В конце XX и в начале XXI веков число студентов во всем мире существенно возросло. Для удовлетворения спроса на высшее образование многие учебные заведения стали все масштабнее включать в свои учебные планы программы, предоставляющие возможности дистанционного обучения с применением современных цифровых технологий. Уже в 90-ые годы XX века университеты и колледжи начали предпринимать попытки перехода на следующий этап развития дистанционного образования – к формату онлайн курсов.

Исследования и анализы в сфере дистанционного образования позволили выделить и систематизировать ряд преимуществ и недостатков дистанционного образования в отношении очного, вечернего, заочного и самообразования. При этом в англоязычной и русскоязычной профессиональной литературе выделены следующие виды дистанционного обучения – синхронный, асинхронный и смешанный (гибридный).

В статье обсуждаются также результаты проведенного авторами исследования опыта внедрения в Ереванском государственном медицинском университете в учебный процесс дистанционного образования в период пандемии коронавируса.

Дистанционное обучение как систематизированная форма обучения, при которой обучающий и обучаемый разнесены в пространственном (а иногда и временном) отношении, а их общение происходит в основном с использованием информационных, технологических и телекоммуникационных средств, должно в обязательном порядке регулироваться нормативно-правовыми документами. Это позволит институционализировать дистанционное образование и соответственно повысить его общественную значимость.

SOME CONSIDERATIONS REGARDING DISTANCE EDUCATION

S. G. GALSTYAN, Colonel of Medical Service (Ret.), Doctor of Medicine, Professor, Director, Center for Military Medical Research, YSMU; G. A. AVETISYAN, PhD in Medicine, Associate Professor, Vice-Rector for Postgraduate and Continuing Education, YSMU; S. H. ADAMYAN, PhD in Medicine, Senior Lecturer, Chair of Physiology, YSMU; L. R. AVETISYAN, Doctor of Medicine, Vice-Rector for Educational Affairs, YSMU

SUMMARY

In the late 1900s and early 2000s, the number of students essentially rose globally. In order to meet the demand for higher education a great number of education institutions embarked on extensively integrating programs offering distance education with modern digital technologies in their curricula. Yet, in the 1990s universities and colleges kicked off efforts in transferring to the next stage of the distance education development, i.e., to the online course format.

Research and analysis in the field of distance education have made it possible to identify and systematize a number of advantages and disadvantages of distance education regarding full-time, evening, correspondence and self-education. Notably, in the English- and Russian-language professional literature the following types of distance learning are highlighted: synchronous, asynchronous and blended (hybrid).

The article also discusses the aftermaths of the study that authors have conducted on the experience of introducing distance education into the educational process at the Yerevan State Medical University during the COVID-19 pandemic.

Distance learning as a systematized form of education, in which the teacher and student are separated geographically (and sometimes in time), and their communication occurs mainly through the use of information, technological and telecommunication means, must be obligatorily regulated by statutes and legal documents. This will allow institutionalizing the distance education, and, accordingly, increasing its social significance.

ՌԱԶՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ



Դրվագ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի եռալեզու կայքի շնորհանդեսից

Երևան, 2023 թ. դեկտեմբերի 6



Մի պատկեր ռազմագիտական հանդեսի նորաստեղծ կայքի գլխավոր էջից



Ernest Beno,
Brigadier General (Ret.)
Former Academic Co-Lead, NATO Defence
Education Enhancement Programme (DEEP)
Armenia, (2017–2023)

“I wish to congratulate my Armenian colleagues and friends on the official launch of the newly redesigned website of the NDRU “Haikakan Banak” (“Armenian Army”) Defense-Academic Journal. I am confident that this new e-journal will promote research, analysis, debate and professional studies

in the armed forces and many academic institutions in Armenia. This in turn will greatly benefit concepts and initiatives that will enhance the strategic security and defense of Armenia. Please accept my compliments on furthering and enhancing professional military education and strategic studies in and for Armenia. My best wishes on this great initiative”.



Gawdat Bahgat,
Ph.D., Professor
Near East South Asia Center for Strategic
Studies (NESA)
National Defense University

“It has been a great honor to contribute to the Defense-Academic Journal's mission. Sending my best wishes to the Armenian people and government and looking forward to more collaboration between our two institutions and nations”.

Селиванов Виктор Валентинович, доктор технических наук, профессор, Заслуженный деятель науки Российской Федерации, заведующий кафедрой МГТУ им. Н.Э. Баумана, член НКС ВНЖ «Айкакан банак», **Ильин Юрий Дмитриевич**, кандидат технических наук, старший научный сотрудник, доцент кафедры МГТУ им. Н. Э. Баумана.



Сердечно поздравляем вас с запуском официального сайта военно-научного журнала «Айкакан банак» – ведущего журнала Министерства обороны Республики Армения. Очень приятно, что теперь можно зайти на ваш сайт и ознакомиться с новыми публикациями вашей дружной команды и авторов, взаимодействующих с вашим журналом. Желаем вам больших достижений и успехов в деятельности на благо процветания Армении, её надежной обороны и безопасности. С наилучшими пожеланиями.

ԵՊՀ ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր Հովհաննես Հովհաննիսյանի ուղերձը

Երևանի պետական համալսարանի և իմ անունից շնորհավորում եմ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի խմբագրությանը եռալեզու կայքի ստեղծման առթիվ: Հանդեսն իր գործունեությամբ էապես նպաստում է Հայաստանում պաշտպանական ոլորտում գիտական կադրերի պատրաստմանը, հայրենական ու համաշխարհային առաջավոր ռազմագիտական մտքի, գիտելիքների ու փորձի տարածմանը, Զինված ուժերի անձնակազմի ռազմահայրենասիրական դաստիարակությանը, հայրենի ռազմագիտական տերմինաբանության մշակմանը, պաշտպանական ոլորտի խնդիրների լուծման գործում հանրապետության առաջատար քաղաքացիական մասնագետների ներգրավմանը: Արդի չափանիշներին լիովին համապատասխանող եռալեզու կայքը ռազմագիտական ոլորտում համագործակցության հարմարավետ հարթակ է, որը, անշուշտ, զինվորական ու քաղաքացիական փորձագետների ջանքերի ավելի արդյունավետ, սիներգիական համատեղումն է՝ ի նպաստ Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության և անվտանգության ապահովման:



*ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետ,
իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ, ոստիկանության
գնդապետ Մանուկ Հովհաննեսի
Մուրադյանի ուղերձը*



Շնորհավորում եմ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի խմբագրությանը նորաստեղծ եռալեզու կայքի ստեղծման առթիվ: Հայերեն ռազմագիտական տերմինաբանության մշակմամբ հանդեսը նպաստել է պաշտպանական ոլորտում միասնական հասկացութենական ապարատի ձևավորմանը: Ռազմագիտական հանդեսի անձնակազմին մշտապես հաջողվել է գիտական չափանիշներին համարժեք հրապարակել ՀՀ պաշտպանությանը և անվտանգությանը վերաբերող գիտական հետազոտություններ: Համոզված եմք, որ ժամանակակից չափանիշներին համարժեք եռալեզու կայքի ստեղծումը ռազմագիտական ոլորտում համագործակցության նոր հնարավորություններ է ստեղծում՝ նպաստելով ՀՀ-ում պաշտպանունակության ու անվտանգության մակարդակի բարձրացմանը:

*ՀՀ պետական կառավարման
ակադեմիայի ռեկտոր, տեխնիկական
գիտությունների թեկնածու
Խաչատուր Աշոտի Ղազեյանի
ուղերձը*



ՀՀ պետական կառավարման ակադեմիայի աշխատողների և իմ անունից շնորհավորում եմ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի խմբագրությանը եռալեզվյան կայքի ստեղծման առթիվ: Ռազմագիտական հանդեսը իր գործունեությամբ մեծապես նպաստում է ռազմական ոլորտում ձևավորվող առաջավոր մտքի ու փորձի՝ ՀՀ-ում տեղայնացմանը և տարածմանը, պաշտպանական ոլորտում գիտական կարգերի և բարձր բարոյահոգեբանական հատկություններով օժտված զինծառայողների ու նրանց կոլեկտիվների պատրաստմանը, ռազմագիտական տերմինաբանության մշակմանը՝ այդ կարևոր գործում ներգրավելով ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական մասնագետների: Հանդեսի խմբագրությանը մաղթում եմ նորանոր ստեղծագործական հաջողություններ ու նվաճումներ:

**ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ
ՈՐՊԵՍ ԸՆԴԱՐՁԱԿԱԾ ՕՐԱԿԱՐԳՈՎ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՔ***

*Մ. Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
«Հայկական բանակ» ՌԳՀ գիտախորհրդատվական խորհրդի անդամ,
Մ. Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Ներածություն

Հոդվածում «Քաղաքակրթական քաղաքական նախագիծ» հայեցակարգի իմաստային բազմաշերտությունը ուսումնասիրված է միջգիտակարգային մեթոդով: Դա հեղինակներին հնարավորություն է տվել հիմնավորելու այն մոտեցումը, որ անորոշություններով և տուրբուլենտությամբ բնութագրվող իրականությունում



տեղի ունեցող մեխանիկական արդիականացումը կանխելու նպատակով անհրաժեշտ է անվտանգության ապահովման ռազմավարական կառավարումը հիմնել «գիտավերլուծական» հարացույցի սկզբունքների վրա: Սույն հոդվածի հեղինակները, հիմնավորելով այն տեսակետը, որ «փորձի և սխալի» մեթոդով կատարվող վերլուծությունը նպատակահարմար չէ, առաջ են քաշել այն վարկածը, որ համընդհանուր *տուրբուլենտության* պայմաններում *ազգ-պետություն-հասարակություն-անհատ* շղթայի անվտանգությունը խոցելի է, քանի դեռ «ուժային կենտրոնների» հետ համագործակցությունը չի խարսխվում քաղաքակրթական քաղաքական նախագծի բնականոն արդիականացման վրա: Դրա վառ վկայություններն են որոշ չճանաչված պետությունների բնակչության նկատմամբ «մայր պետությունների» կիրառած էթնիկական զտումների, ցեղասպանական քաղաքականությամբ ուղեկցվող բռնի տեղահանումների և այլ բնույթի բռնի գործողությունների ձեռնարկումը: Հեղինակները հավատացած են, որ արդի աշխարհում պետությունների պաշտպանունակության ռազմավարական զարգացման մոդելների և խաղային սցենարների մշակումը պետք է կատարվի քաղաքակրթական քաղաքական նախագծի՝ որպես անվտանգության ապահովման հիմքի դիտարկմամբ: Այստեղից էլ հետևում է, որ *«խելացի պետության, խելացի հասարակության, քաղաքական, քաղաքացիական և ազգային ինքնությամբ օժտված քաղա-*

* Հոդվածն ստացվել է 15.01.2024: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 20.05.2024:

բացու» ռազմավարական զարգացման մոդելը կարող է ներկայացված լինել որպես «գիտավերլուծական» հարացույցի կիրառման արդյունք: Ըստ այդմ, հեղինակները համոզված են, որ տվյալ մոդելը իր կառուցվածքային բազմաշերտությամբ ապահովում է քաղաքակրթական քաղաքական նախագծի ռազմաքաղաքական, աշխարհաքաղաքական, սոցիոմշակութային և մարդկային ռեսուրսների բնականոն արդիականացումը: Այսինքն՝ ՀՀ-ի նկատմամբ տվյալ գաղափարը կիրարկելու դեպքում կարող ենք պնդել, որ միայն ռազմավարական մտածողության շնորհիվ է հնարավոր մշակել անվտանգայնացման ուղենիշները՝ հայոց քաղաքակրթության և պետության գոյունակության մեծացմամբ: Այսպիսով՝ հնարավոր կլինի հայկական քաղաքակրթական «Ես»-ի մրցունակության ապահովման նպատակով դիմակայել հիբրիդային պատերազմների հիմնական բաղադրիչին՝ կիբեռպատերազմներին, ստեղծել կիբեռզորքեր: Ընդամին ապագայում ՀՀ բարձր մակարդակի մրցակցային հնարավորությունների զարգացումը կառավարելու համար պահանջվում է, որ քաղաքակրթական քաղաքական նախագիծը որպես անվտանգության ընդարձակված օրակարգի հիմք դիտարկելու ժամանակ դրանում արտացոլված լինեն անցյալի *սպառնալիքները, ներկայի մարտահրավերները և ապագայի տեսլականը*:

Հետազոտության արդիականությունը

Ժամանակակից աշխարհում սոցիալ-քաղաքական արդիականացումը տեղի է ունենում անհավատալի արագությամբ և հանրային կյանքի բազմաթիվ աններդաշնակ կերպափոխումների հետևանքով առաջ է բերել անվտանգության ռազմավարական կառավարման բազմաթիվ պրոբլեմներ: Հանրային կյանքի բոլոր ոլորտներում ծավալվող և մշտապես որակական զարգացում ապրող տեխնոլոգիական նորամուծություններով հագեցած գործընթացները ուժեղացրել են ցանցային մրցակցությունը «ուժային կենտրոնների» համաաշխարհային աստիճանակարգությունում: Հետևաբար, անվտանգության ապահովման ռազմավարական կառավարման նկատառումներով անհրաժեշտ է առկա քաղաքականության մասին օբյեկտիվ գիտական պատկերացում կազմելու համար արդիականացման գործընթացների քաղաքակրթական հիմքերը վերլուծել համընդհանուր (գլոբալ), համատեղայնական (գլոկալ) և տեղային (լոկալ) մակարդակներում¹: Այդ դիտանկյունից նկատի պետք է ունենալ, որ «ուժային կենտրոնները»՝ որպես միջազգային հարաբերությունների ակտիվ սուբյեկտներ, զարգացող երկրների նկատմամբ կիրառում են քաղաքակրթական նույնականացման և մշակութային համահարթեցման քաղաքականություն: Հետևաբար, քաղաքական արդիականացման քաղաքակրթական չափման կարևորմամբ, անորոշություններով հագեցած կերպափոխումների վերլուծությունը արդյունավետ է

¹ Տես Մ. Մ. Մարգարյան, Քաղաքական արդիականացման քաղաքակրթական չափումը որպես ռազմավարական կառավարման ապահովման հիմք: «Հայկական բանակ», 2017, հմ. 4:

այն հարցերի պատասխանների որոնման և ձևակերպման տեսանկյունից, թե ինչպես է ժամանակակից քաղաքակրթությունը արագորեն փոխակերպվում տեխնոլոգիական նորամուծությունների ազդեցությամբ, ինչպիսիք են անվտանգության ապահովման և իշխանության բաշխման խաղային կառուցակարգերը, որոնք գործում են քաղաքակրթությունների միջև, ինչպիսին է արդի տուրբուլենտ պայմաններում քաղաքակրթությունների բախման, մրցակցության կամ համագործակցության արժեքային համակարգը՝ իրական է, թե խաղային: Համոզված ենք, որ քաղաքակրթական մոտեցումն անհրաժեշտ է արևմտյան և ոչ արևմտյան հասարակությունների տնտեսական բարգավաճման, հոգևոր վերելքի կամ անկման, անկախորեն զարգանալու անկարողության վերարտադրման գործընթացի վերլուծության, «օտարների» նկատմամբ ագրեսիվության և ռազմատենչության պատճառների պարզման, ինչպես նաև «համաշխարհային տիրապետության և համընդհանուր առաջավարության առնչությամբ հավակնությունների ձգտումների լուսաբանման»² համար:

Սույն մոտեցումը կարող է կիրառվել տարբեր տարածաշրջաններում տեղի ունեցող էթնոքաղաքական հակամարտությունների նկատմամբ:

Ուսումնասիրվող թեմայի գիտական մշակվածության աստիճանը

«Քաղաքակրթական քաղաքական նախագիծ» հասկացության իմաստային բազմաշերտությամբ պայմանավորված է դրա բովանդակային դաշտի համակարգային ուսումնասիրության նկատմամբ միջգիտակարգային մոտեցումը, որով էլ հարստացվում է այս հայեցակարգի բովանդակությունը: Փորձելով հստակեցնել այս երևույթի միջոցով անվտանգության ապահովման քաղաքական ոլորտի արդիականացման առանձնահատկությունների մեկնաբանումը՝ այն հատուկ շեշտադրմամբ ուսումնասիրել են Դ. Բելլը, Լ. ֆոն Բերտալանֆին, Թ. Պարտոնսը, Շ. Էյզենշտադտը և շատ ուրիշներ: Տվյալ ասպարեզում առանձնահատուկ տեղ են գրավում քաղաքակրթության տեսության դասականների հիմնարար աշխատությունները (Օ. Շպենգլեր, Ֆ. Բրոդել, Ա. Թոյնբի, Կ. Յասպերս, Ջ. Բեքինսկի, Ջ. Վալերշտայն, Ս. Հանտինգտոն): Նշված գիտնականները հիմնավորել են քաղաքական արդիականացմանը բնորոշ մշակութային առանձնահատկությունները, որոնց հիման վրա տարբեր դերակատարներ ստեղծում են և իրագործում են քաղաքակրթական քաղաքական նախագծեր: Քաղաքակրթության որպիսությունը ուսումնասիրող հեղինակները տարաբնույթ կերպ են մեկնաբանել հասկացությունը: Մեր համոզմամբ՝ կարևոր են հետևյալ մոտեցումները: Ըստ Օ. Շպենգլերի՝ «Ամեն մի Մշակույթ ունի *իր ուրույն* Քաղաքակրթությունը... Քաղաքակրթությունը Մշակույթի անխուսափելի ճակատագիրն է... Քաղաքակրթությունը առավել արտաքին և մարդակերտ այն վիճակն է, որին

² Տես 3. *Бжезинский*. Выбор. Глобальное господство или глобальное лидерство. М., 2005, сс. 21–22:

ընդունակ է զարգացած մարդկության տվյալ տեսակը...»³: Իսկ Ա. Թոյնբիին համարում է, որ «մշակութային տարրերը քաղաքակրթության էությունն են»⁴: Քաղաքակրթության զարգացման մասին իր փիլիսոփայական ընկալման հիմքում դնելով «կրոնի վերընթաց շարժումը»՝ նա գրել է. «Եթե կրոնը պատկերացնենք որպես մարտակառք, ապա նրան Երկինք համբարձող անիվները կլինեն պարբերաբար Երկրի վրա իշխող քաղաքակրթություններ: Թվում է, թե քաղաքակրթությունների շարժումը փուլաշրջանային և կրկնվող է, մինչդեռ կրոնի շարժումը մեկ շարունակական վերընթաց գծով է: Ծնունդ–մահ–ծնունդ փուլերով քաղաքակրթությունների փուլաշրջանային շարժումը ծառայում է կրոնի շարունակական վերընթաց շարժմանը և խթանում այն»⁵: Ի գիտություն ընդունենք այս դասականների բերված հեղինակավոր տեսակետները, սակայն նշենք, որ մեր դեպքում ելակետային է քաղաքակրթության մասին առավել ամբողջական բանաձև սահմանած Վիլ Դյուրանի մոտեցումը. «Քաղաքակրթությունը մշակութային արարչագործությունը խթանող սոցիալական կարգ է: Այն բաղկացած է չորս տարրերից՝ տնտեսական ապահովություն, քաղաքական կազմակերպվածք, բարոյական ավանդույթներ և ձգտում դեպի գիտելիք ու արվեստներ: Այն սկսվում է այնտեղ, որտեղ ավարտվում են քառսն ու անապահովությունը: Քանի որ վախի հաղթահարման դեպքում ազատություն են ստանում հետաքրքրասիրությունը և կառուցողականությունը, ու մարդը բնական մղումով սկսում է հասկանալ և բարեկարգել կյանքը»⁶: Վ. Դյուրանի սույն մոտեցումից ակնհայտ է, որ քաղաքակրթությունը համայնքային (ազգ–պետություն–հասարակություն–անհատ) համակեցությունը համախմբող իշխանության իրականացման մշակույթը քաղաքականապես արդիականացնող մեծություն է: Արդեն 1990-ականների վերջից պարզ էր, որ քաղաքական արդիականացումը ձեռք է բերել ազգային բնույթ, քանի որ, ինչպես գրում է Շ. Էյգենշտադտը, «Մարդիկ ականատես են դարձել, թե ինչպես է մեկ ժամանակակից (եվրոպական) քաղաքակրթությունը վերածվել մի քանի ժամանակակից քաղաքակրթությունների: Արդիականացման տեսությունն այլևս չի համարվում ավարտուն: Սա նշանակում է, որ ժամանակակից եվրոպական քաղաքակրթության օրինաչափությունները տարածվել են այլ հասարակություններում՝ հանգեցնելով մի շարք նոր տատանումների»⁷: Այսօր տվյալ մոտեցումը միանշանակ կերպով սկզբունքային է, քանի որ «արդիականացումը այլևս չի կարող դիտվել որպես բոլոր հայտնի հասարակությունների էվոլյուցիայի վերջնական

³ O. Spengler. The Decline of the West. English abridged edition prepared by Arthur Helps from the translation by Charles Francis Atkinson. New York, Oxford, 1991 [1926, 1928, 1932], PP. 24–27 (https://books.google.am/books?id=jYjYLoGSsQgC&printsec=frontcover&hl=ru&source=gbs_ge_summary_r&cad=0#v=onepage&q&f=false).

⁴ A. J. Toynbee. A Study of History (Vol. I-IV), Vol. IV. London, New York, Toronto, 1955, P. 57.

⁵ A. J. Toynbee. Christianity and Civilization. Wallingford, PA., 1947, PP. 6, 26.

⁶ W. Durant. The Story of Civilization. Part I: "Our Oriental Heritage". New York, 1954, P. 1.

⁷ S. N. Eisenstadt. Power, Trust and Meaning. Essays in Sociological Theory and Analysis. Chicago, 1995, P. 34.

նպատակ: Արդիականացման նկատմամբ այս նոր մոտեցմամբ չի ենթադրվում, որ արդիականացումը կբացահայտի բոլոր հասարակություններին բնորոշ էվոլյուցիոն ներուժը»⁸: Մեր կարծիքով՝ մեխանիկական արդիականացման գործընթացում ծնունդ առած անորոշությունների կանխման նպատակով անհրաժեշտ է կարևորել նաև ընդարձակված օրակարգով անվտանգության ապահովման հայեցակարգը, որը մշակել են Կոպենհագենյան դպրոցի ներկայացուցիչներ Բ. Բյուզանը և նրա համախոհները⁹: Սակայն, հրապուրվելով գծային ազատականացմամբ և վաուչերային սեփականաշնորհմամբ, նորանկախ հետխորհրդային երկրների քաղաքական դերակատարները անտեսեցին քաղաքակրթական քաղաքական նախագծերը՝ որպես ընդարձակված օրակարգով անվտանգության ապահովման ռազմավարական կառավարման հիմք, և ընկան քաղաքական զարգացման ձգնաժամների մեջ: Այդ ձգնաժամների հաղթահարման դիտանկյունից էլ այսօր քաղաքականության տեսության նոր մոտեցումների հիմնավորմամբ կարևորվում է քաղաքակրթական քաղաքական նախագծերի բնականոն արդիականացման՝ որպես *ազգի-պետության-հասարակության-անհատի* կենսունակության գրավականի անհրաժեշտությունը¹⁰:

Հետազոտության մեթոդաբանություն

«Քաղաքակրթական քաղաքական նախագիծ» հայեցակարգը¹¹ ֆունկցիոնալ նշանակություն ունի ինչպես համընդհանուր, այնպես էլ համատեղայնական և տեղային անվտանգության ապահովման ճարտարապետության և նոր աշխարհակարգի կայացման մակարդակում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական վերափոխումների առանձնահատկությունների, օրինաչափությունների, սպառնալիքների և հետևանքների էությունը պարզելու և կառավարելու տեսանկյունից: Ակնհայտ է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո էլ շարունակում է արդիական մնալ «աշխարհի փոփոխությունները կրում են քաղաքակրթական բնույթ»¹² մոտեցումը: Դա էլ իր հերթին պահանջում է նորանկախ երկրներից վարքաբանական և սիներգետիկական մեթոդների գործիքակազմի կիրառման միջոցով համընդհանուր և համատեղայնական քաղաքականությունների ոլորտում անվտանգային խնդիրների մասշտաբային լուծումների նախագծում և իրագործում: Համոզված ենք, որ սույն մոտեցումը կարող է արդյունավետ լինել Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովմանն ուղղված գործընթացների վերլուծության և

⁸ Տես, նույն տեղում, էջ 36:

⁹ Տես *B. Buzan. People, States and Fear: The National Security Problem in International Relations*. Brighton, 1983:

¹⁰ Տես *И. Тимофеев. Государство-цивилизация и политическая теория*, 18.05.2023 (<https://ru.valdaiclub.com/a/highlights/gosudarstvo-tsvivilizatsiya-i-politicheskaya-teoriya/>):

¹¹ Տես *М. В. Горбачев. Концепт «цивилизационный политический проект»: между теорией цивилизаций и проектным подходом. «Известия Саратовского университета»*. Новая серия. Серия: «Социология. Политология», 2020, т. 20, вып. 1:

¹² Տես *С. Хантингтон. Столкновение цивилизаций*. М., 2003, с. 14:

քաղաքակրթական այլ նախագծերի շրջանակներում «քաղաքակրթական քաղաքական նախագիծ» հայեցակարգի համակարգային ուսումնասիրությունը կատարելու համար: Քաղաքակրթական հիմք ունեցող քաղաքական նախագծերը սերտորեն միահյուսված (պայմանավորված) են քաղաքական իշխանության իրականացման մշակույթի բնականոն արդիականացման հետ: Այստեղից էլ բխում է, որ այդ նախագծերը մակրոմակարդակում անվտանգության ապահովման նկատառումներով ենթադրում են ոչ թե դարերով ձևավորված արժեքների մեխանիկական փոփոխում կատարելու պարտավորության ստանձնում, այլ «ուժային կենտրոնների» հասարակությունների և պետությունների հետ համագործակցության մշակույթի զարգացում: Կարծում ենք, որ տվյալ մոտեցումը ուշագրավ է այն առումով, որ քաղաքականության տարբեր դերակատարներ կարող են գեներացնել միմյանց հետ մրցակցող քաղաքակրթական քաղաքական նախագծեր, ինչի շնորհիվ էլ կարող է ստեղծվել «արժեքային խճանկարի», կամ «արժեքային գեղադիտակի» էֆեկտ: Որպես արդյունք՝ քաղաքականությունը, քաղաքական իշխանության կենսունակությունը պահպանելուց բացի, կերպափոխվում է հասարակության ռազմավարական կառավարման համար քաղաքակրթական քաղաքական նախագծերի մրցակցության դաշտի, որում խաղադրույք են դրա վերարտադրության նկատմամբ վերահսկողությունը և ձեռք բերված ռազմավարական բնույթ ունեցող ապագայամետ իշխանությունը:

Քաղաքակրթական հիմքով նախագծային մոտեցումը հնարավորություն է տալիս նորովի ուսումնասիրելու ժամանակակից համընդհանուր, համատեղայնական և տեղային քաղաքականությունների մի շարք առանցքային անվտանգային հարցեր: Միևնույն ժամանակ համոզված ենք, որ հնարավոր է փոխել այդ հարցերի ոչ միայն դիտարկման անկյունները, այլև վերլուծության մեթոդաբանությունը՝ մշակելով դրանց բնականոն արդիականացման խնդիրների լուծման նկատմամբ նոր հայեցակարգային մոտեցումներ:

Քաղաքական արդիականացման փորձը, որը կուտակվել է պատմության հովիվույթում, ապացուցում է, որ յուրաքանչյուր քաղաքակրթության քաղաքական նախագծի սուբյեկտները մշտապես ձգտում են իրենց նախագծային դաշտում ներառելու (ընդգրկելու) նոր արժեքներ կրող դերակատարների: Վերջիններս կարող են ունենալ տվյալ տարածության մեջ պատմականորեն ձևավորված քաղաքակրթության հետ ձևական ընդհանրություններ, ավելի հստակ կերպով արտահայտված աշխարհաքաղաքական նկրտումներ և այն ապագաբանական հեռանկարում քայքայելու, ձևախեղելու և՛ գաղտնի, և՛ ակնհայտ նախագծեր: Այդ պատճառով էլ դրանք՝ որպես այլընտրանքային քաղաքակրթական կենտրոնների դաշնակից «մեծություններ», իրենց արժեքաշահային համակարգով ներխուժում են այլ պետությունների և հասարակությունների ժամանակատարածության մեջ՝ ստեղծելով այլընտրանքային ընկալումներ ինչպես արժեքաբանության, այնպես էլ անվտանգության ապահովման առումով: Այս երևույթն էլ, դառնալով անորոշությունների և տուրբուլենտության աղբյուր, պարբերաբար մարտահրավեր նետելով պատմականորեն ձևավորված տեղայնական քաղաքակրթական

քաղաքական նախագծի անվտանգության ապահովման համակարգին, ստիպում է նրանց «ձռձվել» ըստ շուկայի հրամայականի: Այստեղից էլ՝ մարդկանց մեծ մասը, վախենալով դուրս մնալ ժամանակի արագացված «ձռձից», գիտակցորեն հարկադրված է լինում դուրս գալ իր քաղաքակրթական տեսակի նույնիսկ բնականոն արդիականացման գործընթացից կամ մերժել այն՝ հասկանալով, որ իր ազատ ընտրության հնարավորությունը «շուկայական հարաբերությունների պայմաններում նշանակալիորեն սահմանափակվում է»¹³: Կարծում ենք, որ անորոշ և տուրբուլենտ իրավիճակից դուրս գալու համար նպատակահարմար է սիներգետիկական մեթոդով վերլուծել և մոդելավորել քաղաքակրթական քաղաքական նախագիծը որպես ՀՀ-ի անվտանգության ապահովման ընդարձակված օրակարգի հիմք: Սիներգետիկական որպես բարդ ինտեգրատիվ համակարգերի ինքնակազմակերպման տեսություն, արդեն բազմիցս ապացուցել է իր պիտանիությունը կուտակված խնդիրներին հեռանկարային լուծումներ առաջարկելու, նոր ծագող քառասյին երևույթների պատճառները և անորոշությունների ներքին ու արտաքին պատճառները պարզելու, ինչպես նաև մարդու, հասարակության և բնության էվոլյուցիայի բնույթն իր իսկությամբ հանդերձ գնահատելու գործում: Միևնույն ժամանակ, սիներգետիկական մեթոդով *ազգ-պետություն-հասարակություն-անհատ* շղթայի անվտանգության ապահովումը «գիտավերլուծական» հարացույցի շրջանակներում դիտարկելու դեպքում հնարավոր է լինում հենվել Կոպենհագենյան դպրոցի մշակած «ընդարձակված օրակարգով անվտանգության ապահովում» և «անվտանգայնացում» հասկացությունների վրա¹⁴: «Անվտանգայնացումը (*securitization*) ենթադրում է պետության և հասարակության միջև անվտանգության ապահովման գործառույթային այնպիսի բաժանվածություն, որի շրջանակներում բացահայտելով համաշխարհային համակարգում պետության ունեցած դերի փոփոխությունների բնույթը, հոգուտ անվտանգության ապահովման «փափուկ» և «կոշտ» մեթոդների, հնարավորություն է ընձեռվում ազգային պետություններին ճիշտ գնահատելու գերակայությունները և կառուցելու անվտանգության արդյունավետ հարացույց: Այսօրինակ շեշտադրմամբ կարող ենք հիմնավորել մոտեցումը առ այն, որ «վերաարժեքավորումների փոթորկայնությամբ» և «փորձի և սխալի» հարացույցի շրջանակներում իրականացվող վերլուծությամբ անհնար է իսկության մեջ ազգային անվտանգության ընդարձակված օրակարգի ապահովման և հասարակության զարգացման ռազմավարություններ մշակել»¹⁵: Հետևաբար քաղաքա-

¹³ Տես Ջ. Փրոմմ. *Здоровое общество. «Психоанализ и культура»*. М., 1995, сс. 351–352:

¹⁴ Տես Օ. Ս. *Гайдаев*. Теория секьюритизации, или Хорошо забытое старое: к вопросу о теоретико-философских истоках и зарождении теории. «Вестник РУДН». Серия: «Международные отношения», 2021, № 1:

¹⁵ Տես Մ. Մ. *Մարգարյան, Մ. Գ. Մարգարյան*, Քաղաքական տուրբուլենտություն. մարտահրավերներ և Հայաստանի բնականոն արդիականացման հնարավորությունները: «ՀԲ», 2020, հմ. 2:

կրթական քաղաքական նախագծի փաստարկմամբ հիմնավորում ենք այն վարկածը, թե համընդհանուր տուրբուլենտության պայմաններում *ազգ-պետություն-հասարակություն-անհատ* շղթայի անվտանգությունը խոցելի է, քանի որ «ուժային կենտրոնները» խաղային մեխանիզմներ են կիրառում իրենց շահերի վերաարժեքավորման հետևանքով:

Հետազոտության արդյունքները

Ստեղծված բազմամակարդակ անորոշության պայմաններում, երբ նվազում է կանխատեսման հնարավորությունը, մարդն ստիպված է լինում վերանայել իր ամբողջ արժեքային համակարգի իմաստային նպատակահարմարությունը: Ձգտելով արագորեն հարմարվելու փոխակերպվող պայմաններին՝ մարդիկ սկսում են կայունությունն ու տևականությունը մերժել որպես բնականոն գոյության կարևորագույն պայման: Որպես ժամանակների միջև առաջացած խզման արդյունք՝ ակնհայտ է դառնում, որ վարքի ավանդական կաղապարներով (մոդելներով) անհնար է «ապահովել իր ապագան»: Անհատականացված հասարակության մեջ շատ արագ են փոխակերպվում ոչ միայն սոցիալական դիրքերը, այլև այն տեղերը, որոնք ձգտում են գրավելու մարդիկ: Պատկերավոր ասած՝ անընդհատ շարժման մեջ են գտնվում ոչ միայն մարդիկ, այլև «վազբուրդիները» և անգամ անվտանգության ապահովման համար մշակված ազատականացված «վերջնագիծը»: Հասարակության մեջ որոշակի վարկանիշ արտահայտող տեղի կորուստը դառնում է ընդամենը հերթական փորձառություն, որը ցանկացած մարդու կյանքում կարող է կրկնվել բազմաթիվ անգամ՝ հասցնելով ինքնաքայքայման և ինքնառնչացման: Այստեղից էլ կառավարման «փորձի և սխալի» սկզբունքից հրաժարվելու համար «գիտավերլուծական» հարացույցի շրջանակներում (տիրույթում) *ազգ-պետություն-հասարակություն-անհատ* շղթայի անվտանգությունը ապահովելու նպատակով պետք է նկատի ունենալ, որ այն միանշանակ կերպով համադրում (միավորում) է քաղաքակրթական քաղաքական նախագծի կառուցման համար անհրաժեշտ գաղափարներ և ռեսուրսներ, ստեղծում դրա հաստատութենական հիմքերը: Վերջինս համակարգայնորեն բացատրելու համար ելակետ կարող է ծառայել պատմական հոլովույթում «մշակույթը որպես տեքստ» գաղափարի* հիմքի վրա ձևավորված և կերպափոխվող «սոցիոմշակութային ներուժը (էներգիան)»:

* «Մշակույթը որպես տեքստ» (*culture as a text*) հասկացությունը մշակութաբան Քլիֆֆորդ Գիրցը դիտարկել է որպես պատմական ժամանակի մեջ ձևավորված և ցանցային եղանակով փոխանցված իմաստային նրբերանգներով խորհրդանշական կապիտալ, կրոնական, ծիսական, սովորույթային, ինչպես նաև պետության ու այլ կառույցների հաստատութենական հիշողության ձև ու սոցիալական վարքականոն: Ըստ Ք. Գիրցի՝ մարդը՝ որպես իր կերտած մշակութային ցանցի դերակատար, իր իսկ ստեղծած խորհրդանիշների, գաղափարաբանական կաղապարների ու մեկնաբանման ենթակա այն երևույթների համաձուլվածքն է, որոնք նրան հնարավորություն են տալիս ապահովելու իր անվտանգությունը և այն ժառանգելու սերունդներին (տես *Клиффорд Гирц. Интерпретация культуры. Пер. с англ. Под ред. С. Я. Левита. М., 2004*):

Այն իշխանության իրականացման որակի ընթացակարգային ու հուզական կողմերը համախմբող, նորմավորող, տարածաժամանակային չափումների մեջ ուղղորդող քաղաքակրթական երևույթ է: Լինելով որոշակի ճանապարհ անցած սոցիալական հաստատությունների (ազգ, պետություն, հասարակություն, անհատ) ներուժի և կենսունակության համապարփակության նկարագրություն՝ այն ունի և՛ համընդհանրական զարգացման մարտահրավերներին հարմարվելու, և՛ իր ինքնությունը բնականոն կերպով ու լռելյայն արդիականացնելու կարողություն: «Սոցիոմշակութային ներուժ» հասկացության նման ընդգրկուն ըմբռնումը հնարավորություն է տալիս դրա կառուցվածքի մեջ զուգամիտելու այնպիսի բազմաթիվ սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր արժեքային բնութագրեր, ինչպիսիք են բնակչության իրավական և քաղաքական գիտակցությունը, ազգային ինքնությունը, բնակչության ակտիվությունը (ներառյալ՝ ձեռնարկատիրական և նորամուծական), վերարտադրության գիտատեխնիկական մակարդակը: Այսպիսով՝ «սոցիոմշակութային ներուժը» ներառում է հատուկ չափումներ, որոնք անհրաժեշտ են քաղաքակրթական քաղաքական նախագծերի հակամարտային վերափոխումների առանձնահատկությունները բացատրելու համար: Այն կարող է կատարվել հետևյալ ուղղություններում.

- հասարակական կյանքի այն որոշման շրջանակներում, որտեղ «սոցիոմշակութային ներուժը» ներկայացված է ապագաբանական պարամետրներով,
- քաղաքակրթական քաղաքական նախագծերի արժեքային հիմքերի վերափոխման առանձնահատկությունների վրա «սոցիոմշակութային ներուժի» ազդեցության մեխանիզմների բացահայտման միջոցով,
- քաղաքակրթական քաղաքական նախագծերի արժեքային հիմքերի փոխակերպման հակամարտային մոդելների համակարգային ուսումնասիրությամբ: Քաղաքակրթական քաղաքական նախագծերի «սոցիոմշակութային ներուժը» ակտիվորեն օգտագործում են նախագծի համար պատասխանատու սուբյեկտները: Այդ ներուժի ակտիվացումը հնարավորություն է տալիս ապահովելու ծրագրի գործողությունների ավելի կայուն և լայնածավալ բնույթը: Միևնույն ժամանակ, «սոցիոմշակութային ներուժի» ակտիվացման մեխանիզմներն ուղղակիորեն կապված են նրա «էներգիայի աղբյուրների» հետ¹⁶: Փաստորեն, քաղաքակրթական քաղաքական նախագծերի փոփոխությունները սնվում են բազմաթիվ սոցիալական կառույցներից, որոնցից յուրաքանչյուրի մշակութային ներուժը եզակի է ամեն մի ազգի համար (իշխանություն, պետություն, բանակ, զին, գրականություն, կրթական համակարգ, խորհրդանիշներ, կրոն, թարգմանչական արվեստ, հերոսներ, հակահերոսներ, թշնամիներ, յուրայիններ և այլն): Միևնույն ժամանակ, պետք է նկատի ունենալ, որ պատմական

¹⁶ Stu S. N. Eisenstadt. The Civilizational Dimension in Sociological Analysis. "Thesis Eleven", 2000, Vol. 62, Issue 1:

զարգացման ընթացքում փոխություն են կրում ոչ միայն քաղաքակրթական քաղաքական նախագծերի վերափոխման մոդելները, այլև «էներգիայի աղբյուրները», ինչպես նաև դրանք «սնուցող և հակամարտային լարվածություններով հագեցած (փուլաշրջանային, գծային, իմպուլսային, հատվածային) մոդելներով վերափոխման բազմաթիվ դաշտերը»¹⁷:

Քանի որ տարբեր պատմական դարաշրջաններում «էներգիայի աղբյուրները» ունեն «ժամանակների բազմաքանակության»¹⁸ մեջ փոփոխվելու հնարավորություն, հետևաբար, նույնիսկ արդի անորոշ և տուրբուլենտ իրականությունում չի կարելի անտեսել այն հանգամանքը, որ միաժամանակ գոյություն ունի քաղաքակրթական քաղաքական նախագծերի արդիականացման (մեխանիկական, բնականոն) ժամանակի երկու տեսակի տևողություն՝ «երկարատև» և «կարճատև» (որում իրագործվում են անհատների շահերը, տեղի են ունենում տարբեր փաստեր և իրադարձություններ): «Երկարատև» ժամանակը համապատասխանում է լայնածավալ տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական գործընթացներին: Դրանց միտումները դարեր շարունակ մնում են հնարավորինս կայուն: Իր հերթին «կարճատև» ժամանակը չի բնութագրվում սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և քաղաքական միտումների կայունությամբ: Քաղաքակրթական քաղաքական նախագծերը նախատեսված են երկարաժամկետ հեռանկարի համար: Հետևաբար, «երկարատև» և «կարճատև» ժամանակներում դրանց ըմբռնման անհամապատասխանությունը հանգեցնում է նախագծի սոցիալ-մշակութային հիմքի և հաստատութենական կառուցվածքի հակասական փոփոխությունների: Նման փոփոխություններն իրենց բնույթով ընդհատ (դիսկրետ) են, հետևաբար միշտ չէ, որ դրանց պատճառներն ու հետևանքները ենթակա են միանշանակ գիտական գնահատականի: Այսպիսով՝ քաղաքակրթական քաղաքական նախագծերի «սոցիոմշակութային ներուժն» ունի երկակի բնույթ: Մի կողմից՝ սնուցվելով «էներգիայի տարբեր աղբյուրներից», այն կարևոր հիմք է ծառայում քաղաքակրթական քաղաքական նախագծի հետագա զարգացման համար: Մյուս կողմից՝ «սոցիոմշակութային ներուժի» ներքին փոփոխությունն ինքնին դառնում է քաղաքակրթական քաղաքական նախագծերի հակասական փոխակերպումների պատճառ: Մասնավորապես՝ այդ «ներուժի» սպառումը հանգեցնում է նախագծի ներքին գործունեության նվազման և ծրագրի գործունեության վրա ազդող արտաժին գործոնների գերակշռման: Որպես արդյունք՝ և՛ հաստատութենական, և՛ ոչ հաստատութենական նախագծերի փոփոխությունների ոչ օրգանական բնույթը աճում է:

Իրենց հերթին նախագծային փոփոխությունները խթանող այլընտրանքային «էներգիայի աղբյուրների» հայտնաբերումը հանգեցնում է նախագծային գործունեության ակտիվացմանը ներածին հիմունքներով: Այս դեպքում

¹⁷ Stu S. N. Eisenstadt. The Civilizational Dimension of Modernity. S. A. Arjomand, E. A. Tiryakian. Rethinking Civilizational Analysis. Sage Publications Ltd., 2004, PP. 48–66:

¹⁸ Сту Ф. Бродель. История и общественные науки. Историческая длительность. «Философия и методология истории». М., 1977, сс.115–142:

տեղի է ունենում քաղաքակրթական քաղաքական նախագծի արժեքային հիմքի օրգանական վերափոխում: Միևնույն ժամանակ, քաղաքակրթական քաղաքական նախագծերի փոխակերպումների հակամարտային բնույթը նվազեցնելու նպատակով կարելի է գուգամիտել *արդիականացման մեխանիկական և բնականոն գործընթացները*: Այս երկակիությունը ներքաղաքակրթական երկխոսության, պաշտպանունակ պետության և քաղաքացու անվտանգության ապահովման մեր այն բանաձևն է, որը հայկական քաղաքակրթությանը հնարավորություն կտա հարմարվելու անվտանգայնացման տարածաշրջանային խճանկարին¹⁹, բայց և հանրային հաստատությունների քանակական ու որակական աճի շնորհիվ պահպանելու իր հավատարմությունը մշակութային տեքստին՝ ստեղծելով *«խելացի պետություն, խելացի հասարակություն, քաղաքական, քաղաքացիական և ազգային ինքնություն ունեցող քաղաքացի»* ռազմավարական զարգացման մոդելը: Փաստորեն հաստատութենական մակարդակում կատարվող «գիտավերլուծական» հարացույցի սկզբունքի մշակման և իրագործման կարևորամբ ակնհայտորեն հիմնավորվում է մեր հոդվածի նպատակը. քաղաքակրթական քաղաքական նախագծի՝ որպես ՀՀ անվտանգության ընդարձակված օրակարգի ապահովման հիմքի դիտարկումը իր խաղային տրամաբանությամբ միանշանակ ենթադրում է ռազմավարական մտածողություն, որը խարսխվում է «հիմնարար հմտությունների վրա և օգնում է հասկանալու, թե ինչպես դրանցից քաղել առավելագույն օգուտ»²⁰: Ուեստի *«խելացի պետություն, խելացի հասարակություն, քաղաքական, քաղաքացիական և ազգային ինքնություն ունեցող քաղաքացի»* ռազմավարական զարգացման մոդելն ունի ընդգրկուն տարածաժամանակային բնույթ, քանի որ դրա կառուցվածքային բազմաշերտությունն ապահովվում է քաղաքակրթական քաղաքական նախագծի ռազմաքաղաքական, աշխարհաքաղաքական, սոցիոմշակութային և մարդկային ռեսուրսների բնականոն արդիականացմամբ: Այսինքն՝ միայն ռազմավարական մտածողության դեպքում է հնարավոր ՀՀ-ում անվտանգայնացման ուղենիշներ մշակել, ինչի շնորհիվ կմեծանան հայկական քաղաքակրթության մրցունակությունը ու պետության կենսունակությունը: Դա հնարավորություն կտա դիմակայելու հիբրիդային պատերազմների հիմնական բաղադրիչին՝ կիբեռպատերազմներին, և հայկական քաղաքակրթական «Ես»-ի ներկայացման նպատակով ստեղծելու կիբեռգորքեր (հատուկ ջոկատներ, քաղաքացիական խմբեր, անհատներ): Այս տրամաբանությամբ ենթադրվում է, որ քաղաքակրթական քաղաքական նախագծի տիրույթում «Ես»-ի ինքնությունն անվտանգ է, եթե պահպանվում է հանրային համակեցությունը: Այս տեսակետից հանրային համակեցությունը և սոցիալական պատասխանատվության ու համերաշխության հատման տի-

¹⁹ Տես *Մ. Մ. Մարգարյան*, Համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացման հիմնախնդիրները և «Հայկական աշխարհը»: «ՀԲ», 2011, հմ. 1–2:

²⁰ Տես *Ա. Դիկսիտ*, *Բ. Նեյլբաֆ*, Նշ. աշխ. էջ 15:

րույթները անհրաժեշտ է դիտել որպես սահմանադրությունից «սահմանադրականության» անցման կարևոր տարրեր: Դա պետք է ուղեկցվի ՀՀ-ում քաղաքակրթական քաղաքական նախագծի–ուղենիշների սահմանամաք՝ պատմականորեն ձևավորված ազգային հանրային հաստատությունների (ընտանիքի, կրթական համակարգի, պաշտպանունակ բանակի և ազգային եկեղեցու) բնականոն արդիականացմամբ: Այսպիսով՝ հնարավոր կլինի իրագործել *«խելացի պետություն, խելացի հասարակություն, քաղաքական և քաղաքացիական, ազգային ինքնությամբ օժտված քաղաքացի»* ռազմավարական զարգացման մոդելը, ինչպես նաև ապահովել հայ մարդու գոյաբանական պաշտպանվածության ու ինքնաիրացման հնարավորությունները: Տվյալ պարագայում կարևորելով համակեցության և սոցիալական պատասխանատվության զուգամիտության անհրաժեշտությունը՝ առաջարկում ենք ազգային անվտանգությունն ապահովելու նպատակով քաղաքակրթության քաղաքական նախագծումը համարել առաջին հերթին հոգևոր անվտանգության ապահովման պայման: Հոգևոր անվտանգությունը՝ որպես ազգի անցյալի, ազգային կերպարի, նկարագրի ու կեցության, ազգային հոգեկերտվածքի և մտածելակերպի (մենտալիտետի), ինչպես նաև ճանաչողության և իմացության ամբողջություն, համակարգում է՝

- տվյալ հասարակության գոյաբանական փորձը, որը *անցյալ–ներկա–ապագա* եռաչափության մեջ պատմության կարևորագույն իրադարձությունների ընկալման և արժեքների վերարտադրման հարատև գործընթաց է,
- պետութենաշինության մշակույթի զարգացման շնորհիվ ձևավորված և համագործակցության համար իրական պայմաններ ապահովող ստեղծարար գործունեությունը՝ օտարման ու եզրահանման (մարզինալության) չեզոքացմամբ,
- պետության և հասարակության անվտանգ ապագայի կանխատեսումն ու ռազմավարական տեսլականի մշակումը՝ ազգի ժողովրդավարական համայնքման և քաղաքացիավարական պատասխանատվության զարգացման ապահովմամբ: Այս համատեքստում հոգևոր անվտանգության ապահովումը ոչ միայն պատասխան է նոր մարտահրավերներին, այլև կարող է իր տեսակի մրցունակությունն ապացուցելու համար ձևավորել նոր որակի համագործակցության մշակույթ²¹:

Ժամանակակից տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների և քաղաքական զարգացումների միջավայրում ազգային ինքնության բնականոն արդիականացման գլխավոր կրողը քաղաքականապես սոցիալականացված երիտասարդությունն է: Հենց երիտասարդությունն է, որ իրեն նետված մարտահրավերների պայմաններում վերաարժեքավորում է *անցյալի–ներկայի–ապագայի* մասին քաղաքակրթական պատկերացումները, ինչպես նաև անվտանգ ռազմավարական ապագայի համար պատասխանատվության զգա-

²¹ Տես Մ. Գ. Մարգարյան, Համագործակցության մշակույթը՝ որպես ազգային անվտանգության ապահովման գործընթաց: «Գիտական Արցախ», 2018, հմ. 1:

ցումը²²: Իսկ երիտասարդության քաղաքական սոցիալականացումն արդյունավետ է, եթե շարունակական բարեփոխումների և մարդկային կապիտալի կառավարման հիմքում դրվում է քաղաքակրթական քաղաքական նախագծի բնականոն արդիականացման գործընթացը:

Եզրակացություն

«Քաղաքակրթական քաղաքական նախագիծ» հայեցակարգը ՀՀ ընդարձակված օրակարգով անվտանգության ապահովման կառուցվածքում ներառելու և արդյունարար կերպով գործադրելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալը.

- ներկայիս անորոշության և տուրբուլենտության պայմաններում անհրաժեշտ է հատուկ տարբերակմամբ պարզորոշել, թե քաղաքական նախագծման ո՞ր փուլում է քաղաքական նախագիծը «վերաճում» քաղաքակրթական քաղաքական նախագծի: Ակնհայտ է. որ «ուժային կենտրոնները» իրենց շահերի տիրույթում իրագործում են բազմաթիվ տարածաշրջանային ու տեղային քաղաքական նախագծեր, որոնք, սակայն, չեն կարող հավակնել քաղաքակրթական քաղաքական նախագծերի կարգավիճակի, քանի որ ծառայում են նրանց ազդեցության ապահովման նպատակներին: Հետևաբար, ընդարձակված օրակարգով անվտանգության ապահովման համար վճռորոշ է քաղաքական նախագծերի և քաղաքակրթական քաղաքական նախագծերի միջև զուգամիտող գծերի գործառույթային հստակեցումը,
- քաղաքակրթական քաղաքական նախագծերն ունեն ներուժ արմատապես փոխելու ցանկացած քաղաքակրթության արժեքային համակարգը, փոխազդեցության բնույթը, կենտրոնացումը, նախագծի այլընտրանքների որոնման հնարավորությունները: Այլ կերպ ասած՝ ներքին և արտաքին անվտանգության ապահովման տեխնոլոգիաների վրա ազդեցություն են գործում ինչպես համամարդկային արժեքների ձևավորման հետ կապված համընդհանրացման գործընթացները, այնպես էլ տեղային քաղաքակրթությունների առանձնահատկությունները: Վերջիններս ձևավորվել են դարերի ընթացքում և ի վիճակի են կանխելու առանձին պետությունների և հասարակությունների՝ իրենց դեմ ուղղված ակնհայտ և ծածուկ (լատենտ) սոցիալ-մշակութային արժեքային համահարթեցումը,
- քաղաքակրթական քաղաքական նախագծի՝ որպես ընդարձակված օրակարգով անվտանգության հիմքի դիտարկումը հնարավորություն է տալիս իրագործելու տեղային (դիցուք՝ ազգային) «մշակութային կողերի» նյութականացման ռազմավարությունը: Դրա էության իմաստավորումը ընտրությունն է. համընդհանուր և տեղային (ազգային) արժեքային համակարգերի զուգամիտման դեպքում կգերիշխի առաջինը, թե ընդհա-

²² Տես Մ. Մ. Մարգարյան, Մ. Ռ. Մովսիսյան, Երիտասարդության քաղաքական սոցիալականացումը որպես անվտանգության և կառավարման համակարգի արդյունավետության ապահովման պայման: «ՀԲ», 2022, հմ. 1:

կառակը՝ առաջատար դեր կխաղա երկրորդը՝ տեղայինը (ազգայինը): Սակայն այս բարդ ու բազմամակարդակ գործունեությունը ապագաբանական առումով արդիական է շնորհիվ քաղաքակրթական քաղաքական նախագծերում «մշակութային կողերի» առանձնահատկությունների ներդաշնակ վերլուծության,

- նոր աշխարհակարգի ձևավորման գործում «ուժային կենտրոնները» առանձնահատուկ նշանակություն են տալիս երիտասարդ պետությունների՝ որպես քաղաքակրթական քաղաքական նախագիծ ունեցող սուբյեկտի կարգավիճակին: Այս համատեքստում պետության՝ որպես քաղաքական համակարգի գերակա հաստատության, անվտանգության ապահովման գործառույթի համար ամբողջ պատասխանատվությունը կրում են քաղաքակրթական քաղաքական նախագծի հաստատութենական հիմքը բնականոն կերպով արդիականացնող և՛ **ղեկավար շրջանները**, և՛ *«արարչագործ փոքրամասնությունը»*՝ ռազմավարական ընտրախավը: Ըստ այդմ անվտանգության ընդարձակված օրակարգի ապահովման առումով հրամայական է դարձել բնականոն արդիականացման բազմամակարդակ ուսումնասիրությունը *«գիտավերուժական»* հարացույցի միջոցով,
- «ուժային կենտրոնների» հետ համագործակցության մշակույթը զարգացնելու նկատառումով պետք է քաղաքակրթական քաղաքական նախագծում ներառվեն անցյալի, ներկայի և ապագայի տարածաժամանակային չափումները: Այլապես Արևմտյան քաղաքակրթության հետ կապված «զարգացած պետությունները», համընդհանուր մակարդակում հանդես գալով որպես քաղաքական զարգացման ճգնաժամի մեջ գտնվող երկրների «դաշնակիցներ», ոչ միայն կզավթեն նրանց «Ես»-ը, այլև կկերպավորվեն այն՝ կիրառելով իրենց մշակած բազմամակարդակ խաղային տեխնոլոգիաները: Դա ուղեկցվում է այլընտրանքային արժեքներ կրող այն դերակատարների ակտիվացմամբ, որոնք կարող են քաղաքակրթական քաղաքական նախագծերով պայմանավորված հին և նոր կենտրոնների միջև հակամարտայնությունների առաջացմամբ, խորացնել անորոշությունները և դառնալ սոցիոմշակութային տեքստերի հատվածային աններդաշնակ փոփոխության պատճառ,
- արդի դարաշրջանում տարբեր քաղաքակրթությունների միջև թե՛ իրական, թե՛ երևակայական (վիրտուալ) տարածություններում ծավալված արժեքային զուգամիտումները, բախումները և երկխոսությունները ակնհայտ են դարձնում, որ համընդհանուր կառավարման համակարգի և համընդհանուր քաղաքացիական հասարակության ձևավորմանը մրցակցային մասնակցություն ունենալու համար հնարավոր է ազգային ինքնության արդիականացմամբ ընդարձակել ազգային անվտանգության կիրեռտարածականությունը: Այս իմաստով էլ ՀՀ-ում ուշադրության է արժանի երիտասարդության հարատև քաղաքական սոցիալականացման միջոցով քաղաքական, քաղաքացիական և ազգային ինքնությանը հարմարեցվող ինչպես արդիականացման ապահովման, այնպես էլ համընդհանուր արժեքների հաստատման անհրաժեշտությունը:

ՈԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՈՎՆԵՐԻ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՌՅԱԿ ՄԻՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ*

*Վ. Շ. ԳԵՎՈՐԳՅԱՆ, պահեստազորի փոխգնդապետ,
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Ուղղարկվեստի պատմության հետազոտությունների
կենտրոնի գիտնական-վերլուծաբան*



Ներածություն

Յուրաքանչյուր պետության սրբազան պարտականությունը և գերագույն գործառույթը իր ինքնիշխան տարածքի, բնակչության, կենսական շահերի տնտեսական և ազգային հոգևոր-մշակութային արժեքների պաշտպանությունն է օտար պետությունների, միջազգային ահաբեկչական կազմակերպությունների ու հանցագործ խմբերի բռնության ներգործություններից: Միևնույն ժամանակ, հայտնի է, որ արդի տեղեկութային աշխարհում ոչ մի պետություն չի կարող ապահովել իր անվտանգությունը՝ ապավինելով զուտ իր ուժերին: Դա նրան ստիպում է միավորվել տարաբնույթ կազմակերպություններում, որոնց խնդիրն է ապահովել իրենց անդամների անվտանգությունը քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ ոլորտներում:

Պատմական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նման համախմբումը ծնունդ է առել դեռ մարդկության ձևավորման շրջանում՝ խմբերի ու ցեղերի միավորման ձևով: Պետությունների ստեղծումն ու գրեթե գյուտը հնարավորություն են տվել այդ դաշինքները կապելու պայմանագրերի հիման վրա, երբ յուրաքանչյուր անդամի ստանձնած պարտավորություններն ու դրանց իրագործման պայմաններն արձանագրվում էին գրավոր կերպով:

Պատմության հոլովույթում եղել են տարբեր պետական միություններ, որոնք ստեղծվել են տարբեր նպատակներով: Դրանցից մի քանիսը եղել են հաջողված և արդյունավետ կերպով գործել են երկար տարիներ, մյուս մասի գոյությունը տևել է շատ կարճ: Հնարավոր է, արդյոք, հայտնաբերել դրանց կազմման որևէ օրինաչափություն, որևէ սկզբունք, որոնց կիրառումը կարող է ապահովել ստեղծվող դաշինքի գոյունակությունը:

Ստորև կփորձենք Եռյակ միության (1882–1917 թթ.) ստեղծման պատմությունն ուսումնասիրել այդ լույսով՝ այն դիտելով որպես ռազմաքաղաքական դաշինքի ստեղծման անհաջող փորձ:

* Հոդվածը նախնական տեսքով ներկայացվել է 26.12.2023: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 12.04.2024:

Ռազմաքաղաքական դաշինքների էությունը և առանձնահատկությունները

Վաղուց ի վեր արտաքին քաղաքականության ոլորտում կիրառվում է *“si vis pacem, para bellum”* սկզբունքը*: Ըստ այդմ յուրաքանչյուր պետություն նախապես պատրաստվում է պատերազմի՝ զբաղվում է ռազմական շինարարությամբ, մեծացնում է իր ռազմական հզորությունը, ստեղծում է մոբիլիզացման ռեսուրսներ, նախապատրաստում ռազմական գործողությունների թատերաբեմը և ընդհանուր առմամբ իր ինքնիշխան տարածքը և այլն: Պատրաստման կարևոր միջոցառումներից է դաշնակիցների ձեռքբերումը և կոլեկտիվ անվտանգության համակարգում ներգրավումը: «Կոլեկտիվ անվտանգության ապահովման ձևերից մեկը խմբային համակարգն է (միություններ, դաշինքներ, դաշնադրություններ), որը հիմնված է ուժերի հավասարակշռության գաղափարի վրա: Միությունները պետությունների օրինական պաշտպանական կազմակերպություններ են, որոնք ստեղծվել են ազգային ներուժի համակարգված օգտագործման նպատակով՝ ցանկացած սպառնալիքից իրենց անդամների անվտանգությունը կամ պաշտպանությունն ապահովելու համար»¹:

Պատմության հոլովույթում կան նման միությունների, կամ ռազմաքաղաքական դաշինքների (բլոկների) գոյության բազմաթիվ օրինակներ՝ հակաստորեստանյան դաշնադրություն (մ. թ. ա. 691), Պելոպոնեսյան միություն (մ. թ. ա. 6–4 դարեր), Սրբազան լիգա (1684–1699 թթ.), Եռյակ միություն (1882–1917 թթ.), Հակահիտլերյան դաշինք (1941–1945 թթ.), ՆԱՏՕ (1949–մինչ օրս), ՀԱՊԿ (1992–մինչ օրս) և այլն: Դրանց հիմքում դրվում է հակառակորդի (հավանական հակառակորդի) նկատմամբ ուժերի շոշափելի գերազանցության գաղափարը (նրան հաղթելու, նրա ագրեսիան հետ մղելու կամ նրան զսպելու նպատակով): Եթե ռազմաքաղաքական միավորումը (դաշինքը) հետապնդում է զուտ պաշտպանական նպատակներ, ապա դրանում գերիշխում է «անդամներից մեկի վրա հարձակումը հարձակում է բոլորի վրա» սկզբունքը:

Ռազմաքաղաքական դաշինքը սահմանվում է որպես «Մի քանի պետությունների քաղաքական կամ ռազմաքաղաքական միություն, որն ստեղծվում է ընդհանուր շահերի պաշտպանության, համատեղ անվտանգության, կոլեկտիվ պաշտպանության ապահովման կամ պատերազմի փոխհամաձայնեցված նախապատրաստման ու վարման համար: Կազմակերպվում է երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի, պայմանագրերի, պակտերի հիման վրա»²:

* Լատիներեն ասացվածք, որը նշանակում է՝ «եթե ուզում ես խաղաղութիւն, պատրաստիր պատերազմ» (տես *Ստ. Մայխասենց*, Հայերէն բացատրական բառարան, հ. 4: Ե., 1945, էջ 645):

¹ Տես *S. S. Քոչարյան*, Կոլեկտիվ անվտանգության տարածաշրջանային կազմակերպությունների առանձնահատկությունները. քաղաքագիտական վերլուծություն ՆԱՏՕ-ի և ՀԱՊԿ-ի օրինակով: «ՀԲ», 2023, հմ. 3:

² Տես *Д. О. Рогозин*. Война и мир в терминах и определениях. Военно-политический словарь. М., 2017, сс. 38–39:

Դաշինքում, որպես կանոն, սահմանվում են ընդհանուր նպատակներն ու այդ նպատակներին հասնելու համար համատեղ գործողությունների բնույթը: Ընդսմին դաշնության մեջ մտնող յուրաքանչյուր պետություն հետապնդում է առաջին հերթին իր քաղաքական, տնտեսական ու ռազմական շահերը: Դաշինքում առկա համագործակցության բնույթը պայմանավորում է պետությունների միջև շփումներում կիրառվող միջոցների ու մեխանիզմների տեսակները (դիվանագիտական-քաղաքական, ռազմական, տնտեսական և այլն):

Ըստ էության, դաշինքի ընդհանրական ներուժը ձևավորվում է բոլոր անդամների ռեսուրսների հաշվին: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր անդամ պետք է հաշվի առնի ոչ միայն իր, այլև մյուս անդամների արտաքին ռեսուրսները «կազուս ֆեդերիս»-ի* դեպքում: Սա նշանակում է, որ նա պետք է հաշվի առնի ոչ միայն արտաքին աջակցության դրական կողմերը, այլև հակամարտության մեջ գործընկերոջ ներգրավմամբ պայմանավորված ռիսկերը, ուստի նաև այն բարձր զինը, որն այդ դեպքում ինքը կարող է վճարել:

Այսպիսով՝ ռազմաքաղաքական դաշինքների գործարկումներն ուղղված են նրա անդամ պետությունների անվտանգության ապահովմանը ու պաշտպանության ամրապնդմանը, ինչպես նաև սպառնալիքներին ու մարտահրավերներին համատեղ դիմակայմանը:

Այժմ այս համառոտ տեսական քննարկումից հետո անցնենք կոնկրետ օրինակին:

Եռյակ միության ձևավորումը

Եռյակ միության ձևավորման գլխավոր ճարտարապետը Պրուսիայի, ապա միավորված Գերմանիայի վարչապետ (կանցլեր) Օտտո ֆոն Բիսմարկ-Շյոնհաուզենն էր: Նրա արտաքին քաղաքականության կարևոր տարրերից էր «դաշինքների համակարգը»⁴ (*“Bündnispolitik”*), որը միտված էր Ֆրանսիայի մեկուսացմանն ու Եվրոպայում ուժերի հաշվեկշռի պահպանմանը՝ որևէ այլ գերտերության անսահմանափակ հզորացման կանխմամբ: Բիսմարկի ստեղծած «դաշինքների համակարգը» հանգեցրեց Եվրոպայում տեղային պատերազմների տևական դադարին, մինչդեռ համընդհանուր

* «Կազուս ֆեդերիս» (լատ. *“Casus foederis”* «պայմանագրային դեպք», կամ «պայմանագրով նախատեսված դեպք») միջազգային համաձայնագրերում ներառվող պայման, ըստ որի՝ որոշակի հանգամանքների ձևավորումը կամ իրավաբանական փաստերի ծագումը կողմերից մեկին, երկուսին կամ բոլոր պայմանավորվող կողմերին հիմք է տալիս կամ պարտադրեցնում է կատարել համաձայնագրով նախատեսված գործողություններ կամ, հակառակը, զերծ մնալ դրանց կատարումից:

Միջազգային համաձայնագրում «կազուս ֆեդերիս»-ի ներառման կարևորագույն պայմանն է համապատասխան ձևակերպումների հստակությունն ու սպառիչ ճշգրտությունը, առանց ինչի տվյալ պայմանը կարող է լինել սակավ արդյունավետ կամ ոչ գործուն: Կոլեկտիվ ինքնապաշտպանության հիմքն է (տես «Казус федерис». «Энциклопедия юриста» (<http://law.niv.ru/doc/encyclopedia/law/fc/slovar-202-1.htm#zag-940>)):

⁴ Տես Փ. Ա. *Ротштейн*. Из истории прусско-германской империи. М.-Л., 1948, сс. 165–171:

պատերազմի սանձազերծումը դարձավ անխուսափելի: Բիսմարկը շեշտում էր, որ «Պետությունները չունեն ընկերներ, պետություններն ունեն շահեր»⁵:

Ըստ Բիսմարկի՝ Եվրոպայում կատարյալ էր միջազգային հարաբերությունների այն համակարգը, որի դեպքում բոլոր տերությունների միջև, բացառությամբ Գերմանիայի, գոյություն ունենային անհաղթահարելի տարածայնություններ, և բոլոր տերությունները, բացառությամբ Ֆրանսիայի, միշտ զգային Գերմանիայի՝ որպես դաշնակցի կարիքը⁶: Եվրոպայում ռազմական բախումների սանձազերծմամբ Գերմանիայի առաջավարության հաստատումը նրա գլխավոր նպատակներից մեկն էր:

Եվրոպայի պատմության մեջ մի իսկական ջրբաժան դարձավ 1878 թ. Բեռլինի կոնգրեսը⁷, որին նախորդել էին առձակատումների ու ցնցումների 30 տարին և հաջորդել խաղաղության 34 տարին: Տրամաբանական է, որ այդ տարիները եղել են սուր և բարդ դիվանագիտական պայքարի ու հակամարտող տերությունների ուժերի կուտակման տարիներ: Մինչև 1912 թ. Եվրոպայում պատերազմներ տեղի չունեցան (բացառությամբ երկու կարճատև պատերազմների՝ 1885 թ. Սերբիայի ու Բուլղարիայի և 1897 թ. Թուրքիայի ու Հունաստանի միջև), սակայն պատերազմի վտանգը մշտապես առկա էր. «Էլզաս-Լոթարինգիան ու Բալկանները Եվրոպայի մտահոգություններն են», նշում էր Բիսմարկը⁸:

Բեռլինի կոնգրեսում ցարական Ռուսաստանի դիվանագիտական պարտությունը միջազգային ասպարեզում թուլացրեց նրա դիրքերը և հարվածեց հեղինակությանը: Ռուսաստանի և Ավստրո-Հունգարիայի միջև հարաբերությունները լարված էին, քանի որ այդ երկու տերություններն էլ ձգտում էին Բալկաններում հասնելու գերիշխանության⁹: 1875 թ. Բալկանյան ճգնաժամը և Ռուսաստանի ու Ավստրո-Հունգարիայի հարաբերություններում լարվածության աճումը միանգամայն ձեռնտու էին Բիսմարկին¹⁰: «Գերմանիան չի կարող թույլ տալ, որ իր թիկունքում Ավստրիան ու Ռուսաստանը չափից դուրս մտերմանան, մյուս կողմից՝ իր անվտանգության տեսանկյունից չի կարող թույլ տալ, որ նրանք գժտվեն»¹¹:

Բիսմարկը, չներելով ռուսական կառավարությանը այն, որ նա 1875 թվականի «ռազմական տազնապի» ժամանակ պաշտպանեց Ֆրանսիային, դադարեց Ռուսաստանին «հաճոյանալուց»: Գերմանիայի արտաքին քաղաքականության գլխավոր խնդիր համարելով Ֆրանսիայի ջախջախումը և Ավստրո-Հունգարիայի հետ մերձեցումը՝ նա սկսեց Ավստրո-Հունգարիային

⁵ Տես *В. В. Чубинский*. Бисмарк. Политическая биография. М., 1988, с. 305:

⁶ Տես *Генри Киссинджер*. Мировой порядок. М., 2015, сс. 47–48:

⁷ Տես *А. Дж. П. Тэйлор*. Борьба за господство в Европе. 1848-1918. М., 1958:

⁸ Տես *Վ. Վ. Չուբինսկի*, Նշ. աշխ., էջ 305:

⁹ Տես *Алан Палмер*. Бисмарк. Пер. с англ. И. С. Соколовой, Т. С. Бушуевой, В. А. Сухановой, С. И. Минкина, Т. Н. Замиловой. Смоленск, 1997, с. 343:

¹⁰ Տես *Վ. Վ. Չուբինսկի*, Նշ. աշխ., էջ 298–299:

¹¹ Տես *Տես Վան Պալմեր*, Նշ. աշխ., էջ 341:

դիտել որպես Բալկաններում Ռուսաստանին մշտական հակակշիռ: Այլ կերպ ասած՝ նրան մտահոգում էր, որ Ավստրո-Հունգարիայի կայսրության «մահվան» պարագայում (պատերազմի կամ ներքին հեղափոխությունների հետևանքով) նրա փլատակների տակից ի հայտ կգային մի շարք սլավոնական ազգային պետություններ, որոնք պատմական հիշողության ուժով կկողմնորոշվեին դեպի Ռուսաստան: Այդ դեպքում վերջինս կարող էր զգալիորեն ուժեղացնել իր դիրքերը տարածաշրջանում: Դեպքերի նման զարգացումը Բիսմարկի համար անընդունելի էր: Ռուս-գերմանական հնարավոր պատերազմին են նվիրված Բիսմարկի հետևյալ տողերը. «Այդ պատերազմը իր թատերաբեմի ահռելի չափերով լեցուն կլինի վտանգներով: Կառլ 12-րդի ու Նապոլեոնի օրինակները ապացուցում են, որ նույնիսկ ամենակարող զորապետները չկարողացան գլուխ հանել Ռուսաստանի դեմ արշավանքներից: Եթե անգամ Ռուսաստանի դեմ պայքարում ռազմական բախտը ժպտա Գերմանիային, ապա աշխարհագրական պայմանները անվերջանալի դժվարություններ կստեղծեն այդ հաջողությունները հաղթական ավարտին հասցնելու համար»¹²:

Բեռլինի կոնգրեսից հետո՝ 1878 թվականի վերջում, ռուս-գերմանական հարաբերությունների լարվածության հետևանքով «պատերազմ» սկսվեց, նախ՝ տեղեկատվական, ապա՝ մաքսային ոլորտներում: Ռուսական մամուլը Բիսմարկին մեղադրում էր երախտամոռ լինելու մեջ, իբրև նա կոնգրեսում դավաճանել է Ռուսաստանին՝ մոռանալով, թե ինչպես 1870–1871 թթ. ֆրանս-պրուսական պատերազմում Ռուսաստանը չեզոք դիրք գրավեց և չօգնեց Ֆրանսիային¹³: Իր հերթին գերմանական մամուլը Ռուսաստանին մեղադրում էր Բեռլինի կոնգրեսում Ռուսաստանի օգտին Բիսմարկի գործադրած ջանքերը չգնահատելու մեջ¹⁴: Ի վերջո մաքսային պատերազմը հանգեցրեց լուրջ հետևանքների: Այդ ժամանակ Գերմանիան Ռուսաստանի համար սպառնալից կարևոր շուկա էր (1879 թ. ռուսական արտահանման 30 %-ը)¹⁵: Միևնույն ժամանակ, 1870-ական թվականների համաշխարհային ագրարային ճգնաժամը սրեց սննդամթերքի և հումքի շուկաների համար պայքարը: Ճգնաժամի պայմաններում գերմանական յունկերությունը պահանջում էր իրեն պաշտպանել օտարերկրյա մրցակցությունից: Արդեն 1879 թվականի հունվարին Բիսմարկը խիստ սահմանափակում դրեց ներմուծվող

¹² *Օ. Բիսմարկ*, Նշ. աշխ., հ. 2, էջ 261:

¹³ Տես *С. Д. Сказкин*. Конец австро-русско-германского союза: исследование по истории русско-германских и русско-австрийских отношений в связи с восточным вопросом в 80-е годы XIX столетия. М., 1974, с. 63:

¹⁴ Տես նույն տեղում, էջ 67–71:

¹⁵ Տես *Օ. В. Ерохина*. Российско-германские отношения в период «таможенной войны» в конце XIX – начале XX в. «Торговля, купечество и таможенное дело в России в XVI–XIX вв.». Сборник материалов Четвертой международной научной конференции (Нижний Новгород, 28–30 сентября 2017 г.). Нижний Новгород, 2018, сс. 559–564:

ռուսական մասնաբերքի վրա (դա հիմնավորելով վարակի բռնկման դեմ ձեռնարկվող կարանտինային միջոցառումների անհրաժեշտությամբ), իսկ հետո նաև բարձրացրեց հացամթերքի համար մաքսատուրքը, ինչը լուրջ հարված հասցրեց Ռուսաստանի գյուղատնտեսությանը¹⁶: Որպես հետևանք՝ Ռուսաստանի և Գերմանիայի միջև հարաբերությունները Յոթնամյա պատերազմից հետո առաջին անգամ էին վատթարանում:

Ռուսաստանի շուրջ դիվանագիտական մեկուսացման օղակն ավելի սեղմելու նպատակով 1880 թ. զարնանը ավստրո-գերմանական դաշինքում Մեծ Բրիտանիային ներգրավելու Բիսմարկի ջանքերը ապարոյուն էին: Բրիտանական կառավարությունը հրաժարվեց որևէ լրացուցիչ պարտավորություն ստանձնելուց¹⁷:

Պատմական այս իրադարձությունների համատեքստում ամրապնդվում էին Ավստրո-Հունգարիայի և Գերմանիայի հարաբերությունները: Տվյալ զարգացումներին նպաստում էր նաև Բիսմարկի այն մտավախությունը, որ «Միապետական ու կաթոլիկաբար մտածող Ֆրանսիան վերականգնվելու դեպքում չէր կորցնի Ավստրիայի հետ կրկին այնպիսի հարաբերություններ հաստատելու հույսը, ինչպիսիք գոյություն են ունեցել Յոթնամյա պատերազմի տարիներին և Վիեննայի կոնգրեսում մինչ էլբայից Նապոլեոնի վերադարձը, և որոնք սպառնում էին ծագել 1863 թ. լեհական հարցում, և հաջողության շանսեր ունեին Ջալցբուրգում և Վիեննայում՝ Ղրիմի պատերազմի տարիներին ու կոմս Բեյսթի օրոք՝ 1866–1870 թթ.»¹⁸: Եվ 1879 թ. հոկտեմբերի 7-ին Գերմանիան և Ավստրո-Հունգարիան կնքեցին գաղտնի դաշնակցային պայմանագիր: Բիսմարկը ցանկանում էր դաշինքն ուղղել և՛ Ռուսաստանի, և՛ Ֆրանսիայի դեմ, սակայն նրա ավստրո-հունգարացի գործընկեր Ղյուլա Անդրաշին պաքները նկատելիորեն ուղղում էր Ռուսաստանի դեմ՝ առաջարկելով, որ եթե Ռուսաստանը հարձակվի երկու կայսրություններից մեկի վրա, մյուսը պետք է իր ունեցած զինված ուժերի ամբողջ հզորությամբ օգնության հասնի նրան¹⁹:

Ավստրո-գերմանական պայմանագիրն իր տեսակով պաշտպանողական էր: Այն նախատեսում էր դաշնակիցների ռազմական փոխգործությունը միայն կողմերից մեկի վրա Ռուսաստանի հարձակման դեպքում: Բայց քանի որ չէր բացառվում, որ պատերազմն սկսվի Բալկաններում ռուս-ավստրիա-

¹⁶ Տես *М. Н. Соболев*. Таможенная политика России во второй половине XIX в. Томск, 1911, сс. 219–231; *Г. Хальгартен*. Империализм до 1914 года. Социологическое исследование германской внешней политики до первой мировой войны. М., 1961, с. 89; *О. Ч. Երոխիմյան*, Նշ. աշխ.:

¹⁷ Տես *Ալան Պալմեր*, Նշ. աշխ., էջ 342:

¹⁸ *Օ. Բիսմարկ*, Նշ. աշխ., հ. 2, էջ 227:

¹⁹ Տես «Внешняя политика Бисмарка в последние годы его канцлерства 1885 – 1890 гг. Заключение Франко-русского союза 1891–1893 гг.». «История дипломатии», т. 2. Под ред. В. П. Потемкина. М.-Л., 1945. сс. 76–106 (<http://1big.ru/history/2008-vneshnyaya-politika-bismarka-v-poslednie-gody-egokanclerstva-1885-1890-gg-zaklyuchenie-franko-russkogo-soyuza-1891-1893-gg.html>):

կան ռազմական բախման ձևով, ապա հարձակվող կողմին որոշելու հարցը թողնվում էր Գերմանիայի իրավասությանը: Բացի այդ, իրավիճակի բարենպաստ ընթացքի պարագայում Գերմանիան կարող էր պայմանագիրն օգտագործել Ֆրանսիայի վրա հարձակվելու համար, քանի որ Ֆրանսիայի կողմից Ռուսաստանի պատերազմելու դեպքում Ավստրո-Հունգարիան պարտավոր էր աջակցել Գերմանիային²⁰:

Կնքելով Ավստրո-Հունգարիայի հետ սույն պայմանագիրը՝ Բիսմարկը նաև հաշվի էր առնում, որ դրա կողմերն ըստ էության ցամաքային պետություններ են, ուստի նրանց դժվար կլինի օգտվել արտաքին ռեսուրսներից: Մինչդեռ նրանց հավանական հակառակորդներ Ֆրանսիան ու Ռուսաստանը ունեն երկարաձիգ ծովափեր՝ մեծաթիվ բանուկ նավահանգիստներով: Ռուստի Գերմանիան, որի համար ծովով ելքը դեպի «արտաքին աշխարհ» ըստ էության Ֆրանսիայի և Անգլիայի անմիջական հսկողության տակ էր, պետք է գտներ մի պետություն, որը ևս ունենար ծովային ելք դեպի «արտաքին աշխարհ»²¹: Եվ այդպիսի պետություն գտնվեց ...

Դեռ 1880 թ. Իտալիայի արտգործնախարար Կառլո Մաֆեին փորձեր արեց դաշնակցելու նպատակով բանակցություններ սկսել Գերմանիայի հետ: Սակայն Բիսմարկի պատասխանն այն էր, որ դրա համար անհրաժեշտ է նախ և առաջ պայմանավորվել Ավստրո-Հունգարիայի հետ, սակայն Իտալիայի ու Ավստրո-Հունգարիայի միջև կային բազմաթիվ հակասություններ ու խոչընդոտներ: Դրանցից էին.

- Իտալիայի ձգտումը իրեն միացնելու Ավստրո-Հունգարիայի տարածքում գտնվող իտալալեզու Տրենտինո ու Տիրոլ բնակավայրերը (1878 թ. Բեռլինի կոնգրեսից հետո ավստրիական զորքերը 30 տարի ժամկետով բռնազավթել էին դրանք),
- պայքարը Բալկաններում և որոշ միջերկրածովյան տարածքների համար,
- Ալբանիային տիրանալու Իտալիայի ցանկությունը. Ավստրո-Հունգարիան համաձայնվել էր պայմանագրի կնքմանը՝ արևելքում ստատուս-քվո պահպանելու պայմանով, սակայն պատրաստ չէր զիջելու իր իրավունքները Բոսնիայում,
- Հռոմի կարգավիճակը, քանի որ 1871 թ. կցվելով Իտալական թագավորությանը՝ քաղաքը դեռևս չէր ճանաչվել որպես Իտալիայի մաս:

Միևնույն ժամանակ, Ավստրո-Հունգարիան լուրջ մտահոգություններ ուներ Ռուսաստանի հետ հնարավոր պատերազմի առնչությամբ և հետաքրքրված էր Իտալիայի հետ սահմանի ամրապնդմամբ: Իտալիան ևս պատրաստ էր հրաժարվելու տարածքային պահանջներից՝ Ավստրո-Հունգարիայի հետ դաշինք կազմելու և միջազգային մեկուսացումից դուրս գալու համար:

Անդամակցելով Եռյակ միությանը՝ Իտալիան նպատակ ուներ Ավստրո-

²⁰ Տես նույն տեղում, էջ 224–226:

²¹ Տես նույն տեղում, էջ 227–232:

Հունգարիայի աջակցությամբ իր դիրքերն ամրապնդելու Բալկաններում և սևծովյան տարածաշրջանում, իսկ Գերմանիայի օգնությամբ ի շահ իրեն լուծելու Հյուսիսային Աֆրիկայում Ֆրանսիայի հետ ունեցած գաղութային վեճերը, ինչպես նաև դիվանագիտական երկխոսության ճանապարհով Գերմանիայի օժանդակությամբ հետ վերադարձնելու նախկինում Ավստրիայի բռնազավթած տարածքները: Մինևույն ժամանակ, Իտալիան նախապես զգուշացրել էր, որ չի մտնի պատերազմի մեջ, եթե իր դաշնակիցների վրա հարձակվի Մեծ Բրիտանիան:

Նման ռազմաքաղաքական պայմաններում Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի միջև 1882 թ. մայիսի 20-ին կնքվեց ռազմաքաղաքական դաշինք՝ «Եռյակ միություն» անվամբ, որը գոյություն ունեցավ մինչև 1917 թվականը: «Եռյակ դաշինքը այն ռազմավարական դիրքորոշումն էր, որը դրա կնքման ժամանակ մեզ սպառնացող վտանգների պայմաններում խելամիտ էր և այն ժամանակի հանգամանքներում իրականանալի»²²:

Պայմանագրով նախատեսվում էր, որ՝

- դաշինքի անդամներից որևէ մեկի վրա Ռուսաստանի հարձակման դեպքում մյուսները պարտավոր էին հասնել նրան օգնության,
- Գերմանիայի կամ Ավստրո-Հունգարիայի վրա ոչ թե Ռուսաստանի, այլ որևէ ուրիշ պետության հարձակման դեպքում այս զույգի մյուս պետությունը պարտավոր էր նվազագույնը պահպանել չեզոքություն²³:

Չնայած դաշնակցային հարաբերություններին՝ դժվար էին լուծվում Ավստրո-Հունգարիայի և Գերմանիայի համատեղ ռազմական պլանի մշակման հետ կապված հարցերը: Մի կողմից՝ երկու պետությունների գերագույն շտաբների ղեկավարությունները գտնվում էին իրար հետ սերտ շփման մեջ: Ընդ որում, ակնհայտ էր, որ գերմանական ռազմական միտքը էական ազդեցություն էր գործում Վիեննայի արտաքին ու ներքին քաղաքականությունների վրա: Մյուս կողմից՝ միջազգային ասպարեզում երկու պետությունների շահերն այնքան էլ չէին համընկնում, ինչը դժվարացնում էր ռազմական ոլորտում փոխհամաձայնեցված որոշումների ընդունումը: Գերմանական Գերագույն շտաբի տեսանկյունից՝ դաշնակցի հիմնական խնդիրը պետք է լիներ պատերազմի առաջին օրերին Արևելքում ռուսական զորքերի կաշկանդումը: Սակայն ավստրո-հունգարական Գերագույն շտաբը ելնում էր այն հանգամանքից, որ իր պետությունը, հավանաբար, ստիպված կլինի մարտական գործողություններ վարել միանգամից մի քանի ուղղություններում: Նման դիրքորոշումը հազիվ թե բավարարում էր Եռյակ դաշինքի բացարձակ առաջնորդ Գերմանիային, որին Ավստրո-Հունգարիան անհրաժեշտ էր առաջին հերթին որպես ժամանակավոր հակակշիռ Ռուսաստանին²⁴:

²² Տես նույն տեղում, էջ 230:

²³ Տես նույն տեղում, էջ 224–226:

²⁴ Տես «Первая мировая война и судьбы европейской цивилизации». Под ред. Л. С. Белоусова, А. С. Маныкина. М., 2014, сс. 48–51:

Ամփոփում. Եռյակ միության կազմավորման դասերը

Չնայած դաշինքի անդամ պետությունների միջև խնդիրների հաղթահարմանն ու փոխզիջման հաստատմանն ուղղված ջանքերին՝ այդուհանդերձ չհաջողվեց լիովին վերացնել նրանց միջև եղած որոշ պատմաքաղաքական հակասություններ, որոնք շարունակ բացասաբար էին ազդում դաշինքի անդամների փոխհարաբերությունների վրա, ինչն էլ վերջիվերջո հանգեցրեց միության քայքայմանը*.

- նախ՝ պատմաքաղաքական հակասություններ կային Պրուսիայի և Ավստրիայի միջև, որոնք երկուսն էլ հավակնում էին Գերմանիային միավորողի դերին²⁵: Բացի այդ, ավստրիացիները՝ որպես միջնադարի հզոր կայսրության տիտղոսային ազգ, «գիտակցում» էին իրենց գերազանցությունը մասնատված Գերմանիայի բնակիչների նկատմամբ և չէին ցանկանում գրավել երկրորդական դեր,
- լուրջ «պատմափոխողական» հակասություններ կային Իտալիայի և Ավստրիայի միջև, քանի որ Իտալիան երկար ժամանակ եղել էր Ավստրիայի դաժան լծի տակ և միայն նոր էր թոթափել այն,
- մեծ ազդեցություն ուներ նաև Իտալիայի և Ֆրանսիայի՝ նախկինում դաշնակից լինելու հանգամանքը (Ֆրանսիան օգնել էր Իտալիային ավարտելու երկրի միավորումը): Փաստերը ցույց են տալիս, որ դաշինքի կապերի փխրունության վերաբերյալ Բիսմարկի կանխատեսումները սխալ չէին: Տարբեր տնտեսական պատճառներով 1902 թ. Իտալիայի և Ֆրանսիայի միջև կնքվում է պայմանագիր, որում ամրագրվում է, որ Ֆրանսիայի ու Գերմանիայի միջև պատերազմի դեպքում Իտալիան պետք է պահպանի չեզոքություն²⁶:

Առաջին համաշխարհային պատերազմին նախորդած գործընթացների վերլուծությունը ցույց է տալիս, թե պատերազմի ելքի վրա ինչ ազդեցություն է ունենում ռազմաքաղաքական դաշնակից պետությունների ռեսուրսների ու շահերի ոչ ճիշտ գնահատումը, այն է.

Ռեսուրսների պակասը: 1914 թվականին Գերմանիայի տնտեսությունը Եվրոպայում ու աշխարհում ընդհանուր առմամբ ամենաիզորներից էր: Սակայն պատերազմն արագ ավարտելը, ինչպես պլանավորել էին գերմանա-

* Իտալիան, ըստ էության, այդ դաշինքի «մեռյալ» անդամ էր, որը դաշինքի կազմում այդպես էլ չմասնակցեց առաջին համաշխարհային պատերազմին՝ 1915 թ. հայտարարելով չեզոքություն, իսկ 1917 թ. միանալով Անտանտին:

²⁵ Այս մասին հանգամանորեն տես Ն. Բ. Ենիկոյուպովա, Պաշտպանությանը պետության պատրաստումը որպես հաջողության կարևոր նախապայման՝ ավստրո-պրուսական և ֆրանս-պրուսական պատերազմների օրինակով: «ՀԲ», 2022, հմ. 2:

* Մեր կարծիքով՝ այդ «կայսերականությունը» եղավ անշյուսի դեմ ավստրիացիների ընդվզման պատճառներից մեկը:

²⁶ Տես A. B. Шимов. Военные конфликты XX века. От Южной Африки до Чечни. М., 2006, сс. 49–85:

ցիները, չհաջողվեց, և չորս տարի ձգվող լարվածությանը տնտեսությունն այլևս չդիմացավ, չնայած Գերմանիան գրաված տարածքներից բավական ռեսուրսներ էր ներգրավում: Պատերազմի ավարտական փուլում առավել զգացնել տվեց հացի, նավթի ու մետաղի անբավարարությունը, այնպես որ տնտեսությունը ամբողջովին հյուժվեց, որն էլ դարձավ պարտության գլխավոր պատճառներից մեկը²⁷:

Երկու ճակատով չպատերազմելու Գերմանիայի ծրագրի ծախողումը: Գերմանիան ծրագրել էր Արևմտյան ճակատում արագ ջախջախել Ֆրանսիային, այնուհետև հիմնական ուժերը տեղափոխել արևելք՝ Ռուսաստանի դեմ, որի ժամանակ Ավստրո-Հունգարիան պետք է կաշկանդեր Ռուսաստանի առաջխաղացումը: Սակայն գերագնահատվել էր վերջինիս ռազմական ներուժը, ինչի պատճառով էլ «ակնթարթային պատերազմի» (*Blitz Krieg*) ծրագիրը տապալվեց, և Գերմանիան ստիպված եղավ պատերազմ մղել երկու ճակատով:

Գերմանիայի դաշնակիցների պարտությունները:* Գերմանիային ու Ավստրո-Հունգարիային միացան Բուլղարիան և Օսմանյան կայսրությունը, սակայն դաշնակիցները օգտակար չեղան Գերմանիային, քանի որ Բուլղարիան չունեց ուժեղ բանակ, իսկ Թուրքիան, ներքաշվելով Ռուսաստանի հետ պատերազմի մեջ և կրելով մի քանի ծանր պարտություններ, այլևս ի վիճակի չեղավ աջակցելու Գերմանիային²⁸:

Անտանտի գերազանցությունը: Չնայած գերմանական բանակը լավ պատրաստված էր և զինված՝ Անտանտի պետությունները, ձեռք բերելով նոր դաշնակիցներ, ունեցան թվային ու սպառազինության գերազանցություն:

Այսպիսով՝ ռազմական դաշինքները կարևոր դեր են խաղում պետությունների անվտանգության ապահովման և համաշխարհային կայունության համար: Դրանք հնարավորություն են տալիս դաշնակիցներին արդյունավետորեն գործակցելու ռազմական ոլորտում, պաշտպանելու իրենց շահերն ու միջազգային ասպարեզում հանդես գալու որպես ուժի ազդեցիկ կենտրոն:

Ռազմաքաղաքական դաշինքները անվտանգության ապահովման արդի համակարգի և միջազգային հարաբերությունների անբաժանելի մասն են: Անշուշտ, յուրաքանչյուր պետություն պետք է ձգտի կանխելու պատերազմը՝ վեճերը լուծելով խաղաղ ճանապարհով, սակայն դրա հետ մեկտեղ պետք է բարձրացնի իր ռազմական դիմակայունության մակարդակը և պատմական փորձի, պետությունների ներկայիս շահերի ու ապագայի կտրվածքով դրանց փոփոխությունների կանխատեսումների հաշվառմամբ ձևավորի իրատեսական միջազգային հարաբերություններ՝ ստեղծելով իր համար կայուն անվտանգային միջավայր ու երաշխիքներ:

²⁷ Տես *Д. Ллойд Джордж. Военные мемуары. Пер. с англ. И. Звавича. В 5 томах, т. III. М., 1935, сс. 66–67:*

* Պատերազմին Գերմանիան մասնակցեց Քառյակ միության կազմում՝ դաշնակցելով Ավստրո-Հունգարիային, Բուլղարիային և Թուրքիային:

²⁸ Տես *Е. Ф. Лудшувейт. Турция в годы первой мировой войны 1914-1918 гг. М., 1966, сс. 292–304:*

Այսպիսով՝ հաստատվեց Օտտո ֆոն Բիսմարկի այն պնդումը, որ «...հավերժ տևականություն ապահովված չէ գերտերությունների միջև կնքված ոչ մի պայմանագրի, և անմիտ կլինել դիտել դրան որպես այն բոլոր հնարավորությունների համար հուսալի հիմք, որոնք ապագայում կարող են փոփոխել դաշինքի կնքման պահին գոյություն ունեցող հարաբերությունները, կարիքներն ու տեսակետները»²⁹:

ПОЛИТОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

ЦИВИЛИЗАЦИОННЫЙ ПОЛИТИЧЕСКИЙ ПРОЕКТ
КАК ОСНОВА ОБЕСПЕЧЕНИЯ БЕЗОПАСНОСТИ
С РАСШИРЕННОЙ ПОВЕСТКОЙ ДНЯ

*М. М. МАРГАРЯН, доктор политических наук, профессор, заведующая кафедрой политического управления и публичной политики АГУ РА, член Научно-консультативного совета ВНЖ «Айкакан банак» НИУО МО РА,
М. Г. МАРГАРЯН, кандидат политических наук, доцент*

РЕЗЮМЕ

В статье междисциплинарным методом исследуется многослойность представлений о концепции «цивилизационный политический проект». Это дало возможность предложить подход, согласно которому для предотвращения механической модернизации, характеризующейся неопределенностями и турбулентностью в реальной действительности, необходимо стратегическое управление обеспечением безопасности базировать на принципах «научно-аналитической» парадигмы. Обоснования нецелесообразности проведения анализа методом «проб и ошибок» дают возможность выдвинуть гипотезу, что в условиях глобальной турбулентности безопасность цепочки «нация – государство – общество – индивидуум» уязвима, если сотрудничество с центрами силы не зиждется на естественной модернизации цивилизационного политического проекта.

Подтверждением тому служат этнические чистки, насильственные депортации, сопровождающиеся геноцидальной политикой, и насильственные действия иного характера, проводимые «метрополиями» в отношении населения некоторых непризнанных государств. Авторы убеждены, что в современном мире разработка моделей стратегического развития обороноспособности государств и сценариев их политического развития на базе теорий игр должна осуществляться путем рассмотрения цивилизационного политического проекта как основы обеспечения безопасности. Отсюда следует, что модель стратегического развития «умного государства, умного общества, гражда-

²⁹ Տես Օ. Բիսմարկ. Мысли и воспоминания. В 3-х томах, т. 2. М., 1940, с. 230:

нина, наделенного политической, гражданской и национальной идентичностью» может быть представлена как результат применения «научно-аналитической» парадигмы. Соответственно, данная модель с ее структурной многослойностью обеспечивает модернизацию военно-политических, геополитических, социокультурных и человеческих ресурсов цивилизационного политического проекта. В случае реализации данной идеи в отношении Республики Армения можно утверждать, что только благодаря стратегическому мышлению возможна разработка ориентиров обеспечения безопасности с повышением уровня консолидированности и жизнеспособности армянской цивилизации и государства. Лишь в подобных условиях станет возможным обеспечение конкурентоспособности армянского цивилизационного «Я» путем создания кибервойск для успешного противодействия в кибервойнах, являющихся основным компонентом современных гибридных войн. При этом для управления высоким уровнем развития конкурентных возможностей РА на перспективу требуется при рассмотрении цивилизационного политического проекта в качестве основы для расширенной безопасностной повестки отражение в данном проекте угроз прошлого, вызовов настоящего и видения будущего.

ПОДХОДЫ К ФОРМИРОВАНИЮ ВОЕННО-ПОЛИТИЧЕСКИХ БЛОКОВ НА ПРИМЕРЕ ТРОЙСТВЕННОГО СОЮЗА

В. Ш. ГЕВОРГЯН, подполковник запаса, ученый-аналитик Центра исследований истории военного искусства НИУО МО РА

РЕЗЮМЕ

Военно-политические коалиции, или союзы, как политические или военно-политические объединения нескольких государств, играют важную роль в обеспечении их суверенной государственной безопасности и стабильности в международных отношениях. Они позволяют союзникам эффективно сотрудничать в военной сфере, защищать свои интересы и выступать на международной арене в качестве влиятельного актора. В то же время в истории известны примеры неудачных коалиций, которые очень быстро распались и даже сводились к войне между их прежними членами.

В статье на примере Тройственного союза анализируются некоторые подходы к формированию коалиций. Тройственный союз был основан непосредственными усилиями канцлера Германии Отто фон Бисмарк-Шенхаузена в результате заключения в Вене 20 мая 1882 г. тайного договора между Германией, Австро-Венгрией и Италией. Но даже после подписания договора не удалось, несмотря на все усилия, ликвидировать историко-политические противоречия между участниками

Союза, что в конце концов привело к распаду Союза из-за отказа Италии вступить в Первую мировую войну против Антанты, объявления нейтралитета в 1915 г. и вступления в войну на стороне Антанты в 1917 г.

Путем анализа предшествующих Первой мировой войне интересов участников Союза и противоречий между ними выявляется значение неправильной оценки внешних историко-политического учета ресурсов и интересов членов военно-политических союзов для продолжительности их существования.

POLITICAL SCIENCE RESEARCHES

THE CIVILIZATIONAL POLITICAL PROJECT AS A FOUNDATION FOR ENSURING SECURITY WITH AN EXPANDED AGENDA

*M. M. MARGARYAN, Doctor of Political Science, Professor, Head, Chair of Political Governance and Public Policy, PAARA, Member, Academic-Advisory Council, "Haikakan Banak" DAJ, NDRU, MOD, RA,
M. G. MARGARYAN, PhD in Political Science, Associate Professor*

SUMMARY

The article examines the layering of perceptions of the concept of "civilizational political project" by way of an interdisciplinary method. This gave the opportunity to recommend an approach implying that in order to prevent the mechanical modernization, characterized by indefiniteness and turbulence in reality, it is necessary to base strategic security management on the principles of the "scientific-analytical" paradigm. Justifications for the inappropriateness of conducting analysis using the "cut-and-try" method make it possible to put forward the hypothesis that in conditions of global turbulence, the security of the "nation – state – society – individual" chain is vulnerable if cooperation with centers of power does not anchor on the natural modernization of the civilizational political project.

Ethnic cleansing, forced deportations, accompanied by genocidal policies, and violent acts of a different nature that "metropolitan states" commit against the populations of a number of unrecognized states, give proof of the above said. The authors believe that in the modern world, working out models for the strategic development of the defense capability of states, and creating game theory based scenarios for their political development, should be done by considering the civilizational political project as a foundation for ensuring security. Hence, the model for the strategic development of a "smart state, smart society, a citizen endowed with political, civil and national identity" can be presented as a result of the application of "scientific and analytical" paradigm. Consequently, this model with its structural layering ensures the modernization of military-

political, geopolitical, socio-cultural and human resources of the civilizational political project. In case this idea be implemented in relation with the Republic of Armenia, we can assume that it is only owing to strategic thinking will be possible to develop guidelines for ensuring security with an increased level of consolidation and viability of the Armenian civilization and state. Only in such a setting it will be attainable to ensure the competitiveness of the Armenian civilizational “I” by way of creating cyber troops in order to successfully counteract in cyber wars, which are the main component of modern hybrid warfare. At the same time, in order to manage the high development level of Armenia’s competitive capabilities in the future, in view of the civilizational political project as the foundation for an expanded security agenda, it is necessary to reflect in this project the threats of the past, the challenges of the present, and the vision of the future.

APPROACHES TO THE FORMATION OF MILITARY-POLITICAL BLOCS ON THE EXAMPLE OF THE TRIPLE ALLIANCE

V. Sh. GEVORGYAN, Lieutenant Colonel (Res.), Research Fellow, Center for Research on the History of Military Art, NDRU, MOD, RA

SUMMARY

Military-political coalitions or alliances as political or military-political unions of a number of states do play an important part in providing their sovereign state security and stability in international relations. They allow the allies to effectively collaborate in the military sphere, protect their interests and act in the international arena as influential actors. Nevertheless, the history bears cases of unsuccessful coalitions, which disintegrated pretty soon and even boiled down to war between its former members.

On the example of the Triple Alliance the article analyzes a number of approaches to the formation of coalitions. The Triple Alliance was established by German Chancellor Otto von Bismarck-Schönhausen’s direct efforts due to the conclusion of a secret treaty between Germany, Austria-Hungary and Italy in Vienna on May 20, 1882. But even after the treaty was signed, despite all efforts, it was impossible to eliminate the historical and political discrepancies between the members of the Alliance, which ultimately led to its collapse due to Italy’s refusal to enter the WWI against the Entente, the declaration of neutrality in 1915, and the engagement into the war on the side of the Entente in 1917.

By way of analyzing the pre-WWI interests of the members of the Triple Alliance and the discrepancies among them, it becomes possible to reveal the significance of the incorrect assessment of external historical and political calculation of the resources and interests of members of military-political alliances vital for the duration of their existence.

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՈԱԶՄԱԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ*

Ա. Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարանի ասպիրանտ

Ներածություն

Առաջին համաշխարհային պատերազմից ի վեր բնակավայրերն ավելի ու ավելի մեծ չափով են դառնում զանգվածային ավերածությունների առաջնային թիրախներ, անկախ այն հանգամանքից՝ մոտ են ռազմաճակատին, թե ոչ: Սա հիմնականում պայմանավորված է ռազմաօդային ուժերի և հեռահար հրետանու, գերձշգրիտ զենքի լայնամասշտաբ կիրառմամբ¹: Դրա հետևանքով բնակավայրերը դառնում են մարտական գործողությունների հանգույցներ, իսկ քաղաքացիական բնակչությունը կրում է հսկայական կորուստներ²: Ժամանակակից պատերազմների պայմաններում հրամայական է դառնում քաղաքացիական անձանց կյանքի, ինչպես նաև բնակավայրերի, դրանց ենթակառուցվածքների պաշտպանության նպատակով ավելի արդյունավետ ռազմավարությունների մշակումը: Առանձնակի կարևորություն է ստանում ռազմադիմակայունության** սկզբունքների պահպանումը, հատկապես՝ ապահով տեղանքի ընտրությունը, բնակավայրի կառուցվածքային տարրերի դասավորության և ենթակառուցվածքների բաշխվածության մեջ քողարկման հնարավորությունների մեծացումը, այլընտրանքային ուղիների ստեղծումը, հավանական վնասների նվազեցումը, շենքերի խոցելիության գնահատման չափանիշների սահմանումը³:



* Հոդվածն ստացվել է 27.12.2023: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 16.03.2024:

¹ Տես *Ю. Л. Воробьев*. Современные войны и гражданская оборона. «Стратегия гражданской защиты: проблемы и исследования», 2012, т. 2, № 1 (<https://cyberleninka.ru/article/n/sovremennye-voyny-i-grazhdanskaya-oborona/viewer>); *A. Vardanyan*. The impact of war generations on spatial environment and military resistance challenges in urban planning. "E3S Web of Conferences", 2023, Vol. 436, P. 3 (https://www.e3s-conferences.org/articles/e3sconf/pdf/2023/73/e3sconf_iced2023_12010.pdf):

² Տես *E. Charlesworth*. Architects without frontiers. Elsevier Ltd, UK, 2006:

** Ուղղադիմակայունությունը ասելով մենք հասկանում ենք ռազմական վտանգներից դիմակայելու կառույցների և տարածական միջավայրի հատկությունը:

³ Տես *H. Hossaini Amini, D. Amini, H. Kamran*. Application of passive defense in urban housing planning. "Urban - Regional Studies and Research Journal", 2013, Vol. 4, Issue 15:

Անշուշտ, նոր սերնդի պատերազմների բնույթը, հատկապես քաղաքային մարտերի և ռմբակոծությունների տարածվածությունը, ինչպես, օրինակ, Սիրիայում, Ռեկրահնայում, Իսրայելում և Պաղեստինում, շեշտում են թվացյալ անվտանգ բնակավայրերի խոցելիությունը⁴: Ռեստի այս մարտահրավերներին դիմակայելու համար աճում է բնակավայրերի ռազմադիմակայունության ապահովման անհրաժեշտությունը: Ընդամին պահանջվում է բազմակողմանի մոտեցում, որը ներառում է տարածական պլանավորման ոլորտում ռազմադիմակայունության միջոցառումների իրականացում՝ միտված ռազմական գործողությունների ընթացքում հնարավոր նյութական և մարդկային վնասների նվազեցմանը: Այս միջոցառումների մշակման ժամանակ պետք է ունենալ հստակ պատկերացում խոցման օջախի և սպառազինության լայնորեն կիրառվող սովորական (ավանդական) միջոցների* ազդող գործոնների մասին:

Սովորական զենքով խոցման օջախ է կոչվում այն տարածքը, որում այդ միջոցներով հակառակորդի զանգվածել ներգործության դեպքում քաղաքներում և տնտեսական շրջաններում տեղի են ունենում մարդկանց զանգվածային խոցումներ, շենքերի և շինությունների լայնածավալ ավերածություններ, հրդեհներ և գյուղատնտեսական կենդանիների ոչնչացում: Խոցման օջախները լինում են պարզ և բարդ (համակցված): Պարզ օջախներին բնորոշ է միայն ֆուգասային, բեկորային և հրկիզող զինամթերքի միաժամանակյա կիրառումը: Բարդ օջախները բնութագրվում են տարբեր տիպերի զինամթերքի միաժամանակյա կիրառմամբ: Ընդամին մարդկանց, շենքերի և շինությունների վրա զինամթերքի ազդեցությունը լինում է երկու տեսակի՝ ուղղակի և անուղղակի: Ուղղակի ազդեցությունը բնութագրվում է խոցիչ գործոնների անմիջական ներգործությամբ՝ այն է հարվածային կամ ծականցիչ, պայթյունի և օդային հարվածային ալիքների, բեկորային և կրակային: Անուղղակի ազդեցության դեպքում հիմնական խոցիչ գործոններ են հրդեհները, գազով աղտոտվածությունը, տարածքի աղետալի հեղեղումը կղանքով և ջրով, տարածքների վարակումը:

Վերը շարադրվածից ակնհայտ է դառնում, որ տարբեր բնակավայրերի ռազմադիմակայունությանը ներկայացվող պահանջներն զգալիորեն տարբեր են: Մեր հետազոտության նպատակն է պարզել, թե ինչպես կարող են բնակավայրի տարբեր կառուցվածքային օրինաչափություններ ազդել բնակավայրի ռազմադիմակայունության վրա:

Բնակավայրերի հատակագծային կառուցվածքի համակարգերն ըստ փողոցային ցանցի

Բնակավայրերի տարածական պլանավորման մեջ մեծ դեր ունեն վերջիններիս կառուցվածքի և բաղկացուցիչ տարրերի տեղաբաշխման առանձնահատկությունները: Օրինակ՝ երբ տնտեսական և մարդկային ռեսուրսները

⁴ Տես Ա. Հովհաննիսյան, Ռազմարվեստ, հ. 2. «Ցամաքային ձեղքում»: Ե., 2020, էջ 76–95:

* Սույն հոդվածում մենք անտեսում ենք միջուկային զենքի կիրառման դեպքը:

կենտրոնացած են բնակավայրի միայն մեկ հատվածում, պատճառովս վնասն ավելի մեծ է լինում, քան բազմակենտրոն համակարգերում⁵: Տարածական պլանավորման հատկանիշները կարող են դրսևորվել տարբեր կառուցվածքային ձևերով՝ գծային, ուղղանկյունաձև-ցանցային, անկանոն, օղակաձև-ճառագայթային, ճառագայթային:

Գծային կառուցապատման համակարգ (տես Գժ.): Գծային ձևը բնութագրվում է հիմնական տրանսպորտային ճանապարհների, նավարկելի գետերի և այլ ուղիների երկայնքով բնակավայրի կառուցապատմամբ⁶: Տրանսպորտային մայրուղին սովորաբար այդպիսի գծային բնակավայրի հիմնական առանցքն է: Գծային բնակավայրերը ռազմադիմակայունության տեսանկյունից ունեն ինչպես առավելություններ, այնպես էլ թերություններ: Գծային կառուցվածքի առավելություններից է հնարավոր պայթյունի հետևանքով առաջացած վնասի (ավերածությունների) համեմատական նվազությունը: Մեր օրերում՝ ռազմական տեխնոլոգիաների զարգացածության պայմաններում, հոծ կառուցապատումը մեկ օդային հարվածից կարող է դառնալ մեծ ծավալի ավերածությունների պատճառ: Այնտեղ, որտեղ կառույցները կենտրոնացվում են մեկ կետի շուրջը, անվտանգության ապահովումը բարդանում է⁷: Գծային բնակավայրի ռազմադիմակայունության թույլ կողմերից է հիմնական ուղիների արգելափակման դեպքում շրջակա միջավայրի հետ կապող ուղիներից կենսական օբյեկտների և քաղաքային կենտրոնների մեկուսացումը: Ըստ այդմ՝ ցանկալի է, որ գծային ուղիների թիվը լինի երեք և ավելի, ստեղծվեն կանաչապատ բաց տարածքներ, որպեսզի որևէ ուղու վնասման դեպքում լինի այլընտրանքային մոտեցումների, տարահանման հնարավորություն:

Ուղղանկյունաձև - ցանցային համակարգ: Ըստ էության, բնակավայրերի տարածական պլանավորման ամենատարածված ձևն է* (տես Գժ.): Փողոցների ցանցանման դասավորության դեպքում դրանք միմյանց ուղղահայաց կամ զուգահեռ են: Սա ապակենտրոնացված համակարգ է, որտեղ կան մեծ թվով հանգույցներ կամ հատման կետեր⁸: Տվյալ կառուցվածքի դեպքում ձևավորվում են քաղաքային կենտրոններ, որոնք միանալով՝ գլխավոր հատակագծում ստեղծում են ցանց: Դա հնարավորություն է տալիս քաղաքային

⁵ Stu M. Akhbari, M. A. A. Moghadam. Investigating non-operating security in city management (պարսկ. լեզվով). "Geopolitics Quarterly - 10th year", 2013, N 2:

⁶ Stu A. V. Antyufeev, O. A. Antyufeeva. Linear cities: controversies, challenges and prospects. IOP Conference Series: Materials Science and Engineering 687, 2019, P. 1 (<https://iopscience.iop.org/article/10.1088/1757-899X/687/5/055025/pdf>):











⁷ Stu A. Vardanyan. The Role of Physical Features of the Site in the Design of Military-Resistant Building. International Multidisciplinary Scientific GeoConference: SGEM. Sofia, 2022, Vol. 22, Issue 5.1, PP. 489–496:

* Կոչվում է նաև դրա հեղինակ մ. թ. ա 5-րդ դարի ճարտարապետ-քաղաքաշինարար և տեսաբան Հիպպոդամոս Միլեթացու անունով՝ Հիպպոդամոսյան:

⁸ Stu L. Mazza. Centenary Paper: Plan and Constitution: Aristotle's Hippodamus: towards an 'ostensive' definition of spatial planning. "The town planning review", 2009, Vol. 80, N 2:

Կենտրոնների վրա հարձակման դեպքում խուսափելու մեծ մարդկային և նյութական կորուստներից, կրճատելու կենսագործունեության վնասված օբյեկտների թիվը: Մինևույն ժամանակ, ռազմական գործողությունների դեպքում ուղղանկյունաձև-ցանցային կառուցվածք ունեցող բնակավայրը, ի տարբերություն գծայինից, կառուցապատման մեծ խտության պատճառով կարող է ենթարկվել ավելի մեծ ռիսկերի:

Գծապատկեր

Բնակավայրերի կառուցվածքային համակարգ		
Տեսակը	Տեսքը	Մխեման
1. Գծային		
2. Ուղղանկյունաձև-ցանցային		
3. Անկանոն		
4. Օղակաձև-ճառագայթային		
5. Ճառագայթային		

Այդ համակարգերի դեպքում, երբ շարքից դուրս է գալիս ենթակառուցվածքներից առնվազն մեկի մի մասը, կարող են գործել ցանցի այլընտրանքային ուղիները: Մասնավորապես՝ ջրի և գազի համակարգերը բաշխվում

են այնպես, որ հրդեհի առաջացման պարագայում համապատասխան փականները փակելու միջոցով հնարավոր լինի ամբողջ ջուրն ուղղել դեպի հրդեհի օջախ⁹:

Անկանոն կառուցվածքային ձև: Բնակավայրերի անկանոն կառուցվածքը գեղագիտական կամ ֆունկցիոնալ պատճառներով հաղորդակցության ուղիների նախագծումն է առանց երկրաչափական օրինաչափությունների պահպանման¹⁰ (տես Գժ.): Այն կարող է ստեղծվել նաև առանց նախագծի՝ որպես ժողովրդական (վերնակույր) կառուցապատման արդյունք:

Անկանոն ձևի կառուցապատումը վերաբերում է մի համակարգի, որտեղ խախտվում են նախապես պլանավորված կառուցվածքը և դասավորությունը: Այդ շինությունների մի մասը կառուցվում է այնպես, որ ինտեգրվի նախկին գլխավոր հատակագծերին, մինչդեռ մյուսները կառուցվում են քաղաքի ընդարձակման հետևանքով: Վերլուծելով փողոցային մարտերի առանձնահատկությունները՝ մասնագետները նշում են, որ կառուցապատման տեսանկյունից գործերի կառավարման ամենաէական դժվարություններից մեկը քաղաքային փողոցների լաբիրինթոսային վիճակն է, որտեղ հարձակվող կողմի ուժերը չեն կարողանում կիրառել իրենց մարտական հմտությունները և օգտագործել հեռահար զենքի ուժը¹¹: Գրականության մեջ նշված ստանդարտների համաձայն՝ տվյալ տարածքում չպետք է լինեն 60 մետրից ավելի երկարությամբ ուղիներ, քանի որ արտակարգ իրավիճակների ժամանակ դրանք կսահմանափակեն տեղաշարժը¹²:

Օղակաձև - ճառագայթային կառուցվածքային համակարգ (տես Գժ.): Այս համակարգի դեպքում բնակավայրը դասավորվում է աստիճանաբար ընդարձակվող համակենտրոն օղակներով, սովորաբար ավելի մեծ շառավիղ ունեցող ենթակառուցվածքների դասավորության հետ համատեղ¹³: Օղակաձև բնակավայրերում հնարավոր է տարբեր տարածական-գործառական օրինաչափություններով հիմնական ճանապարհային համակարգի հանգույցների միացմամբ ստեղծել քաղաքային կենտրոնների ցանց, ինչի շնորհիվ համակարգի չվնասված շերտերը կշարունակեն գործել անգամ բնակավայրի հիմնական կենտրոնի վնասման դեպքում:

⁹ Stu *Amir Shakibamanesh*. Secure Urban Design in Terms of Passive Defense Approach; Analytical Considerations for Improving Form-Based Characteristics in Iranian Cities. "Armanshahr Architecture & Urban Development", Spring-Summer 2015, Vol. 8, Issue 14:

¹⁰ Stu "Combined Arms Operations in Urban Terrain" (FM 3-06.11 (FM 90-10-1)). Headquarters Department of The Army. Washington, DC, 28 February 2002, PP. 2–9:

¹¹ Stu *Н. А. Балаклея*. Город как место войны: топологические модели военного города. «Известия Самарского научного центра Российской академии наук. Социальные, гуманитарные, медико-биологические науки», 2021, т. 23, № 80:

¹² Stu "Urban Operations" (FM 3-06 (FM 90-10)). Headquarters, Department of the Army. Washington, DC, 2 September 2011, PP. 2–8:

¹³ Stu "Combined Arms Operations in Urban Terrain" (FM 3-06.11 (FM 90-10-1)), PP. 2–9:

Ճառագայթային կառուցվածքային ձև (տես Գծ.): Այս դեպքում հիմնական մայրուղիները սկիզբ են առնում կենտրոնական կետից: Ի տարբերություն շառավղային - օղակաձև տարբերակից՝ ճառագայթայինի ժամանակ ճանապարհները հատվում են մեկ կետում և չունեն իրար միացնող այլընտրանքային ուղիներ, ինչն էլ այս համակարգի ռազմադիմակայունության բացասական կողմերից է¹⁴:

Դեղին գիծ: Ապահով բաց տարածքներ չլինելու հանգամանքը մեծացնում է տարածական միջավայրի խոցելիությունը, քանի որ շինությունների փլուզման ժամանակ առաջացող բեկորները վտանգ են ներկայացնում, մասնավորապես՝ անցորդների համար: Ըստ այդմ՝ քաղաքաշինության մեջ կիրառվում է «դեղին գիծ» հասկացությունը:

Դեղին գիծը սահմանագծում է անվտանգության տարածքը տեխնաժին կամ որևէ այլ արտակարգ իրավիճակի հետևանքով շենքի փլուզման դեպքում տարահանման, դեպքի վայրին «շտապ օգնության» մեքենաների մոտեցման ուղիները և այլ ուղիներ ապահովելու համար: Այսինքն՝ սա այն տարածքն է, որը պետք է շենքերի և շինությունների փլուզման դեպքի համար լինի ազատ: Դեղին գիծը սահմանափակում է մայրուղիների և տրանսպորտային հանգույցների երկայնքով բարձրահարկ շենքերի կառուցումը (սահմանում է դրանցից շենքերի նվազագույն թույլատրելի հեռավորությունը): Այդ շենքերը պետք է կառուցվեն թաղամասերի կենտրոնում¹⁵: Շենքերի բարձրությունը պետք է լինի այնպիսին, որ պայթյունի հարվածային ալիքով առաջացված բեկորների դեպքում չփակվեն հաղորդակցման ուղիները և չխոչընդոտվի փրկարար ուժերի օգնությունը¹⁶:

Մարտական գործողությունների ժամանակ շինությունների փլուզումներ առաջացնող կոնդենսացված պայթուցիկ նյութերի պայթյունի պարամետրները որոշվում են ըստ դրանց տեսակի, արդյունավետ զանգվածի, հենքային մակերևույթի բնույթի և մինչև պայթյունի կենտրոն եղած հեռավորության¹⁷: Հաշվարկումը կատարվում է երկու փուլով. սկզբում որոշվում է դիտարկվող հեռավորությունների համար բերված R շառավիղը, իսկ հետո ΔPФ ավելցուկային ճնշումը¹⁸:

¹⁴ Տես նույն տեղում:

¹⁵ Տես *Дмитрий Исаенко*. Цветные линии – это современные требования к безопасности и комфорту застройки, 12.06.2018 (<https://www.obozrevatel.com/realty/news/tsvetnyie-linii-eto-sovremennyye-trebovaniya-k-bezopasnosti-i-komfortu-za-strojki.htm>):

¹⁶ Տես Հ. Հոսիսի Ամինի, Դ. Ամինի, Հ. Քամրան, Նշ. աշխ.:

¹⁷ Տես Գ. Ս. Տակո, Մ. Ս. Ըվիլև, Ի. Ս. Սոլյակով և ըր. Обеспечение мероприятий и действий сил ликвидации чрезвычайных ситуаций. Учебник в 3-х частях, ч. 2: «Инженерное обеспечение мероприятий и действий сил ликвидации чрезвычайных ситуаций», в 3-х книгах, книга 2: «Оперативное прогнозирование инженерной обстановки в чрезвычайных ситуациях». Под общ. ред. С. К. Шойгу. М., 1998, сс. 109–111:

¹⁸ Տես «Методика оценки инженерной обстановки при взрыве здания». Министерство потребительского рынка и услуг Московской области (https://mpru.mosreg.ru/upload/iblock/4ae/metodika-otsenki-iz-mchs-_1_.docx):

Պայթյունի գոտու բերված շառավիղը որոշվում է հետևյալ բանաձևով¹⁹.

$$\bar{R} = \frac{r}{\sqrt[3]{2 \cdot \eta \cdot Q \cdot k_{արդ.}}}, \text{ մ/կգ}^{1/3}, \quad (1)$$

որտեղ r -ը հեռավորությունն է մինչև պայթուցիկ նյութի պայթյունի կենտրոն, մ, η -ն հենքային մակերևույթի բնույթի հաշվառման գործակիցն է, որը հավասար է. մետաղի համար՝ 1, բետոնի համար՝ 0,95, գրունտի և փայտի համար՝ 0,6...0,8, Q -ն պայթուցիկ նյութի զանգվածն է, կգ, $k_{արդ.}$ -ը դիտարկվող տեսակի պայթուցիկ նյութի՝ տրոտիլին համարժեքության գործակիցն է՝ վերցված համապատասխան աղյուսակից²⁰:

Հարկ է նշել նաև, որ բեկորների ավերիչ ուժը (կինետիկական էներգիան) և ըստ այդմ կառույցների ավերածության աստիճանը պայմանավորված են ոչ միայն ներագրող ուժով (ավելցուկային ճնշմամբ), այլև կառույցի նյութի հատկություններով (տես Աղ.):

Աղյուսակ

Օդային հարվածային ալիքի ավելցուկային ճնշումից շինությունների ավերման աստիճանը ըստ կառույցի նյութի՝

Շինությունների տիպեր	Ավերման աստիճաններ և ավելցուկային ճնշում, կՊա			
	թույլ	միջին	ուժեղ	լրիվ
1	2	3	4	5
Աղյուսե և քարե. ցածրահարկ (սակավահարկ) բազմահարկ	8-20 8-15	20-35 15-30	35-50 30-45	50-70 45-60
Երկաթբետոնե խոշոր պանելային. ցածրահարկ (սակավահարկ) բազմահարկ	10-30 8-25	30-45 25-40	45-70 40-60	70-90 60-80
Երկաթբետոնե միաձույլ. բազմահարկ բարձր հարկայնությամբ	25-50 25-45	50-115 45-105	115-180 105-170	180-250 170-215
Երկաթբետոնե խոշոր պանելային՝ երկաթբետոնե և մետաղե հիմնակմախքով և ամբարձիչային սարքավորանքով՝ բեռնամբարձությամբ՝ արտահայտված տոննաներով.				
մինչև 50	5-30	30-45	45-75	75-120
50-ից մինչև 100	15-45	45-60	60-90	90-135

¹⁹ Сту А. Юнис, Н. В. Бакаева. Градостроительная методика оценки разрушения жилых территорий, пострадавших в результате боевых действий. «Градостроительство и архитектура», 2020, т. 10, № 4:

²⁰ Сту «Методика оценки инженерной обстановки при взрыве здания», табл. 3 (https://mpru.mosreg.ru/upload/iblock/4ae/metodika-otsenki-iz-mchs-_1_.docx):

* Բերվում է ըստ՝ «Методика оценки инженерной обстановки при взрыве здания», Աղ. 2-ի:

1	2	3	4	5
“Սենդվիչ” տիպի պատերով և մինչև 20 տոննա ամբարձիչային սարքավորանքով՝ բեռնամբարձությամբ, շինություններ	10-30	30-50	50-65	65-105
Պահեստային շինություններ մետաղե հիմնակմայխքով և թերթավոր մետաղից պատերով	5-10	10-20	20-35	35-45

Ռազմավարական օբյեկտների մասշտաբային փոփոխություն: Ռազմավարական օբյեկտները, ինչպիսիք են զորակայանները, զորամասերը, օդանավակայանները և այլն, երբեմն տեղաբաշխվում են բնակավայրերի միջև: Շրջակա միջավայրի հետ դրանց ակնհայտ տարբերությունները և ապաքողարկիչ հատկություններով օժտվածությունը հակառակորդի հետախուզության համար սովորաբար հեշտացնում են դրանց հայտնաբերումը: Նկատելիության նվազեցման մեթոդներից է դրանց մեծ ծավալների տեսողական մասնատումը ավելի փոքր հատվածների՝ օդային հետախուզության հնարավորությունները սահմանափակելու, շփոթեցնելու, միավոր զինատեսակի խոցումից ավելի փոքր խոցման մակերես առաջացնելու նպատակով: Եթե դրանք հնարավոր չէ մասնատել կամ ձուլել շրջապատող միջավայրի ֆիզիկական կառուցվածքի հետ, ապա պետք է նախագծվեն որպես առանձին, բայց գործառական առումով փոխկապված մի շարք միկրոծավալներ²¹:

Հաղորդակցության և տարահանման ուղիներ: Պետության տնտեսության կարևոր տարրերից են բնակավայրերի կառուցվածքային համակարգը և դրանք իրար կապող ենթակառուցվածքները (այդ թվում՝ օդանավակայանները, ծովային և գետային նավահանգիստները, ճանապարհները): Տարածական պլանավորման գործում կենսական նշանակություն ունեն հաղորդակցության ուղիների և հատկապես ճանապարհային ցանցի նախագծումը, անհրաժեշտ թվով տարահանումային ելքերի նախատեսումը և այլն: Այսպիսով՝ ռազմական գործողությունների թատերաբեմը, ռազմավարական ուղղությունը կամ գործողությունների գոտին գնահատելիս՝ առաջին հերթին պետք է ուսումնասիրել ճանապարհային ցանցը և ռազմավարական նշանակությամբ հանգույցները: Հատկապես կարևոր է դրանք գնահատել ընդհանուր հաջողության հասնելու նպատակով ռազմական կազմավորումների անխոչընդոտ տեղաշարժման, դեպի սպառնալից ուղղություն պահեստային կամ երկրորդ շարակարգների առաջխաղացման՝ թիկունքային և այլ տեսակների ապահովումների գծով աշխատանքների կազմակերպման տեսանկյունից²²:

Տրանսպորտային միջոցները հատկապես խոցելի են դառնում, երբ դրանք անցնում են խիտ կերպով կառուցապատված քաղաքային ու գյուղական տեղանքով: Ուստի, տարածքային պաշտպանության ստորաբաժանումները, գիտենալով տեղանքի առանձնահատկությունները, կարող են

²¹ Տես *Ամիր Շակիրամանեշ*, Նշ. աշխ.:

²² Տես *Н. С. Олесик*. Военная георбанистика, «Армейский сборник», февраль 2014 № 2:

իրենց ուժերը կենտրոնացնել այնպիսի դիրքերում, որտեղ նրանց կարողությունները տեղանքի շնորհիվ մեծանում են²³: Տարածական պլանավորման, ինչպես նաև ճկուն ճարտարապետական լուծումների միջոցով պետք է հակառակորդի համար նախատեսել աննկատ, մեռյալ գոտիներ՝ նրա կրակային կարողությունները նվազագույնի հասցնելու համար²⁴:

Հիմնական փողոցների խաչմերուկները, զբոսայգիները և բնակելի տարածքների բաց եզրերը համարվում են առավելագույն տեսադաշտ ապահովող հատվածներ, հետևաբար ռազմադիմակայունության տեսանկյունից պահանջում են համապատասխան կահավորում: Օրինակ՝ փողոցների կահավորումը կարող է սահմանափակել զրահատեխնիկայի տարաշարժը²⁵, իսկ մայրուղային կոյուղատարները և մետրոները կարող են հետևակային և հատուկ նախանշանակման ուժերի համար դառնալ ստորգետնյա ուղիներ:

Ռազմադիմակայունության մեջ մեծ կարևորություն ունեն գրունտի առանձնահատկությունները: Այստեղ պետք է հաշվի առնել տարբեր ֆիզիկական վիճակներում գտնվող գրունտներով երթևեկելու հնարավորությունները և գրունտի այն առանձնահատկությունները, որոնք կարող են կիրառվել հակառակորդի ռազմական տեխնիկայի առաջխաղացմանը խոչընդոտելու նպատակով: Ընդսմին կարևորվում է նաև տվյալ տարածքում երեսպատման համար օգտագործվող նյութերի ընտրությունն ու դրանց փխրունության աստիճանը՝ ըստ պայթյունի ժամանակ հնարավորինս քիչ կործանարար բեկորներ առաջացնելու հատկություն: Մասնավորապես՝ հարկ է նշել, որ խոցման հիմնական արդյունքներից են պայթյունից առաջացած առաջնային և երկրորդային բեկորները: Առաջնային բեկորները զոյանում են նյութի (չինանյութ, գրունտ և այլն) վրա պայթուցիկների ազդեցության հետևանքով, իսկ երկրորդային բեկորները՝ որպես նյութի վրա առաջնային բեկորների ազդեցության արդյունք: Օրինակ՝ քարային ապարներն ու խճաքարային տարածքներն իրենց բեկորների հաշվին մեծացնում են արկերով և ականներով խոցման գոտին²⁶: Ավազային գրունտներն ընդհակառակը նվազեցնում են հրետանային միջոցների խոցիչ կարողությունը: Ըստ այդմ՝ կառույցների ռազմադիմակայունությունը անմիջականորեն կախված է նաև միջավայրի գրունտից և լանդշաֆտային առանձնահատկություններից²⁷:

²³ Տես Հ. Ս. Քոթանջյան, Պետության տարածքային պաշտպանության կազմակերպման հարցի շուրջ՝ Իսրայելի օրինակով: «ՀԲ», 2009, հմ. 3:

²⁴ Տես *Benjamin Phocas, Jayson Geroux. The School of Street Fighting: Tactical Urban Lessons from Ukraine*. "The Modern War Institute", 13.07.2022 (<https://mwi.usma.edu/the-school-of-street-fighting-tactical-urban-lessons-from-ukraine>):

²⁵ Տես "Military Operations on Urbanized Terrain (MOUT)" (MCWP 3-35.3). Headquarters United States Marine Corps. Washington, 26 April 1998, DC, PP. 3-27–3-37, D-1):

²⁶ Տես Հ. Սայադյան, Հայաստանի ռազմական աշխարհագրություն, 3-րդ լրամշակված հրատարակություն: Ե., 2020, էջ 51:

²⁷ Տես "The International Ammunition Technical Guidelines (IATG)". Third edition. NY, 2021:

Եզրակացություն

Եվ այսպես՝ բնակավայրի կառուցապատման ժամանակ, հատկապես՝ սահմանամերձ գոտում, պարտադիր կերպով պետք է հաշվի առնել պաշտպանական անվտանգության ապահովման պահանջները (կառույցների ռազմադիմակայությունը): Այնպիսի տվյալների վերլուծությունը, ինչպիսիք են շենքերի և շինությունների հաղորդակցության և սպասարկման հնարավորությունները, շարունակական կենսագործունեության համար պայմանների ապահովումը, շենքերի տեղակայման լանդշաֆտային առանձնահատկությունները, հարակից փողոցների ձևը և լայնությունը, գրունտի տեսակը, կարող են օգնել տարածքներն ու ենթատարածքները դասակարգելու ռազմադիմակայունության տեսանկյունից, ինչը հնարավորություն կստեղծի ի հայտ բերելու խոցելի բաղադրիչներն ու կառուցվածքները, ճիշտ ռազմավարություն ապահովելու, անվտանգությունը և ռազմադիմակայունությունը մեծացնելու, վնասները նվազեցնելու և այլ գործողությունների համար: Կարևոր նշանակություն ունեն նաև բնակավայրերի ապակենտրոնացված կառուցվածքի ձևավորումը, տարահանման և տարածքային պաշտպանության այլընտրանքային ելքերի հնարավորությունները, որոնք հիմնական ճանապարհների արգելափակման դեպքում պետք է նպատակաուղղված լինեն բնակավայրի բնականոն կենսագործունեության ապահովմանը:

ГРАДОСТРОИТЕЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ

СТРУКТУРНЫЕ ОСОБЕННОСТИ НАСЕЛЕННЫХ ПУНКТОВ С ТОЧКИ ЗРЕНИЯ ИХ ВОЕННОУСТОЙЧИВОСТИ*

*А. В. ВАРДАНЯН, аспирант Национального университета архитектуры
и строительства Армении*

РЕЗЮМЕ

В статье с точки зрения структурных особенностей населенных пунктов и их военноустойчивости рассматриваются структурные формы пространственной планировки – линейная, прямоугольно-решетчатая, неправильная, радиально-кольцевая, лучевая. Отмечается, что во время застройки населенных пунктов важное с точки зрения военноустойчивости значение имеет учет следующих факторов: улично-дорожная сеть, обеспечение путей сообщения и эвакуации, сохранение желтых линий, расчеты степени разрушения построек и зон поражения, масштабные изменения стратегических объектов, учет грунтологических особенностей среды.

* Термин введен автором для обозначения способности строений оказывать сопротивление воздействию военных (боевых) разрушительных средств.

Анализ таких данных, как возможности сообщения и обслуживания зданий и построек, обеспечение условий непрерывной жизнедеятельности, ландшафтные особенности размещения зданий, формы и ширина близлежащих улиц, вид грунта, может быть полезным для классификации территорий и подтерриторий с точки зрения военноустойчивости, выявления уязвимых компонентов и структур. В частности, придается особое значение оформлению децентрализованной структуры населенных пунктов, возможности альтернативных выходов при эвакуации и территориальной обороне, которые должны быть нацелены на обеспечение нормальной жизнедеятельности населенного пункта в случае блокировки основных дорог.

URBAN PLANNING SECURITY

STRUCTURAL FEATURES OF SETTLEMENTS FROM THE POINT OF THEIR COMBAT RESISTANCE*

A. V. VARDANYAN, Applicant, National University of Architecture and Construction of Armenia

SUMMARY

The article examines the structural forms of spatial planning – linear, rectangular-lattice, irregular, radial-ring, radial – from the point of the structural features of settlements and their combat resistance. It is pointed out that during the construction of populated areas, the following factors are important to be taken into account from the perspective of combat resistance: the street and road network, provision of communications and evacuation routes, retention of yellow lines, calculations of the degree of destruction of buildings and kill zones, large-scale changes in strategic objects, consideration of the soil conditions of the environment.

Analysis of such data as the possibility of communication and maintenance of buildings and constructions, ensuring conditions for uninterrupted vital activity, landscape features of the building placements, the shape and width of nearby streets, the type of soil, can be useful for classifying territories and subterritories with the account of combat resistance, and identifying the vulnerable components and structures. In particular, special importance is attached to the design of a decentralized structure of settlements, the possibility of alternative exits during evacuation and territorial defense, which should be taken into account for ensuring the normal activity of a settlement in case the main roads are blocked.

* The term was introduced by the author for denoting the capabilities of structures to resist the influence of destructive military (combat) means.

**ՈՉ ԶԵՐՄԱՅԻՆ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅԱՄԲ ՄԻԿՐՈԱԼԻՔԱՅԻՆ
ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԱՌՈՒՄՆԵՐ***

*Կ. Բ. ԵՆԿՈՅԱՆ, Կ. Գ. Ղ., պրոֆեսոր, ԵՊԲՀ գիտական աշխատանքների
գծով պրոռեկտոր, Գ. Մ. ՓԱՇԻԿՅԱՆ, ք/ծ գնդապետ, ՀՀ ՊՆ
ռազմարժշկական ապահովման վարչության պետ, Գ. Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ,
ք/ծ փոխգնդապետ, ԵՊԲՀ ՌԲՖ բուժծառայության կազմակերպման
և մարտավարության ամբիոնի պետ, Ս. Պ. ՔՈՉԱՐՅԱՆ, Կ. Գ. Թ., դոցենտ,
ԵՊԲՀ գիտության վարչության պետ, Լ. Ս. ԳԱԼՍՏՅԱՆ, ք. գ. թ., ԵՊԲՀ
ՌԲՖ աղետների բժշկության և քաղաքացիական պաշտպանության
ամբիոնի ավագ դասախոս, Հ. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ, ԵՊԲՀ ՌԲՖ աղետների
բժշկության և քաղաքացիական պաշտպանության ամբիոնի դասախոս,
Ս. Գ. ԳԱԼՍՏՅԱՆ, պահեստագործի ք/ծ գնդապետ, ք. գ. Ղ., պրոֆեսոր,
ԵՊԲՀ ՌԲԿԳ կենտրոնի տնօրեն*

21-րդ դարը բնութագրվում է տեխնոլոգիաների բուռն զարգացմամբ: Միևնույն ժամանակ տեղի է ունենում օրգանիզմի վրա տարբեր ֆիզիկա-կան և քիմիական գործոնների ազդեցությամբ զարգացող հիվանդությունների մակարդակների բարձրացում: Այդպիսի գործոններից է էլեկտրամագնիսական դաշտը (ԷՄԴ):

Հարկ է շեշտել, որ վերջին տասնամյակների ընթացքում մարդու գործունեության պատճառով, ի լրումն Երկիր մոլորակի վրա արդեն առկա բնական էլեկտրամագնիսական ֆոնի, մթնոլորտային էլեկտրական, արեգակնային և գալակտիկական ռադիոճառագայթման, առաջացել է շրջակա միջավայրի նոր, խիստ կարևոր նշանակությամբ արհեստական (մարդածին) ծագում ունեցող գործոն՝ էլեկտրամագնիսական դաշտը¹: Մասնավորապես՝ նշվում է, որ գիտական և տեխնոլոգիական առաջընթացի հետևանքը էլեկտրամագնիսական դաշտի էներգիա ստեղծող մարդկային գործունեության մի շարք քաղաքացիական և ռազմական ոլորտներում կիրառվող սարքերի, օրինակ՝ ռադիոտեղորոշիչների, հեռուստատեսային և ռադիոհաղորդումների միջոցների, տեխնոլոգիական կայանքների, արդյունաբերական սարքավորանքի, կենցաղային սարքերի և այլ միջոցների լայնածավալ օգտագործումն է²:

* Հոդվածն ստացվել է 22.02.2024: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 20.03.2024: Սույն հետազոտությունները կատարվել են **17DP-1F027** ծածկագրով (2017-2019 թթ.), «Գերբարձր հաճախականության էլեկտրամագնիսական դաշտի հետ մասնագիտական շփում ունեցող անձանց առողջական վիճակը, դրա բարելավման ռազմավարությունը՝ որպես զինված ուժերի բարձր մարտունակության պահպանման առանցք» գիտական թեմայի շրջանակներում:

¹ *Stu A. C. Рудой, Е. В. Титкова, И. В. Загашвили.* Современные подходы к диагностике, терапии, профилактике поражений электромагнитного излучения сверхвысокочастотного диапазона. «Военная медицина», 2017, № 2:

² *Stu* նույն տեղում:

Ռադիոհաճախականության սպեկտրում ակտիվորեն օգտագործվում են ուլտրաբարձր, գերբարձր և բարձր հաճախականությամբ էլեկտրամագնիսական ճառագայթման աղբյուրները, ընդամին տատանումների 300 ՄՀց-ից մինչև 300 ՉՀց հաճախականությունները (միլիմետրային, սանտիմետրային և դեցիմետրային երկարությամբ ալիքների միջակայքը) ընդունված է անվանել «գերբարձր հաճախականության» (ԳԲՀ), կամ «միկրոալիքային», տիրույթ, որն ունի առավել կարևոր բժշկական և կենսաբանական նշանակություն³:

Ըստ գրականության տվյալների՝ կենդանի օրգանիզմների վրա միկրոալիքային ճառագայթման անբարենպաստ ազդեցության մասին տեղեկություններ ստացվել են դեռ անցյալ դարի 30–40-ական թվականներին. 50-ականներին սկսվել են կենդանիների և մարդկանց վրա միկրոալիքային ազդեցության համակարգված ուսումնասիրություններ⁴: Այս ուսումնասիրությունների շնորհիվ առաջարկվել է նոզոլոգիական նոր հասկացություն՝ «ռադիոալիքային հիվանդություն», կամ «քրոնիկական միկրոալիքային ախտահարում»: Անցյալ դարի 60-ականների վերջին նկարագրվել է էլեկտրամագնիսական բնույթի խանգարումների կլինիկական պատկերը:

Այս աշխատանքների արդյունքներն օգտագործվել են նախկին ԽՍՀՄ-ում, իսկ անկախացումից հետո՝ ԱՊՀ երկրներում, ներառյալ ՀՀ-ում⁵, հա-

³ Տես *Ю. Б. Кудряшов, Ю. Ф. Перов, А. Б. Рубин*. Радиационная биофизика: радиочастотные и микроволновые электромагнитные излучения. Учебник для вузов. М., 2008:

⁴ Տես *Ф. А. Колесник*. Функциональное состояние желудка и кишечника у лиц, работающих в условиях воздействий СВЧ-поля. «Гигиена труда и биологическое действие электромагнитных волн радиочастот». М., 1968, сс. 75–76; *А. С. Пресман*. Электромагнитные поля и живая природа. М., 1968; *Г. В. Тягин*. Клинические аспекты облучения СВЧ-диапазона. М., 1971; *М. Н. Садчикова, К. В. Глотова, Г. В. Снегова, С. П. Корневская*. Клиника и лечение радиоволновой болезни. «Гигиена труда и биологическое действие электромагнитных волн радиочастот». М., 1972, сс. 13–14:

⁵ Տես *ЭНТ. Р. Чингирязов, ЭНТ. Ф. Мертц, У. Р. Пирри, Նշ. աշխ., Ս. Գ. Գալստյան, Ա. Ս. Քոչարյան*, Ոչ ջերմային ինտենսիվությամբ միկրոալիքների ներգործությանը ենթարկվող անձանց օրգանիզմներում աղաթթվի համադրման որոշ հնարավոր մեխանիզմների մասին: «ՀԲ», 2013, հմ. 3–4, *А. Ю. Рамазанова, Д. С. Ергалиев*. Исследование влияния электромагнитных излучений на биологические объекты. «Труды Международного симпозиума «Надежность и качество», 2016, т. 2 (<https://cyberleninka.ru/article/n/issledovanie-vliyaniya-elektromagnitnyh-izlucheniya-na-biologicheskie-obekty/viewer>); «Современные подходы к диагностике, терапии, профилактике поражений электромагнитными излучениями СВЧ-диапазона». Учебно-методическое пособие. Белорусский государственный медицинский университет, кафедра Военно-полевой терапии. Минск, 2018; *А. Д. Наумов*. Воздействие высокочастотных электромагнитных полей на нервную систему. «Вестник Витебского государственного медицинского университета», 2020, т. 19, № 4 (<https://cyberleninka.ru/article/n/vozdeystvie-vysokochastotnyh-elektromagnitnyh-poley-na-nervnuyu-sistemu/viewer>):

կառային պաշտպանության համակարգի բուժժառայության գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերը մշակելիս:

ՀՀ անկախության երաշխավորը նրա զինված ուժերն են, որոնց կարևորագույն խնդիրներից մեկը պետության օդային տարածքի անվտանգության ապահովումն է: Վերջինիս համար ստեղծվել են հակաօդային պաշտպանության զորքեր, որոնք իրենց տրամադրության տակ ունեն ՀՀ օդային տարածքը խախտած ցանկացած օբյեկտի հայտնաբերման և խոցման համապատասխան սպառազինություն: Այդ սպառազինության բաղադրիչներից են ռադիոտեղորոշումային կայանները, որոնց գործարկման հիմքը գերբարձր հաճախականությամբ էլեկտրամագնիսական դաշտն է: Այդ կայանների սպասարկումը հույժ բարդ է և պահանջում է հատուկ կրթություն ստացած և առողջական խնդիրներ չունեցող անձնակազմ: Ընդամենն դա պահանջում է, մի կողմից, անձնակազմի բավական ժամանակատար պատրաստում, իսկ մյուս կողմից՝ նրա առողջական վիճակի ապահովում, որը ՀՀ Ձինված ուժերի ռազմաբժշկական ծառայության գերխնդիրն է և որի համար պետք է ամեն ինչ անել, որպեսզի կանխվեն մասնագիտական և ոչ մասնագիտական հիվանդությունների հնարավոր զարգացումն ու դրանց պատճառով վաղաժամկետ զորացումները:

Ըստ այդմ էլ անհրաժեշտ է հստակ կերպով կանոնակարգել տվյալ թվակազմի բուժապահովման համակարգի գործունեությունը, ինչի համար պահանջվում է կատարել սանիտարահիգիենիկ պայմանների ուսումնասիրություն և բարելավում, առողջական վիճակի դիսպանսեր հսկողություն, օրգանիզմում տեղի ունեցող հարմարվողական պրոցեսների գնահատում, նախահիվանդագին պրոցեսների ժամանակին հայտնաբերում և բուժկանխարգելիչ միջոցառումների իրականացում⁶:

Հետևաբար անհրաժեշտ է՝

- ուսումնասիրել գերբարձր հաճախականության էլեկտրամագնիսական դաշտի հետ մասնագիտական շփում ունեցող անձանց աշխատանքի սանիտարահիգիենիկ պայմանները,
- վերլուծել թերապևտիկ պրոֆիլի հիվանդացությունը՝ ուշադրություն դարձնելով նյարդային, սիրտ-անոթային, աղեստամոքսային համակարգերի ֆունկցիոնալ խանգարումների ձևավորման, տազնապայնության, ծերացման տեմպի, հարմարվողականության դրսևորումների, վեգետատոթային խանգարումների ախտանշանների ի հայտ գալուն, վարակային հիվանդությունների կառուցվածքին, դրանցով հիվանդանալու ժամանակին,
- կատարել արյան կլինիկական և կենսաքիմիական հետազոտություններ, որոնց ընթացքում հարկ է ուսումնասիրել օրգանիզմի հարմարվո-

⁶ Տես *Գ. Ո. Վարդանյան, Լ. Ս. Գալստյան*, Միկրոալիքային ճառագայթման գերատորներով աշխատող անձանց հոգեհուզական վիճակի որոշ հարցեր: «ՀԲ», 2021, հմ. 1:

ղականությունը բացատրող հորմոնների (տեստոստերոնի, պրոլակտինի, կորտիզոլի, TSH, T₃, T₄, անտի-TPO և անտի-TSH մակարդակների) տեղաշարժերը, միջհորմոնալ փոխհարաբերությունները,

- հետազոտել իմունիտետի բջջային՝ CD₃ (T և B պոպուլյացիաների ընդհանուր փուլը), CD₄ (T հելպերները), CD₈ (T կիլերները, սուպրեսորները) և հումորալ (իմունոգլոբուլինները) օղակները,
- կիրառել մի շարք գործիքային (ԷՍԳ, ԷԷԳ, ուլտրաձայնային) հետազոտություններ,
- ստացված տվյալները վիճակագրորեն մշակել, մաթեմատիկական մոդելավորմամբ կատարել բազմագործոնային համակարգային վերլուծություն:

Հարկ է նշել, որ մենք ուսումնասիրել ենք մի շարք ցուցանիշներ, որոնք բնութագրում են տագնապայնությունը, ծերացման տեմպը և աշխատանքային պայմանները⁷:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մեր հետազոտության նպատակն է պարզել մասնագիտական գործունեության ընթացքում ոչ ջերմային ինտենսիվությամբ միկրոալիքային ճառագայթման քրոնիկական ազդեցության ենթարկվող անձանց աշխատանքային գործունեության պայմանները, կատարել նրանց ծայրամասային և երակային արյան մի շարք ցուցանիշների հետազոտություն:

ՆՅՈՒԹԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հիմնական խումբը կազմել են ոչ ջերմային ինտենսիվությամբ միկրոալիքային ճառագայթման հետ 0-20 տարի տևողությամբ մասնագիտական շփում ունեցող արական սեռի 20-50 տարեկան 100 անձ:

Ուսումնասիրվել են բոլոր հետազոտվածների աշխատանքային պայմանները, նրանց ծայրամասային արյունը և կատարվել են արյան կենսաքիմիական մի շարք հետազոտություններ:

Հսկողական խումբը կազմել են տվյալ ֆիզիկական գործոնի հետ մասնագիտական շփում չունեցող նույն սեռի և տարիքի անձինք: Ստացված տվյալների համեմատության, ինչպես նաև դրանց արժանահավատության գնահատման համար կիրառվել են վիճակագրական վերլուծության ընդունված մեթոդներ⁸:

⁷ Տես *Գ. Ռ. Վարդանյան, Ս. Գ. Գալստյան, Լ. Ս. Գալստյան, Ա. Է. Թադևոսյան*, ՀՀ ԶՈՒ-ի ՀՕՊ-ի գործերի զինծառայողների տագնապայնության և կյանքի որակի միջև կապի ուսումնասիրություն: «ՀԲ», 2023, հմ. 1, Միկրոալիքային ճառագայթման հետ շփում ունեցող զինծառայողների կենսաբանական տարիքի և ծերացման տեմպի հարցի շուրջ: «ՀԲ», 2023, հմ. 3:

⁸ Տես *Ս. Գլանց*. Медико-биологическая статистика. М., 1998:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Սանիտարահիգիենիկ տվյալների վերլուծություն և գնահատական

ԳԲՀ ԷՄԴ (միկրոալիքների) ազդեցության վերլուծությունը բարդ խնդիր է, քանի որ տվյալ գործոնին ուղեկցում են մի շարք այլ, ընդ որում, բավական հզոր գործոններ, որոնք կարող են փոխել հարմարվողականության ուղղվածությամբ ամբողջ գործընթացը:

Հարկ է նշել, որ ճառագայթման ինտենսիվությունը և աշխատանքի այլ պայմաններ վերջին տարիներին ենթարկվել են էական փոփոխությունների, ընդ որում, դոզաչափության և ԳԲՀ ԷՄԴ պաշտպանվածության բազմաթիվ հարցեր մշակվել են ոչ բավարար, չափումները աշխատանքային կետերում կատարվել են ոչ կանոնավոր կերպով, ինչը հնարավորություն չի տալիս հետազոտության օբյեկտներում ներկայացնելու ճշգրտորեն ձևավորված պատկերը:

Աշխատատեղերում կատարվել են ԳԲՀ ԷՄԴ ինչպես անընդհատ, այնպես էլ իմպուլսային ճառագայթումների չափումներ: Գնահատականներ ենթարկվել են գլուխը, վերին վերջույթները, իրանի վերին մասը: Չափումները կատարվել են «Պետական ռեգիստրի ցանկում ներառված սարքով»:

Բացի ԳԲՀ ԷՄԴ-ից առկա էին նաև ոչ սպեցիֆիկ գործոններ՝ աղմուկ, միկրոկլիմայի ցուցիչներ (ջերմություն, լույս, օդափոխություն, օդում միացություններ և այլն): Իոնացնող ճառագայթումները չեն չափվել սարքի բացակայության պատճառով:

Տվյալ թվակազմի աշխատանքային պայմանները գնահատելիս, հարկ է շեշտել, որ պաշտպանության բոլոր կանոնների պահպանման դեպքում հնարավոր մակարդակի ճառագայթման գոյության հավանականությունը եղել է փոքր, թեև սարքերի վերանորոգման, շահագործման և ռեժիմային աշխատանքների ժամանակ այն չի կարելի բացառել: Ընդ որում, հաշվի առնելով պաշտպանության պայմանների ապահովման դժվարությունները, չի կարելի նաև բացառել թույլատրելի սահմանային մակարդակների գերազանցումը:

Եվ այսպես. աշխատանքային սանիտարահիգիենիկ պայմանների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԳԲՀ ԷՄԴ-ի հետ աշխատող կազմը ենթարկվում է տվյալ մասնագիտական գործոնների ազդեցությանը: Բացի այդ, հետազոտված անձանց վրա ազդում են նաև միկրոկլիմայի այլ գործոններ, որոնք կարող են ունենալ անբարենպաստ ներգործություն աշխատողների օրգանիզմի վրա: Սակայն, հաշվի առնելով, որ դրանց միջին ցուցանիշները չեն գերազանցել թույլատրելի սահմանները և մեր պարագայում չեն եղել մշտական, կարելի է ենթադրել, որ գերակա գործոնը եղել է ԳԲՀ ԷՄԴ-ն: Տվյալ եզրակացությունը միանշանակ կերպով համընկնում է այլ հետազոտողների արդյունքների հետ⁹: Այդ իսկ պատճառով հետազոտված անձանց շրջանում մեր հայտնաբերած խանգարումները կարելի է

⁹ Стю Д. А. Родченко, М. С. Кизиченко, Е. В. Сарчук. Воздействие СВЧ-излучения на организм человека: аспекты проблемы. «Научное обозрение. Фундаментальные и прикладные исследования», 2020, № 3:

դասել հիմնականում միկրոալիքային ճառագայթման քրոնիկական ազդեցության դրսևորումների շարքին:

Ստորև ներկայացնում ենք սույն հետազոտության շրջանակներում չափված՝ արյան կլինիկական և կենսաքիմիական տվյալները (Աղյուսակներ 1 և 2):

Աղյուսակ 1

Ծայրամասային արյան մեջ լեյկոցիտների թիվը և լեյկոֆորմուլան միկրոալիքների հետ մասնագիտական շփում ունեցող անձանց շրջանում

Խմբերն ըստ ստաժի	Ցուցանիշներ	Լեյկոցիտներ (10 ⁹ /լ)	Լեյկոցիտար ֆորմուլա (%)				
			նեյտրոֆիլներ	էոզինոֆիլներ	բազոֆիլներ	լիմֆոցիտներ	մոնոցիտներ
Հսկողական	n	20					
	M±m	6,5±0,9	65,2±0,45	1,2±0,38	0,4±0,04	25,8±1,2	6,1±0,4
≤ 5	n	46					
	M±m	7.71±2.10	57.43±7.72	1.84±1.25	0.28±0.17	31.69±6.87	8.15±2.06
6–10	n	41					
	M±m	7.81±2.39	56.90±8.79	2.37±1.93	0.28±0.16	31.45±8.12	8.13±2.22
≥ 11	n	13					
	M±m	8.15±2.32	57.41±7.94	2.02±1.20	0.35±0.15	30.58±9.18	9.65±2.63

Ինչպես պարզ է դառնում աղյուսակ 1-ից, լեյկոֆորմուլայում կարծես որևէ օրինաչափություն չի արձանագրվում, սակայն միկրոալիքների հետ մասնագիտական շփում ունեցող անձանց վերջին երկու խմբում էլ դիտվում է որոշակի անկայունություն: Վերջինս հատկապես ակնհայտ է հենց լեյկոֆորմուլայում: Երկու խմբում էլ առկա են լիմֆոցիտների մակարդակի բարձրացման և սեզմենտակորիզավոր նեյտրոֆիլների նվազման միտումներ:

Սույն պատկերը կարող է հուշել, որ լեյկոֆորմուլա կազմող բաղադրիչները արձագանքում են միկրոալիքների ոչ ջերմային ինտենսիվությունների ազդեցությանը, ընդ որում, պատասխան հակազդումը տարբերվում է օրգանիզմի կենսագործունեությունն ապահովող կարգավորիչ կենտրոնների հակազդումից: Կարելի է եզրակացնել, որ քանակական ցուցանիշները չեն արտացոլում լեյկոցիտների ֆունկցիոնալ վիճակը տվյալ թվակազմի շրջանում:

Արյան մի շարք կենսաքիմիական հետազոտությունների տվյալներ բերված են աղյուսակ 2-ում, որից երևում է, որ բոլոր ցուցանիշների մակարդակները, բացառությամբ գլյուկոզի և խոլեստերինի, ունեն իջեցման միտում, ընդ որում, մնում են նորմալի սահմաններում, իսկ 11 տարի և ավելի մասնագիտական ստաժ ունեցող անձանց շրջանում՝ հսկողական խմբի հետ համեմատությամբ, դիտվում է բիլիռուբինի մակարդակի հավաստի իջեցում:

Աղյուսակ 2

Միկրոալիքների հետ մասնագիտական շփում ունեցող անձանց շրջանում արյան կենսաքիմիական մի շարք հետազոտությունների տվյալներ

Խմբեր	Ցուցանիշներ	ընդհանուր բիլիռուբին	միզանյութ	կրեատինին	ԱՍՏ	ԱՍՏ	ընդհանուր խոլեստերին	գլյուկոզ
Հսկողական	n	20						
	M±m	17,4±2,3	5,3±0,6	84,2±4,3	29,5±0,02	34,3±0,08	5,5±0,08	4,2±0,02
≤ 5	n	46						
	M±m	9.85±4.76	4.86±1.29	73.09±10.86	25.20±12.31	21.46±8.06	4.62±1.16	4.84±0.61
6–10	n	41						
	M±m	8.36±3.82	4.87±1.42	74.88±14.37	27.20±12.33	21.13±6.89	5.15±1.06	5.48±2.53
≥ 11	n	13						
	M±m	6.93±2.66	4.46±1.27	75.69±10.76	22.22±6.95	20.92±5.42	4.73±1.02	5.50±0.59

Ընդհանրացնելով՝ կարող ենք եզրակացնել, որ ոչ ջերմային ինտենսիվությամբ միկրոալիքների հետ մասնագիտական շփում ունեցող անձանց շրջանում արձանագրվում է արյան դիտարկված կենսաքիմիական ցուցա-

նիշների անկայունություն՝ նվազման միտումով, ինչպես նաև դիտվում է դրա որոշակի կախվածություն մասնագիտական ստաժի տևողությունից:

Ամենայն հավանականությամբ, այս բոլոր տվյալները կարելի է ամփոփել որպես միկրոալիքային քրոնիկական ախտահարումների համախտանիշի նախնական դրսևորումների վիճակ:

ВОЕННАЯ МЕДИЦИНА

НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ ВЛИЯНИЯ МИКРОВОЛНОВОГО ИЗЛУЧЕНИЯ НЕТЕРМИЧЕСКОЙ ИНТЕНСИВНОСТИ

К. Б. ЕНКОЯН, доктор биологических наук, профессор, проректор ЕГМУ по научной работе; Г. М. ПАШИКЯН, полковник м/с, начальник Управления военно-медицинского обеспечения МО РА; Г. Р. ВАРДАНЯН, подполковник м/с, начальник кафедры Организации и тактики медицинской службы ВМФ ЕГМУ; С. П. КОЧАРЯН, кандидат биологических наук, доцент, начальник Управления науки ЕГМУ; Л. С. ГАЛСТЯН, кандидат медицинских наук, старший преподаватель кафедры Медицины чрезвычайных ситуаций и гражданской обороны ВМФ ЕГМУ; А. А. АКОПЯН, преподаватель кафедры Медицины чрезвычайных ситуаций и гражданской обороны ВМФ ЕГМУ; С. Г. ГАЛСТЯН, полковник запаса м/с, доктор медицинских наук, профессор, директор ВМОН Центра ЕГМУ

РЕЗЮМЕ

Влияние микроволнового излучения нетермической интенсивности (сверхвысокочастотного электромагнитного поля) на живые организмы уже давно привлекает внимание исследователей и сотрудников здравоохранительной сферы.

В статье обсуждаются вопросы, связанные с санитарно-гигиеническими условиями труда лиц, имеющих профессиональные контакты со сверхвысокочастотным электромагнитным полем нетермической интенсивности, результаты проведенного авторами исследования ряда клинических и биохимических показателей крови у них.

Основная группа исследуемых состояла из 100 человек мужского пола, имеющих 0-20-летний стаж профессионального контакта с микроволновым излучением нетермической интенсивности. Контрольная группа состояла из лиц такого же числа и пола, но не подвергшихся хроническому воздействию данного физического фактора. Для сравнения полученных данных, а также оценки их достоверности были применены принятые стандартные методы статистического анализа. Исследование было проведено с учетом длительности профессионального стажа данного контингента.

На основе полученных результатов исследования был сделан вывод, что доминирующим негативным фактором в трудовой деятельности исследуемых лиц было СВЧ ЭМП, поскольку средние показатели других негативных условий (шум, показатели микроклимата – температура, свет, вентиляция воздуха, содержащиеся в воздухе вредные соединения и т. д.) были в пределах допустимых норм и являлись постоянными. С учетом этого, обнаруженные отклонения для показателей исследования в основном следует отнести к разряду проявлений хронического воздействия микроволнового излучения.

Посредством анализа результатов исследования ряда клинических и биохимических показателей крови данного контингента лиц были выявлены их нестабильность, с определенной тенденцией к снижению, а также некоторая зависимость от профессионального стажа работы в условиях микроволнового излучения нетермической интенсивности. Это позволит думать, что все эти данные можно будет объединить и представить как состояние первичных проявлений синдрома хронических микроволновых поражений.

MILITARY MEDICINE

SOME ASPECTS OF THE INFLUENCE OF MICROWAVE RADIATION OF NON-THERMAL INTENSITY

*K. B. YENKOYAN, Doctor of Biology, Professor, Vice-Rector for Science;
G. M. PASHIKYAN, Colonel of Medical Service, Head, Military Medical Support Department, MOD, RA; G. R. VARDANYAN, Lt. Colonel of Medical Service, Head, Chair, Organization and Tactics of Medical Service, Military Medical Department, YSMU; S. P. KOCHARYAN, PhD in Biology, Associate Professor, Head, Division of Science, YSMU; L. S. GALSTYAN, PhD in Medicine, Senior Lecturer, Chair, Emergency Medicine and Civil Defense, Military Medical Department, YSMU;
H. A. HAKOBYAN, Lecturer, Chair, Emergency Medicine and Civil Defense, Military Medical Department, YSMU; S. G. GALSTYAN, Colonel of Medical Service (Ret.), Doctor of Medical Sciences, Professor, Director, Center for Military Medical Research, YSMU*

SUMMARY

The influence of microwave radiation of non-thermal intensity (ultrahigh frequency electromagnetic field) on living organisms has long attracted the attention of researchers and healthcare professionals.

The article discusses the issues related to the sanitary and hygienic working conditions of persons who have professional contacts with an ultrahigh frequency electromagnetic field of non-thermal intensity, as well as the results of the authors' study of a number of clinical and biochemical blood parameters in them.

The core group of those being examined consists of 100 men with 0-20 years of professional experience in contacting with microwave radiation of non-thermal intensity. The control group consists of persons of the same number and gender, but not undergoing chronic exposure to this physical factor. Accepted standard methods of statistical analysis were used to compare the data obtained, as well as to assess their trustworthiness. The study has been conducted with a view on the duration of professional experience of this contingent.

Based on the results of the study, a conclusion was made that the dominant negative factor in the work of the persons being examined was microwave EMF, since the average indicators of other negative conditions (noise, microclimate indicators – temperature, light, air ventilation, hazardous substances in the air, etc.) were within acceptable norms and were constant. With this in mind, the detected deviations for the study indicators should mainly be attributed to the category of manifestations of chronic exposure to microwave radiation.

Through analyzing the study results of a number of clinical and biochemical blood parameters of this contingent of individuals, was revealed the instability of those parameters, with a certain tendency to decrease, as well as some dependence on professional work experience in conditions of microwave radiation of non-thermal intensity. This will allow us to think of uniting all these data and presenting them as the state of the primary manifestations of the syndrome of chronic microwave damage.

ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

*Դ. Ս. ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ, պահեստազորի գնդապետ,
Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, կապիտան, Ն. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, մայոր,
Թ. Դ. ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ, կապիտան, Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայոր,
Ք. Վ. ՓԻՐՈՅԱՆ, մայոր*

ՀԱՅԵՐԵՆ-ՌՈՒՄԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

ախտահարում – поражение – lesion
անվտանգայնացում – секьюритизация – securitization
արժեքային համահարթեցում – нивелирование ценностей – conflation of values
բազմազանեցում – диверсификация – diversification
գժտայնություն – конфликтность – proneness to conflict
դաշինք – տես *միություն*
դաշնադրություն – коалиция – coalition
եզրահանում – маргинализация – marginalization
զինված ընդդիմամարտություն – вооруженное противоборство – armed confrontation
ընտրախավ – элита – elite
թվակազմ – контингент – contingent
խոցում – поражение – hit, damage
ծականցիչ ազդեցություն – пробивное воздействие – hole-making impact
կառավարակարգավորիչ գործառույթ – управленческо-регулирующая функция – managerial-regulatory function
կառուցակարգ – տես *մեխանիզմ*
կարողունակություն – տես *ծեռնհասություն*
կիրքետարածականություն – киберпространственность – cyber-

spatiality
հակամարտայնություն – конфликтность – proneness to conflict
համակարգի առցանցայնացում – онлайнизация системы – system onlinezation
համայնքային համակեցություն – общинное общежитие – community sharing
համատեղայնական անվտանգություն – глокальная безопасность – glocal security
հեռավար կրթություն – дистанционное образование – distance education
հեռուստաբժշկություն – телемедицина – telemedicine
ծեռնհասություն – 1. компетентность, 2. компетенция – competence
ծևային կերպար – ипостась – hypostasis
մեխանիզմ – механизм – mechanism
մենաշնորհացում – монополизация – monopolization
մեքենայացված պատերազմ – механизированная война – mechanized warfare, armoured warfare
միջգիտակարգային մեթոդ – междисциплинарный метод – interdisciplinary method
միություն – союз, альянс – union, alliance
շահադրում – տես *շարժառիթավո-*

<i>ըմբ</i>	ուսումնառող – обучаемый – learner
շարժառիթավորում – мотивация, мотивирование – motivation, motivating	ուսուցանող – обучающий – educator, tutor
պարզորոշում – уяснение – clarification, comprehension	ուսուցում – обучение – learning
պարտություն – поражение – defeat	– առցանց ուսուցում – онлайн обучение – online learning
ռազմադիմակայունություն – военная устойчивость – combat resistance	– դասախոսակենտրոն ուսուցում – учителецентричное обучение – teacher-centered learning
վերնախավ – элита – elite	– ուսանողակենտրոն ուսուցում – студентоцентричное обучение – student-centered learning
տարատեսակում – диверсификация – diversification	

ՌՈՒՄԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

альянс – см. <i>СОЮЗ</i>	կարգ
военноустойчивость – ռազմադիմակայունություն	монополизация – մենաշնորհացում
вооруженное противоборство – զինված ընդդիմադրություն	мотивация – շարժառիթավորում, շահադրդում
глобальная безопасность – համատեղայնական անվտանգություն	мотивирование – см. <i>МОТИВАЦИЯ</i>
диверсификация – 1. տարատեսակում, 2. բազմազանեցում	нивелирование ценностей – արժեքային համահարթեցում
дистанционное образование – հեռավար կրթություն	обучаемый – ուսումնառող
ипостась – ձևային կերպար	обучающий – ուսուցանող
киберпространственность – կիբեռտարածականություն	обучение – ուսուցում
коалиция – դաշնադրություն	– онлайн обучение – առցանց ուսուցում
компетентность – ձեռնհասություն, կարողունակություն	– студентоцентричное обучение – ուսանողակենտրոն ուսուցում
компетенция – ձեռնհասություն, կարողունակություն	– учителецентричное обучение – դասախոսակենտրոն ուսուցում
контингент – թվակազմ	общинное общежитие – համայնքային համակեցություն
конфликтность – 1. հակամարտայնություն, 2. գժտայնություն	онлайнизация системы – համակարգի առցանցայնացում
маргинализация – եզրահանում	поражение – 1. պարտություն, 2. խոցում, 3. փխտահարում
междисциплинарный метод – միջգիտակարգային մեթոդ	пробивное воздействие – ծականցիչ ազդեցություն
механизированная война – մեքենայացված պատերազմ	секьюритизация – անվտանգայնացում
механизм – մեխանիզմ, կառուցա-	союз – միություն, դաշինք
	телемедицина – հեռուստաբժշկութե-

յուն	րիչ գործառույթ
управленческо-регулирующая функция – կառավարակարգավոր	уяснение – պարզորոշում
	элита – 1. ընտրախավ, 2. վերնախավ

ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՈՐԱՆ

alliance – see <i>union</i>	դեցություն
armed confrontation – զինված ընդդիմամարտություն	hypostasis – ձևային կերպար
armoured warfare – see <i>mechanized warfare</i>	interdisciplinary method – միջգիտակարգային մեթոդ
clarification – պարզորոշում	learner – ուսումնառող
coalition – դաշնադրություն	learning – ուսուցում
combat resistance – ռազմադիմակայունություն	– online learning – առցանց ուսուցում
community sharing – համայնքային համակեցություն	– student-centered learning – ուսանողակենտրոն ուսուցում
competence – ձեռնհասություն, կարողունակություն	– teacher-centered learning – դասախոսակենտրոն ուսուցում
comprehension – see <i>clarification</i>	lesion – ախտահարում
conflation of values – արժեքային համահարթեցում	managerial-regulatory function – կառավարակարգավորիչ գործառույթ
contingent – թվակազմ	marginalization – եզրահանում
cyberspatiality – կիբեռտարածականություն	mechanism – կառուցակարգ
damage – see <i>hit</i>	mechanized warfare – մեքենայացված պատերազմ
defeat – պարտություն	monopolization – մենաշնորհացում
distance education – հեռավար կրթություն	motivating – see <i>motivation</i>
diversification – 1. տարատեսակում, 2. բազմազանեցում	motivation – շարժառիթավորում, շահադրդում
educator – ուսուցանող	proneness to conflict – 1. հակամարտայնություն, 2. գժտայնություն
elite – 1. ընտրախավ, 2. վերնախավ	securitization – անվտանգայնացում
glocal security – համատեղայնական անվտանգություն	system onlinezation – համակարգի առցանցայնացում
hit – խոցում	telemedicine – հեռուստաբժշկություն
hole-making impact – ծականցիչ ազ-	tutor – see <i>educator</i>
	union – միություն, դաշինք

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

«Հ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈԿ-ի հաստատած «Ղոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Նյութերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 12 համակարգչային էջ ծավալով (առավելագույնը 27600 նիշ, ներառյալ՝ բացատները), խմբագրության որոշմամբ նյութը կարող է լինել մինչև 20 էջ: Նյութին կից պետք է լինեն ռուսերեն և անգլերեն ամփոփումներ (մոտ 150-250 բառ): Պետք է նշված լինեն հեղինակի անուն-հայրանուն-ազգանունը, կոչումները, աստիճանները, կազմակերպությունը, էլ. փոստի հասցեն, հեռախոսահամարը:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները: Համացանցային հղումները ընդունելի են, եթե դրանք վերցված են պաշտոնական կայքից:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի (JPEG կամ TIFF), առնվազն 300 DPI (լուսանկարները, գծանկարները) խտությամբ:

Նյութում պետք է վերծանված լինեն օգտագործված հապավումները:

Հեղինակները պատասխանատու են նյութում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Պարտադիր չէ, որ հեղինակների դիրքորոշումը համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Նյութերը հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո: Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал «Айакан банак» НИУО МО РА включен в утвержденный ВАК-ом «перечень периодических изданий, приемлемых для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Материалы должны быть представлены на армянском языке, в двух экземплярах, набранных с межстрочным интервалом в 1,5 пункта, объемом до 12 компьютерных страниц (максимум 27600 знаков с пробелами), по решению редакции объем материала может доходить до 20 страниц. К материалу должны прилагаться резюме на русском и английском языках (около 150-250 слов). Должны быть указаны фамилия-имя-отчество автора, его звание, ученая степень, организация, адрес электронной почты, номер телефона.

Авторы обязаны указывать наиболее важные использованные источники. Допускаются ссылки на интернет-ресурсы, если это официальные сайты.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотографии должны быть четкими и пригодными для печати (в формате *JPEG* или *TIFF*), плотностью минимум 300 *DPI* (фотографии, графические рисунки).

В материале должна даваться расшифровка использованных сокращений.

Авторы несут ответственность за достоверность приводимых в статье фактов и сохранение секретности.

Мнение авторов может не совпадать с позицией редакции.

Рукописи не возвращаются.

Материалы публикуются после обязательного научного рецензирования. Частичная или полная перепечатка материалов допускается только с письменного согласия редакции.

For the information of the authors and readers

The Defense-Academic Journal "Haiakakan Banak", NDRU, MOD, RA, is included in "The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations", affirmed by the SAC.

The materials must be presented in Armenian, in two copies, typed with a line spacing of 1.5 points, with a volume of up to 12 computer pages (maximum 27,600 characters with spaces). By the decision of the editorial board, the volume of the material can reach up to 20 pages. The material should be accompanied by summaries in Russian and English (about 150-250 words). The author's surname, first name, patronymic, titles, military and academic degrees, organization, e-mail address, phone number must be indicated.

Authors should provide footnotes (endnotes) to the most important sources used. References from the Internet are allowed if they are taken from the official websites.

Diagrams, schemes, charts, drawings, photographs must be clear and printable (in JPEG or TIFF format), with a density of at least 300 DPI (photographs, graphic drawings).

The material must contain a decoding of the acronyms and abbreviations used.

The author is responsible for the accuracy and secrecy of the facts presented in the article.

The opinions expressed in the articles are those of the authors and do not purport to reflect the opinions the Editorial Board.

The manuscripts are not returned to the authors.

The materials are published after mandatory scientific review. Partial or complete reprint of materials is allowed only with the written consent of the Editorial Board.

Ռ-ազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Ջ. Դ. Ասատրյան*
Պատասխանատու քարտուղար՝ *Ա. Ա. Խաչատրյան*
Լեզվական խմբագրման խմբի պետ՝ *Զ. Վ. Փիրոյան*
Տեխնիկական բաժանմունքի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*

Գիտական խմբագիր՝ *Ա. Ջ. Պեղրոսյան*
Թարգմանիչներ՝ *Ա. Ա. Մարտիրոսյան, Ն. Ս. Մկրտչյան,*
Թ. Դ. Չիլինգարյան
Սրբագրումը՝ *Ն. Հ. Բաղդասարյանի*

Տեխնիկական խմբագրումը՝ *Վ. Ռ. Խալաֆյանի*
Համակարգչային ապահովումը՝ *Մ. Ռ. Ղուկասյանի,*
Լ. Հ. Պասիկյանի, Տ. Մ. Տիրացոյանի
Ձևավորող նկարիչ՝ *Գ. Վ. Իսկանդարյան*

Լուսանկարչական ապահովումը՝ *Գ. Վ. Իսկանդարյանի և համացանցային*

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. ՌԻլնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25
Պաշտոնական վեբկայք՝ <http://haykakanbanak.am>
Պաշտոնական վեբ-հարթակ՝ <http://razmavaraget.wordpress.com>
Էլ. հասցեն՝ haykakanbanakmod@gmail.com

© ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի
«Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2024 թ.

Ստորագրվել է տպագրության 23.05.2024:
Թուղթը՝ օֆսեթային: Ձևաչափը՝ 70x100 1/16:
Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր:
Պայմանական տպագրական 10,5 մամուլ:
Տպաքանակը՝ 400: Տառառեսակները՝ «Arial», «Arial Unicode», «GHEA Grapalat»,
«Russian Baltica», «Times»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «Դաստ Պրինտ» ՍՊԸ տպարանում



ՀՀ ԶՈՒ-ի բարձրագույն և ավագ սպայական կազմի
հերթական խմբի ատեստավորում.
աջից ձախ՝ ՀՀ Պաշտպանության նախարար *Սուրեն Պապիկյան*,
ՀՀ Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ,
ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ պետ գեներալ-լեյտենանտ *Էդվարդ Ասրյան*,
ՀՀ ԶՈՒ-ի ՊԳՎ Ֆիզիկական պատրաստության և սպորտի
ծառայության պետ գնդապետ *Արման Դավթյան*



Դրվագ ՀՀ ԶՈՒ-ի բարձրագույն և ավագ սպայական կազմի
ատեստավորումից

Երևան, 2024 թ. ապրիլի 15-16



ՀԱՅՎԱՎԱՆ ԲԱՆԱԿ